



✓

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

891.99.09

Ա

ՀԱՅՈՑ

ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

— — — — —

Handwritten: *1887*  
A  $\frac{11}{10989}$

Կազմեց

ՀՐԱՉԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ


Handwritten signature

— — — — —

Վաղարշապատ

Տպարան Մայր Արարոյ Սերոյ Էջմիածնի

1906





## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Հայոց նոր գրականութեան մասին թէև մասնական աշխատութիւններ շատ կան, բայց մի ամբողջական գրուածք չկար մինչև այժմ։ Իբրև առաջին փորձ հրատարակուե՛մ եմ այս հատորը, Աշխատութիւնս կազմելիս ես օգտուել եմ ինձ ծանօթ գրեթէ բոլոր մասնական աշխատութիւններից, որոնցից տեղ տեղ վերցրել եմ բառացի հատուածներ, ինչպէս Լէօի Հայ Տղա-գրութեան պատմութիւնը, Գրիգոր Արծրունի, Ստ. Նազարեան, Ռուսահայոց գրականութիւնը ևն։ Որպէսզի ոչինչ ի լրոյ և յիշողութեան վրայ հիմնուած չլինէր, ես հարկ եմ համարել նորից կարդալ հեղինակների բոլոր գործերը, որոնց ամփոփումը գրել եմ՝ այստեղ, Շատ հեղինակներ կան որոնց գործերը անկարելի է գտնել Կովկասում, այսպէս են Տաճկահայ հեղինակներից շատերը, որոնց անունն անգամ չի մտել այս երկիրը կան և ռուսահայ հեղինակներ, որոնց գործերը գրաքննութիւնը չի թողլատրել։ Երկար ժամանակ ապրած լինելով հայութեան գրեթէ բոլոր կենտրոններում, Տաճկահայաստան, Կովկաս, Պօլիս, Պարսկաստան ու Եւրոպա, առիթ եմ ունեցել տեսնել ու ճանաչել մօտիկուց այդ գրուածները։ Ըն-

Թերցողը նրանց մասին ընդարձակ տեղեկութիւններ կը գտնի այս հատորում։ Հազուադիւար գրքերից հարկ եմ համարել տեղ տեղ ամբողջ հատուածներ վերցնել, նոյնպէս վարուել եմ նաև մի քանի այնպիսի գրքերի հետ, որոնք այժմ չեն կարդացուում գրաբար լեզուի ու դասական բովանդակութեան պատճառով, սորանցով ընթերցողը առանց ամբողջութիւնը կարգաւ ստիպուելու կարող է մի ճաշակ կազմել հեղինակի լեզուի ու երկերի մասին, (ինչպէս Նալբանդեանի երկրագործութիւնը, Թաղիադեանի և Հէքիմեանի գործերը, Նար-Պէյի Քնար Պանդըխտին, Ստուերք Հայկականը, Բագրատունու Հայկ գիւցաղն, Մամուրեանի Հայկական Նամականի, Գ. Պատկանեանի աշխատութիւնները ևն)։

Իմ աշխատութեան մէջ մտնում են բոլոր այն հեղինակները, որոնք իրենց կեանքը վերջացրել են, իսկ նորա որ կենդանի են ու գործում, չեն մտել այս գործի մէջ։

Ամէն մի գլխի վերևում յիշուած են այն զլխաւոր գործերը որոնցից օգտուել եմ նոյն գլուխը կազմելիս, որոնք որ ցանկանում են ունենալ աւելի մանրամասն տեղեկութիւններ, պէտք է գիմեն նոյն աղբիւրներին։

1906 հոկտ. 23

Նոր-Քայազիզ

# Պ Ա Տ Մ ՈՒ Թ Ի Ի Ն

## Հ Ա Յ Ո Ց

### Ն ՈՐ Գ Ր Ա Կ Ա Ն ՈՒ Թ Ե Ա Ն

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Յարոյ. — Հայոց Մամուլը Ռուսաստանի և Գովկասի մէջ.  
Թիֆլիս 1878:

Մ. Յովհաննիսեան. — Քննական Պատմ. ԺԹ դարու հայ  
գրականութեան. Յարիզ 1900.

Լէօ. — Ռուսահայոց գրականութիւնը. Վենետիկ 1904.

Հ. Գ. Գալէմբերեան. — Պատմ. հայ լրագրութեան.  
Վեննա 1893.

Հայերէնը աշխարհի ամենահին լեզուներէից մէկն է: Նա երկրորդն է այն Տ մայր լեզուներէից՝ որոնցից առաջ են եկել հնդեւրոպական կոչուած ազգերի լեզուները: Ակաժ ամենահին ժամանակներէից մինչև Ե դար նա գործ է ածուել Հայոց մէջ իբրև խօսակցական լեզու՝ ունենալով անշուշտ զանազան բարբառներ: Առաջին անգամ Ե դարի սկիզբը այդ խօսակցական լեզուի բարբառներէից մէկը անցնում է գրականութեան մեր գրականութեան հիմնադիր Ս. Մեսրոպը հնարելով հայերէն տառեր՝ դրում է առաջին հայերէն գիրքը և այդ օրից սկսում հայոց հին գրականութիւնը:

Ս. Մեսրոպից յետոյ նրա յաջորդները յունական լեզուի ու գրականութեան ազդեցութեան տակ աշ-

խատում են նոր կերպարանք տալ հայոց լեզուին. նոքա հնարում են նորանոր մասնիկներ, բառեր, ձևեր, նոր հոլովումներ և նոյն իսկ նոր խոնարհումներ: Նորագիշներէից ոմանք այնքան առաջ են դնում որ հիմնովին փոփոխում են լեզուի կերպարանքը, հնարելով մինչև իսկ հայերէնի ոգուն հակառակ տարրեր, ինչպէս՝ արահան, իգահան և չեղօք սեռի տարբերութիւնները: Թէև այս ծայրայեղ նորմուծութիւնները մի քանի հեղինակների ու գրքերի սահմաններից դուրս չեն դալիս, բայց և այնպէս յունամուտ հեղինակների նորմուծութիւններից խիստ շատերը ընդունուած են մեր գրականութեան մէջ և այդ օրից սկսում է հայոց խօսակցական ու գրական լեզուների մէջ մանեւ որոշ տարբերութիւն:

Ոմանք կարծում են թէ Ս. Մեսրոպի և առհասարակ Ն գարում գրուած լեզուն երբեք չի եղել խօսակցական լեզու, այլ թէ հենց սկզբից Ս. Մեսրոպը և նրա աշակերտները իրանցից լեզու են շինել, ձևեր են հնարել և այսպէս կազմել գրարար հայերէնը: Այս կարծիքը բացարձակապէս սխալ է և նոր գիտութեան տարրական սկզբունքներին հակառակ: Լեզուն երբեք չի շինուիլ: Եթէ այսօր տեսնում ենք հեղինակներ՝ որոնք ժողովրդի խօսած լեզուն կոկում յարգարում և գրական լեզու են շինում, այդ երևոյթը մեզ չպիտի խաբէ: Այդ հեղինակները լեզու չեն շինում, այլ նոր լեզուի ձևերը դէն գցում ու հին լեզուի համապատասխան ձևերը վերականգնում. օրինակ՝ ժողովուրդը ասում է,

էս տունը բանցր աս:

Իսկ գրակէտը հին լեզուի բառերը փոխ առնելով ասում է՝

այս տունը բարձր է:

Բայց քանի որ լեզուի շինութիւնը նշանակում է հին ձևերի վերանորոգում, հետևաբար այս շինողական երևոյթը տեղի կարող է ունենալ միմիայն այն պարագային, երբ լեզուի հնագոյն վիճակը յայտնի է: Իսկ երբ այդ հին ձևերը յայտնի չեն, ուրիշ խօսքով չկան, գրագէտը ստիպուած է լսածը գրի առնել ամենայն հաւատարմութեամբ: Մեզ օրինակ թող լինին Ափրիկէի և Ամերիկայի վայրենիների, նոյն իսկ Կովկասեան լեռնականների լեզուները, որոնք գեռ նոր ժամանակներս գրականութեան անցան կամ անցնում են բողոքական միսիոնարների ձեռքով: Ի՞նչպէս են անում այդ միսիոնարները: Նոքա մտնում են ժողովրդի մէջ, տարիներով մնում են նոցա մէջ, սովորում են նրանց լեզուն և յետոյ տառեր յարմարեցնելով թարգմանում են Աւետարանը այդ խօսակցական լեզուին: Միևնոյնը պիտի անէր և Ս. Մեսրոպը: Նա իր աչքի առաջ ունէր միայն խօսակցական լեզուն և չէր կարող իմանալ նախնի դարերի հայերէնի վիճակը, ուստի ստիպուած էր նոյն այդ խօսակցական լեզուն գրի առնել:

Հակառակորդները իբր ապացոյց մէջ են բերում այսպիսի մի կէտ. եթէ, ասում են, գրաբարը և դարի խօսակցական լեզուն էր, ուրեմն պէտք էր որ նոյն դարի բոլոր հեղինակների լեզուն էլ միատեսակ լինէր. բայց ընդհակառակը մենք մեծ զանազանութիւն ենք տեսնում Աւետարանի, Եզնիկի, Ազաթանդեղոսի և միւս հեղինակների լեզուի մէջ:

Թէ և դարի հեղինակների լեզուի մէջ մեծ զանազանութիւններ կան, այդ ընդունում է ամէն ոք, բայց այստեղ լեզու ասելով չպէտք է շփոթել բառարանն ու քերականութիւնը ոճի հետ. և դարի բոլոր հեղինակներն էլ միևնոյն բառարանն ունին ու միևնոյն

քերականութիւնը. ամենամաննչան տարբերութիւն անգամ չկայ այս կողմից նրանց մէջ: Իսկ ինչ վերաբերում է ոճին, դա բոլորովին այլ հարց է. լեզուն հասարակաց է, ոճը հեղինակինն է. ամէն մի հեղինակ նայած իր կրթութեան, ճաշակին, զգացմունքների նրբութեան, նայած նոյն իսկ բողէի արամազբութեան, ունենում է առանձին սեպհական ոճ. բայց այդ չի նշանակում թէ նա գուրս է լեզուից. ո՛չ, նա հասարակութեան ստրուկն է ու մի քայլ անգամ չի կարող չեղուել ընդունուած լեզուի ձևերից:

Այսպէս ուրեմն պիտի ընդունել որ և դարում առաջին անգամ գրի առնուած լեզուն: որ յետոյ դրաբար անունն ստացաւ, նոյն ժամանակի ժողովրդական խօսակցական լեզուն էր գոնէ որոշ գաւառում, և ժողովրդական ու գրական լեզուների տարբերութիւնը, որ այժմ սոյսրական երևոյթ է ամէն տեղ, գոյութիւն չունէր այն ժամանակ մեր մէջ նոյն գաւառում: Խօսակցական ու գրական լեզուի տարբերութիւնը առաջին օրից կարող էր որոշ չափով տեղի ունենալ միւս գաւառներում, բայց նա սկսաւ ուղղակի այն օրից, երբ հայ հեղինակները յունարէնի ազդեցութեամբ նորութիւններ մտցրին մեր լեզուի մէջ:

Յունարէնի ազդեցութիւնը մուտք գործեց և դարի կէսից յետոյ: աւելի 2 և 3: դարերում. իսկ 3: դարի կէսից յետոյ արաբական տիրապետութեան տակ սկսաւ երևիլ արաբ լեզուի ու քաղաքակրթութեան ազդեցութիւնը. բայց այս ազդեցութիւնը ոչ այնքան բառարանի ու քերականութեան վրայ ներգործեց, որչափ գրադէանների ոճի վրայ, այն օրից սկսում է արաբական ճոռոմ, երկարաբան, ուռուցիկ ձևը, որ տիրապետում է մեր գրականութեան մէջ մանաւանդ Թ և Ժ դարերում:

Այստեղ պէտք է ի նկատի ունենալ մի խոշոր հանդամանք. և դարի հայոց լեզուն որ Ս. Մեսրոպի ձեռքով արձանագրուել էր զբրերի մէջ, իբր զբազան հաստատուն լեզու անփոփոխ մնում էր զբրերում և հեղինակների լեզուում, ենթարկուելով միայն սծային փոփոխութիւնների և մերժելով ամէն օտար նիւթահան ազդեցութիւն. ընդհակառակը ժողովրդական լեզուն, որ սկզբում նոյն էր գրականին հետ, մի կողմից բնական ածուժով և միւս կողմից օտար ազդեցութիւնների տակ դարերի ընթացքում հետզհետէ փոխուում էր ազատօրէն, այնպէս որ գրական անփոփոխ լեզուի ու ժողովրդական յարաշարժ լեզուի մէջ տարբերութիւնը օրից օր մեծանում էր:

Փն դարում սկսում է թուրք վայրենիների արշաւանքը դէպի հայկական բարձրաւանդակը. արիւնսարքու հրոսակները քարուքանդ են անում մեր երկիրը, այրում զբրերը, զպրոցները, վանքերը, եկեղեցիները և մօխրի ու աւերակների կոյտերի տակ թաղում քաղաքակրթութեան սերմերը: Բուն Հայաստանի քաղաքական կեանքը խոսրառ մեռնում է և թէև Թուրքիանոց ակրութիւնը մի երկու դար էլ շարունակուում է Ալիիկիայում, բայց այն էլ շուտով հանգելով, ամբողջ հայ ժողովուրդը ընկնում է թրքական ցեղերի լծի տակ, որ և շարունակուում է մինչև այսօր հայութեան մեծագոյն մասի վրայ:

Յրբական ցեղերի դարաւոր տիրապետութիւնը բովանդակ հայ ժողովրդի վրայ՝ խորապէս ազդում է և հայոց լեզուի վրայ և նրա կազմը հիմնովին յեղաշրջում: Թուրք-թաթարական լեզուները՝ ինչպէս բոլոր եւրոպական լեզուներին, նոյնպէս և հայերէնին բոլորովին հակառակ ողի, սճ ու շարադասութիւն ունին, այսպէս մինչդեռ հայն ու առհասարակ բոլոր

Եւրոպական լեզուներն ասում են

ես տեսի զթռչունն որ երգէր ի վերայ ծառոյն

я видел птицу которая пѣла на деревѣ

j'ai vu l'oiseau qui chantait sur l'arbre

կամ թէ

Թերթք գրոց Լևոնի որդւոց գրացւոյ իմոյ

листы книги Левона сына моего соседа

les feuilles des livres de Léon fils de mon voisin

Թուրք-թաթարական լեզուները սկսելով վերջին բառից, նախորդներին ճիշտ հակառակ շարքով ասում են ազաջին ուսթինդա օթան կուշի կօրդում:

Կօնչիմին օղլի Լէվօնըն քիթարինենն եսփրաղլարեւայս մեղ համար բոլորովին նոր ձևը ազդում է հայերէնի վրայ և այնուհետև հայն էլ թուրքի նման ասում է

Ծառի վրայ երգող թռչունը տեսայ:

հարևանիս որդու Լևոնի գրքերի թերթերը:

Այժմ արդէն խօսակցական հայերէնի ու գրական հայերէնի տարբերութիւնը անհուն է. նորա տարբերում են միմեանցից ո՛չ միայն բառերով, հոլովներով, խոնարհումով ու ոճերով, այլ և համաձայնութեամբ ու շարադասութեամբ. խօսակցական լեզուն ազաւաղել, փոփոխել է շատ բառեր, ստեղծել է նորերը, օտարներից վերցրել է առատ բառամթերք և այդ բոլորը չկայ գրական լեզուում. հոլովներն ու խոնարհումը պարզուեց, փոխուեց, նոր կանոններ աւելացան, բացառութիւնները ջնջուեցին, մինչդեռ գրական լեզուն տեղեակ չէ այս բոլորին. վերջապէս շարադասութիւնը հակառակ շարքն ունի այժմ, բայց գրական լեզուն մնում է այնպէս ինչպէս առաջ էր: Երկու լեզուների գոյութիւնը այսուհետև փաստ է և հարկաւոր է որոշել նրանց միմիանցից. գրական լեզուն

ստանում է գըսաբար անունը, իսկ ժողովրդական լեզուին աշխարհաբար:

Մենք վերևում տեսանք թէ հենց Ս. Մեսրոպի յաջորդներն օրով գրական ու խօսակցական լեզուի մէջ տարբերութիւն մտել էր արդէն. բայց այդ տարբերութիւնը այնքան մեծ չլինելով՝ ռամիկը գրագէտին հասկանում էր և գրագէտը հարկ չէր տեսնում ռամիկ լեզուին դիմելու: Գարերն ընթացքում տարբերութիւնը հետդճետէ սաստկանալով, նրա հետ էլ գրական լեզուին հասկանալը ատիճանաբար գժուարացաւ. իսկ երբ այդ տարբերութիւնը վերջապէս այնքան մեծացաւ, որ այլ ևս անկարելի էր իրար հասկանալ, նոքա որոնք պէտք ունէին ռամիկին խօսելու, սակայունեցան նրա լեզուին դիմելու. և այսպէս սկսաւ աշխարհաբարը դառնալ գրական լեզու:

Յայտնի չէ թէ առաջին անգամ ի՞նչ գրուեց աշխարհաբար. իսկապէս կարելի էլ չէ հին դարերի համար որոշել այդ բանը, որովհետև երկու լեզուները այնպէս նման են միեանց, որ գրեթէ խտրութիւն չկայ. դանազան հեղինակների մօտ պատահած ինչ ինչ հասարակ բացատրութիւնները ոմանք համարում են աշխարհաբար՝ իրաւացի կամ անիրաւ կերպով: Պատմութեան մէջ յայտնի առաջին աշխարհաբար գրուածքը Շապուհ Բագրատունու Պատմութիւնն է Թ դարից, որը գժբախտաբար կորած լինելով, չենք կարող դադարիար կազմել նրա մասին. բայց ինչ էլ որ լինի, այն ժամանակի աշխարհաբար այնքան տարբեր է այսօրուայ աշխարհաբարից և դեռ այնքան մօտ է գրաբարին, որ մենք կարդալիս գրաբար պիտի համարէինք: Աշխարհաբար գրուածքները շատանում են և աշխարհաբարը պաշտօնական ընաւորութիւն է ստանում առաջին անգամ Ռուբինեանց տէրութեան

օրով. դեռ մինչև այսօր մ'նում են մեր թագաւորական դիւանատանից հրատարակուած գանազան հրովարտակներ, պատճէններ, առևտրական գաշնագրեր, մուրհակներ ևն աշխարհաբար լեզուով, Մխիթար Էջրացին թի գարում գրում է իր «Ձերմանց Մխիթար րութիւն» անունով բժշկական հատորը աշխարհաբար լեզուով, նոյնպէս և բազմաթիւ ուրիշ բժշկական գրուածքներ, աշուղական տաղեր ևն: Սովորութիւն է եղել այս շրջանի հայերէնը կոչել Միջնադարեան կամ Կիլիկեան հայերէն:

Գրաբարն ու աշխարհաբարը այսպէս միմեանցից բաժանուելուց յետոյ, իրաքանչիւրն սկսում է անկախ կեանք վարել: ԹԳ գարում մի խումբ լատին վարդապետներ (ունթոսներ) Հայաստան գալով՝ ուզում են կաթողիկոսութիւն տարածել հայոց մէջ. բազմաթիւ նորմուծութեանց հետ նորա ձևը են երկարում նաև գրաբար հայ լեզուին և տալիս են նրան մի սոսկալի հարուած: Սարկօրէն հետեւելով լատին լեզուին և հայերէնը նրա վրայ կաղապարելով՝ նորա հայերէնի մէջ մայնում են բազմաթիւ լատին բառեր, լատինական քերականութիւն, նոր խոնարհումներ, նոր մասնիկներ, նոր հոյովումներ և նորելուկ համաձայնութիւն: Լատինաբանութիւնը սկզբում թէև միայն ունթոսների շրջանին յատուկ է լինում, բայց շուտով տարածւում է նաև հաւատարիմ հայերի շրջանում և վերջապէս ընդհանուր հայ գրական աշխարհի մէջ թագաւորում է:

ԹԵ գարում սկսում են թուրք-պարսկական պատերազմները, որ տևում են մինչև թի գարի կէսը (1639): Օսմանեան ու պարսկական բանակների անվերջանալի արշաւանքներին արդարեւ է գառնում գլխաւորապէս Հայաստանը. չի մ'նում շէն տեղ որ

չաւերուի, չի մ'նուամ մի որ և է կրթական-կրօնական հիմնարկութիւն՝ որ մտխիւր չդառնայ. աւերածն ու հրկիզութիւնները մի կողմից, սովն ու ժանտախաղ միւս կողմից անապատ են դարձնում մեր երկիրը. ով կարողանում է հրից ու օրից, սովից ու մահից ազատուել՝ վախչում է օտար երկիրներ, մի մասը փոքր-Սօսիա, մի մասը Վեհաստան, Ռումանիա և Նւրոպայի զանազան կողմերը. վերջապէս հասնում է Շահաբասի աւերիչ ձեռքը՝ որ 100,000-աւոր մարդիկ գերի է տանում Պարսկաստանի խորքերը: Այսպիսի մի ահաւոր շրջանում կարելի չէր սպասել գրահանութիւն. և իրօք այս դարերում մենք տեսնում ենք բնդհանուր մեռելութիւնը թաղաւորած Հայ երկրի վրայ, գրահանութիւնը բոլորովին կանգնած, ժողովուրդը, վանքերը, կրօնաւորները, քարոզիչները բոլորովին տգէտ, մտաւոր յետին խեղճութեան: Քաղաքակրթութեան ծայրայեղ անկման մէջ, դրէթէ թրքացած ու քրդացած՝ լեզուով, սովորութիւններով, մասձողութեամբ և ներքին ու արտաքին կեանքով:

Բայց արշաւանքների, աւերածների ու ժանտախանների ահաւորութիւնը մի նոր ըարիք է ծնում մեր ազգի համար. հայերը ցրուելով Մայր երկրից հեռու անդեր, և իրենց աչքը դարձնելով դէպի քրիստոնեայ ազգերը՝ օրից օր աւելի են մօտենում արեւմուտքին. մի խոշոր հայ դաղթականութիւն Հայաստանից Փոքր-Սօսիա անցնելով՝ զանազան քաղաքներ թափառելուց յետոյ հաստատուում է Պոլսում, ուր համետարար կեանքի աւելի ապահովութիւն կար, քան թէ բուն Մայր երկրում, և ուր եւրոպական կեանքը աւելի շուտ պիտի մուտք գործէր հայութեան մէջ: Մի ուրիշ խումբ հայեր անցնում են նոյն իսկ ուղղակի Նւրոպայ և վաճառականութեան ու առևտրի

համար հաստատուում Եւրոպայի նոյն ժամանակի ամենակրթեալ երկրներում, ինչպէս Իտիլիա և Հոլանդիա: Եւրոպական կեանքի, եւրոպական քաղաքակրթութեան ամենօրեայ շփումն ահագին ազդեցութիւն է դործում և հայ կեանքի վրայ, այնտեղ առաջին անգամ հայերը վերցնում են պպագրութեան արուեստը (1512 թ.) և թէև սկզբում խիստ տանդաղ, բայց վերջերը բաւական ընդարձակ ծաւալով տարածում հայոց մէջ: Կրթութեան, դաստիարակութեան, լուսաւորութեան պէտքը օրից օր աւելի է զգացւում. եւրոպական եռուն կեանքի շնչով տաքանում են հայոց սառած սրտերը և փոխանակ միջնագարեան կրօնական մեռելութեան՝ ազգային ինքնաճանաչութեան, ազգային դաստիարակութեան և վերջապէս ազգային ինքնուրոյնութեան սերմերը ծլում են հայոց մէջ:

Ժկ գարը հայոց վերածնութեան խմորման շրջանն է. ընդհանուր մեռելութեան մէջ առաջին անգամ գլուխ է բարձրացնում Բաղէշի Ամիրզու վանքը և իր շուրջը լոյսի ցուրեր արձակում. նրանից յետոյ սկսում է Տաթևի վանքը, որի միաբանութիւնը ձեռք է առնում հայ ուսումնական կեանքի վերանորոգութեան գործը. այդ վանքից են դուրս գալիս Մովսէս կաթողիկոս, Առաքել պատմագիր ևն: Մովսէսը գահ բարձրանալու օրից (1629) աւելի մեծ զարկ է տալիս նոյն վանքի միաբանութեան ուսումնասիրական ջանքերին և Տաթևի վանքի օրինակով մի դպրոց էլ հաստատում է Յովհաննավանքում, որը իր յաջորդ Փիլիպպոս կաթողիկոսը փոխադրում է Էջմիածին և այդ օրից սկսում է Էջմիածնի ժառանգաւորաց դպրոցը: Էջմիածնի հետ միաժամանակ քացւում է հեռու Պարսկաստանում, Նոր-Ջուղայում Ամենափրկչեան վանքի դպրոցը, շնորհիւ նշանաւոր Կեսարացի Խաչատուր

վարդապետի, որ նոյն վանքում բաց է անում նաև հայկական տպարան:

Վերածնութեան շարժումներէ մէջ պէտք չէ մոռանալ և երկու մեծ դէպքեր, որոնք թէև դարձում են արևմուտքում, բայց գործում են հայի համար և հայի կրթական կեանքին նոր ուժ տալիս. դոքա են Ռսկան վրդ. Երևանցի († 1674) և Երեմիա չէլէպի Քէօմիւրճեան († 1695): Ռսկանը՝ հայ տպագրութեան եռանդուն այդ գործիչը, ման է դալիս քաղաքից քաղաք, երկրից երկիր, Ն. Զուղա, Էջմիածին, Ամբաստէրգամ, Վենետիկ, Մարսէլ, տպարաններ հաստատում այդ քաղաքներում: զարգացնում հայ տպագրութեան արուեստը, տասնեակներով գրքեր հաղարարու որ օրինակներով տարածում հայոց մէջ և վերջապէս իր սիրած գործի համար նահատակուում: Երեմիա չէլէպի այն հմուտ աշխարհական հեղինակն է, որ Պօլսում սկսում է հայկական առաջին գրական շարժումները, բաց անում տպարան, գրում ըստմաթիւ հեղինակութիւններ և իբր նախահարապետ հանդիսանում Պօլսահայ ըստմարդին գրականութեան:

Ժ՛՛ դարի սկզբում երկու հոյակապ անձնաւորութիւններ ձեռք են առնում հայ կեանքի վերածնութեան գործը. առաջինը Իսրայէլ Օրի արևելքում Ղարաբաղի սարերում տեղացի քաջ ժողովրդի հետ երկնում է Հայաստանի ազատութեան գաղափարը. Ղարաբաղը ապստամբում է և Դաւիթ բէգը կանգնում է հայկական անկախ իշխանութիւն: Երկրորդը Մխիթար արքա՝ Սեբաստիայից Պօլիս, այստեղից եւ ըստ անցնելով՝ Վենետիկի փոքրիկ կղզեակի մէջ վերածնում է հայ գրականութիւնը: Բաղէշի, Տաթևի, Էջմիածնի և նոր-Զուղայի դպրոցները տևական չէին եղել. նոքա շատ կարճ կեանք էին ունեցել և մի փոքր ժամանակ


փայլելուց յետոյ՝ հանդել էին: Մխիթարը այնպիսի հիմքերի վրայ է դնում զործը, որ նա օրից օր դարգանում է և իբրև մի լուսաւոր աստղ փայլում է հայկահուն խաւար հորիզոնի վրայ: Աննեակեցիք նախ մաքրում են հայերէն լեզուն իր յեանադարեան կեդտերից, և իր անկումից բարձրացնելով վերականգնում են նրա հարազատ վեճակը: Սերսպական ընտիր գրական երկերով ու բաղմաթիւ գիտական ու հայագիտական աշխատութիւններով նորա ճոխացնում են հայ ազգատիկ գրականութիւնը: Հայ գրական վերածնութիւնը արդէն կասարուած փաստ է և այստեղից սկսում է հայոց նոր գրականութիւնը:

Այն ժամանակ երբ Մխիթարն ու Մխիթաբեանները սկսան իրենց գրական զործունէութիւնը, հայերը, ինչպէս գիտենք, ունէին երկու լեզու. առաջին գրաբարը որ վաղուց մեռած, բայց յետին լատինացած ձևով կենդանի էր գրքերում. և երկրորդ աշխարհաբարը՝ որ բաղմաթիւ ու բաղմազան բարբառներով խօսուում էր հայ ժողովրդի բերանում: Յանկալի էր որ Մխիթաբեանները հենց առաջին անգամից ձեռք երկարէին գէպի կենդանի խօսակցական լեզուն և մաքրելով ու յղկելով պատրաստէին մեր գրական լեզուն. բայց ոչ Մխիթարը և ոչ նրա յաջորդները, որոնք հակառակ իրենց յառաջդիմական ցանկութիւններին, տողօրուած էին խոր միջնադարեան սգիով, երբեք չուզեցին կասարել այդ միանգամայն դժուարին զործը: Նորա առաջնորդ վերցրին հին հայ դասական հեղինակներին, աւելի յետոյ նաև յոյն ու լատին գրականութեան դասական հեղինակներին, և աշխատեցին ամէն բանով հետևել նրանց: Այստեղից սկսում է մեր նոր գրականութեան առաջին շրջանը, որ կոչուում է կեղծ դասական ԵՐՉԱՆ (գրաբար գրա-

կանութիւն) և անում է գրեթէ 150 տարի, թ՛ւ դարի սկզբից մինչև թ՛ւ դարի կէսը:

Վենետիկի գաղտնի օրինակը ազդում է ընդհանուր հայոց վրայ. նրանց օրինակին հետևելով կրթութիւն տարածելու և միւս կողմից նոցա կաթողիկոսական ջանքերի դէմ կռուելու համար սկսում են բացուել առաջին հայ գաղտնիները: Մինչև այն ժամանակ ոչ մի տեղ ոչ արևելքում և ոչ էլ արևմուտքում չկար հսկահան մտքով հայ գաղտնի. մի որ և է Խրատու կամ խալիֆա որ գրել է կարգալու մասին քիչ ու միչ տեղեկութիւն ունէր, վարձում էր բազարում կամ խաներում ինչ որ կեղտոտ խանութ, ու մի քանի աշակերտներ հուարելով սոյոթեցնում էր հասարակ ընթերցանութիւն Սաղմոսի, հարեկի ու Գործք Առաքելոցի վրայ: Առաջին անգամ 1790 թին Պօլսում Շնորհք Մկրտիչ ամերան իր ծախքով բաց է անում քաղաքի դանադան թաղերում հայ ազգային վարժարաններ. քսան տարի յետոյ 1810-ին Ասարախանում բացում է Ռուսահայոց առաջին գաղտնի՝ Ազարաբեան վարժարանը. սրանց հետևում են Մոսկուայի Լազարեան ճեմարանը 1816-ին, Կալիպթայի Մարզասիրական ճեմարանը 1821-ին, Քիֆլիսի Ներսիսեան գաղտնոցը 1824-ին, Պօլսոյ Իւսկիտարի ճեմարանը 1838-ին ևն: Այսպէսով դրական ու կրթական գործը՝ որ թ՛ւ դարի ընթացքում գրեթէ միայն Վենետիկոց մենաշնորհն էր դարձել, արդէն նոյն դարի վերջից տարածւում է և հայութեան միւս գաղթավայրերի մէջ և այս տեղերից էլ սկսում են դուրս գալ յայտնի հեղինակներ: Այդ հեղինակներն մէջ նշանաւոր են Գէորգ Դպիր (1737—1812), Յովհան Միրզա Վանանդեցի (1772—1840), Յարութիւն վրդ. Ալամզարեան (1796—1834), Մեսրոպ Թաղիադեանց (1803—1858)

A 10989



և Սրապիոն Ղէրիմեան (1832—1892), որոնք բոլորը պատկանում են կեղծ դասական շրջանին և որոնց վրայ պիտի խօսինք առանձին գլուխներով:

Կեղծ դասական շրջանի մէջ հայոց կրթական կենտրոններն եղան Եւրոպայում Վենետիկ և Վիեննա, Տաճկաստանում Պօլիս և Չմիւռնիա, Հնդկաստանում Մադրաս և Կալկաթա: Իսկ Ռուսաստանում Մոսկուա և Քիեֆիոս: Հայաստանը մասնակցութիւն չունեցաւ գրական շարժման, և, ինչպէս այսօր, այն ժամանակ էլ գրականութիւնը կենտրոնացած էր գաղթավայրերում: Սոցա մէջ հնդկահայ գաղթականութիւնը՝ չնայած իր փոքրութեան, այնպէս յառաջադիմեց ազգային շարժման մէջ, որ մինչև իսկ ծնունդ տուաւ հայ լրագրութեան: Շիրազեցի մի քահանայ՝ Տէր Յարութիւն Շմառոնեան, անգլիացոց օրինակով Մադրաս քաղաքում հրատարակեց առաջին հայ լրագիրը «Ազգարար», 1794 թ. հոկտ. 16-ին, գրաբար լեզուով:

Կեղծ դասական շրջանի մէջ գրական լեզուն, ինչպէս ասացինք, գրաբարն էր, վերականգնացրած արուեստական լեզուն, որ Վենետիկից սկսած մինչև Հնդկաստան մի և ընդհանուր էր բոլոր հայ գրական անձերի համար:

ԺՅ գարի սկիզբներում արեւմտեան գաղթականութեան մէջ, Պօլիս, Չմիւռնիա և Վենետիկ, ռամիկների պահանջներին բաւարարութիւն տալու համար միայն սկսուեւ է առաջին անգամ գրուել հասարակ ժողովրդի բարբառը: Ժողովրդական բարբառը մենք դիտենք որ գրի էր առնուել սկսած միջին դարերից, երբ ստացել էր Միջնադարեան կամ Կիլիկեան հայերէն անունը: Կիլիկեան հայերէնը իւր հերթին փոփոխութիւնների ենթարկուելով հետզհետէ՝ առաջ էր բերել մի խումբ բարբառներ, որոնք մինչև այսօր էլ խօս-

ւում են Կիլիկիայում և Փոքր-Ասիայում: Այդ բարբառների գլխաւորն էր Պօլսի աամիկ բարբառը և ահա այս բարբառն էր, որ իր քաղաքական նպատակւոր դերքն շնորհիւ բարձրացաւ գրականութեան իբր նոր աշխարհիկ լեզու:

Բայց այս նոր լեզուն, որ Կիլիկեան հայերէնի ճիւղերից մէկն էր և պիտի համարուի իբր նրա շարունակութիւնը, տարբերում է նրանից շատ կետէրով, և մինչդեռ առաջինը ներկայացնում էր բաւականին մաքուր և, կարող ենք ասել, մի մեծ շրջանի համար հատարակաց լեզու, վերջինը միայն Պօլսի աամիկների մէջ գործածական գուեհիկ լեզուն էր, ազաւաղուած ձևերով ու բազմաթիւ թուրքերէն բաւերով լի, ազդի մեծամասնութեան համար գրեթէ անհասկանալի: Այդ աամիկ լեզուով գրւում են առաջին անգամ հայերէն լրագիրները: Եւ որովհետեւ լրագրութիւնը այսպէսով հանդիսանում է իբրև աշխարհաբարի տարածող, հարկ է մի քիչ աւելի ընդարձակ կերպով խօսել լրագրութեան վրայ:

Հայ լրագրութիւնը, ինչպէս տեսանք ծնուեց շնդհաստանում Տէր Յարութիւն քահանայ նմաւանեանի միջոցով: Այս քահանան ընդ Պարսկաստանցի էր, ծնուած 1750 թ. Նիրազ քաղաքում. քահանայ ձեռնագրուելուց յետոյ մի շաբաթուայ մէջ կորցրեց իր երկու սիրելի որդիներին, նոցա մահը սաստիկ ազդեց տարաբախտ հօր վրայ և նա իր որդիերանց գերեզմանին մօտ լինելու համար, առանձնացաւ քաղաքից 2 ժամ հեռու Բաբարուհ սալի դէրվիշների վանքը, այդ դէրվիշների կարգը մանելով նա ճգնեց 7 տարի և լացաւ իր որդիերանց վրայ, որ թաղուած էին լերան ստորոտի գերեզմանատնում. իր ընտանիքի ազաւանքով 7 տարի յետոյ հազիւ զիջաւ թող-

նեւ վանքը և նորից քաղար վերադառնալ, որտեղից էլ քահանայական պաշտօնով անցաւ Մադրաս 1784 թուին: Այստեղ 1789 թուին բաց արաւ հայկական տպարան, որի տառերը ինքն էր փորագրել ու ձուլել, ինչպէս որ գրաշարն ու տպողն էլ ինքն էր: Շմաւոնեանը հրատարակեց մի խումբ տետրակներ, պատմութիւններ, կրօնական բովանդակութեամբ գրքեր և վերջապէս տպարանին մի մշտական գործ տուած լինելու և միւս կողմից աղղին օգտակար ընթերցանութեան նիւթ մատակարարելու համար որոշեց հրատարակել Ազգարար թերթը, որի առաջին համարը դուրս եկաւ 1794 թ. հոկտ. 16: Նա իր համար իբր օրինակ էր վերցրել անգլիերէն մի թերթ՝ որ սկսել էր հրատարակուել Մադրասում մի ամիս առաջ: Ազգարարը սկզբում ունէր միայն 28 բաժանորդ և նրա բովանդակութիւնն էր նշանաւոր մարդկանց կեանքը, պատմութիւններ, առակներ, տակարան, հայ և անգլիական օրացոյց, գրական հատուածներ ևն: Նրա լեզուն գրաբար էր:

Հայոց առաջին թերթը 3 տարի միայն ապրեց և 1796 թուին վերջացաւ. այս թուից քիչ յետոյ երևում է վախճանուեց նաև նրա հիմնադիրը:

Չնդհատմանից յետոյ լրագրութիւնը անցաւ Վեներաբիլ. 1800 թուին Հ. Ղուկաս Յնճիճեանը սկսաւ հրատարակել Տարեգրութիւն անուն թերթը, որ տարին մի անգամ էր լոյս տեսնում և նոյն տարում պատահած դէպքերի ամփոփումն էր: Տարեգրութիւնը շարունակուեց մինչև 1802. այս թուին դադարեցնելով թերթի հրատարակութիւնը Հ. Ղուկաս Յնճիճեանը յաջորդ 1803 թուից սկսաւ հրատարակել Նդանակ Բիւզանդեանը, որ նոյնպէս տարեկան մէկ անգամ էր դուրս գալիս և որի հրատարակութիւնը տեւեց մինչև

1820: 1812 թուին զարձեալ Վենետիկում Պօլսոյ Արշարունեաց ընկերութեան նպատակով հրատարակուիլ սկսաւ Գիտակ Բիւզանդեան երկշարաթաթերթը, որի խմբագիրն էին Հ. Գրիգոր վրդ. Գապարաճեան և ուրիշները. այս թերթն էլ տեսց մինչև 1816: Այնուհետև մի քանի տարի հայերը զուրկ են լրագրութիւնից: 1831 թուին Պօլիս էր եկել Ալէքսանդր Բլաի անուանով Ֆրանսիացին և սկսել էր հրատարակել Moniteur ottoman անուանով Ֆրանսերէն լրագիրը, իբրև Բ. Գրան առաջին պաշտօնական թերթը. յաջորդ տարին սկսոււմ է նոյն նպատակով Թաֆլիսի վախյի թուրքերէն թերթը. խմբագրութիւնը միաժամանակ որոշոււմ է և հրատարակել նոյն թերթի հայերէն թարգմանութիւնը, անունը դնելով Թաֆլիսի վազայի, լրոյ գիր, որ յետոյ զարձաւ լրոյ գիր մեծի տէրութեանն Օսմանեան: Այս թերթը երևում էր շարաթական մի անգամ և պարունակում էր միայն տեղական լուրերը: Նա ապրեց միայն մի տարի (1832—3) և թէև բովանդակութեան կողմից շատ ոչինչ թերթ էր, բայց և այնպէս վայելում է առաջին Պօլսահայ թերթը լինելու պատիւը:

Այս թերթերի լեզուն: ինչպէս ասացինք, պօլսահայ աամիկ լեզուն էր, ոչ միայն աղաւաղեալ բառերով ու ձևով և թուրքերէն բառերով խառն: այլ մինչև իսկ բազմաթիւ ուղղագրական սխալներով լի: Առաջին անգամ լեզուի մաքրութեան վրայ ուշադրութիւն է դարձնում Զմիւռանիոյ անգրանիկ հայ թերթը յտեմաբանը, որ ամերիկեան բողոքական միսիոնարների հրատարակութիւնն էր: Այդ միսիոնարները առաջին անգամ մուտք էին գործել Զմիւռանիոյ հայոց մէջ և հետևելով իրենց սկզբունքին՝ ձեռք էին առել ժողովրդական լեզուն: իրենց սեպհական ապա-

բանում նոքա 1839 թ. յունվար 1-ին հրատարակել սկսան Շտեմարան անունով հայերէն գիտական — կրօնական թերթը, որի նպատակն էր տարածել հայոց մէջ բողոքական կրօնը: Շտեմարանի խմբագիրը յայտնի չէ, այս միայն գիտենք որ Վաղարշակ Սարգիս Յովհաննէսեանը 4 տարի շարունակ Շտեմարանի գլխաւոր թարգմանիչն է եղել և անգլիական ու ամերիկեան թերթերից թարգմանութիւններով լցրել է Շտեմարանը: Թէ ինչքան տարածուեց Զմիւռնիոյ թերթը և ինչ ազդեցութիւն ունեցաւ նա հայ հասարակութեան վրայ, այդ մենք չգիտենք. բայց այս ասեմք որ Շտեմարանն եղաւ հայոց առաջին պատկերազարդ, ժողովրդական ու գիտական թերթը և հայ թերթերից ամենից երկարակեացը, որովհետեւ նա մինչև այսօր էլ շարունակոււմ է Պօլսում Աւետարեւր անունով. վերջին անունը ստացաւ 1855 թուին, երբ նա Զմիւռնիայից Պօլիս փոխադրուեց:

Այսպէս ուրեմն բողոքական միտիոնարները դուրս են գալիս մեր մէջ իբրև աշխարհաբար լեզուի կանոնաւորութեան ու կոկուելուն առաջին պատճառ. և նոցանից յետոյ սկսում են օրից օր շատանալ հայ թերթերը թէ Պօլսում և թէ Զմիւռնիայում, աշխատելով հետզհետէ մարբել ու պատրաստել աշխարհիկ նոր գրական լեզուն: Այս թերթերն են Շտեմարանից անմիջապէս յետոյ Ազգաբար Բիւզանդեան, Յայտաբար գիր լրոյ՝ Պօլսում և Արշալոյս Արարատեան՝ Զմիւռնիայում, երեքն էլ 1840 թուից: Արշալոյս Արարատեանը որ տեւեց 1840 թուից սկսած մինչև 1886 թ. գրեթէ անընդհատաբար, հայ թերթերից առաջինն է, որ միացնում էր իր մէջ՝ պահանջուած բոլոր արժանաւորութիւնները. նրա հիմնագիր-խմբագիրը Ղուկաս Պալղազարեան և նրա յաջորդները Սաւալանեան ու

Յարութիւն Ավանեան՝ ուղղամիտ, համարձակ և ե-  
ռանդուն հրապարակախօսներ էին և ամէն ջանք գործ  
դրին իրենց թերթը տեղացի եւրոպական թերթերին  
հաւասար աստիճանի վրայ դնելու: Արշալոյսը գրեթէ  
միշտ ազգային շարժման վարիչն էր. նա առատ  
թղթակցութիւններ ունէր ամէն մի հայ գաղութից,  
սկսած Զինաստանից մինչև Աւստրիա. և այս բոլոր  
երկրների մէջ ցրուած հայոց համար նա իբր մի կապ  
էր: Զմիւռնիացիք մինչև այսօր էլ իրաւունք ունին  
պարծենալու իրենց այս ընտիր թերթով:

1843 թուին շ. Գ. Այվազովսքի Ալենեաիկում  
սկսաւ հրատարակել Քաղմալէպ ամսագիրը, որ մինչև  
այսօր էլ կենդանի է և աշխարհաբարի զարգացման  
ու գրաբարի միջոցով կոկուելուն բաւական նպաս-  
տել է:

1846 թուին Պօլսի հայոց պատրիարքարանը որո-  
շեց ունենալ սեպհական պաշտօնական թերթ և սկսաւ  
հրատարակել Սուրհանդակ Կոստանդնուպոլսոյ շաբա-  
թաթերթը. խմբագրութիւնը յանձնուեց Տէրոյենց  
պատուելիին և Մկրտիչ Աղաթօնին, որոնք նոյն ժա-  
մանակի ամէնից նշանաւոր և ամէնից ուսեալ անձերն  
էին: Թերթը մեծ յաջողութիւն ունեցաւ շնորհիւ իր  
հարուստ ըզլանդակութեան և կանանաւոր ուղղու-  
թեան. նա պարունակում էր ազգային լուրեր, պատ-  
րիարքարանի կարգադրութիւնները, հայկական թըղ-  
թակցութիւններ ևն: Ակզնաւորութիւնից 6 ամիս  
յետոյ թերթը իր անունը փոխելով կոչուեց Հայաս-  
տան: 1849 թուին Տէրոյենցը հրաժարուեց խմբագրու-  
թիւնից և խմբագրութիւնը անցաւ նոյն ժամանակի  
Ազգային Գերագոյն ժողովին: Հայաստանը տեւեց մինչև  
1852 և գաղբեցաւ. բայց միևնոյն թուին իր խմբա-  
գիրներէից մէկը՝ Կարապետ Իւթիւնեան՝ արտօնութիւն

ստանալով սկսու հրատարակել *Մասիս* թերթը՝ իբրև  
չարունակու թիւն Հայաստանի: *Մասիս*ի տեղը բռնեց  
յետոյ Արևելքը, որին յաջորդեց Բիւզանդիոնը: Սուր-  
հանդակ—Հայաստան—Մասիս—Արևելք—Բիւզանդիոն  
չարքը իբրև մի անընդհատ յաջորդութիւն, միևնոյն  
ուղղութեամբ և ոճով շարունակեցին հայերէն լեզուի  
մշակման գործը այդ շարքը, մանաւանդ *Մասիս*ը,  
հայ մտքի մեծագոյն աշխատանոցն էր. այնտեղ  
ստեղծուեցան, առաջարկուեցան քննադատուեցան,  
կազմուեցան և քաղաքացիութեան իբրուունք ստա-  
ցան բազմաթիւ հայերէն նոր բառեր, դիտական,  
գրական, ուսումնական ու հատարակական կեանքի  
վերաբերեալ բառեր, պաշտօնական լեզուի դար-  
ձուածներ. և եթէ այսօր հայերս ունինք քիչ մշակ-  
ուած լեզու, կանոնաւոր գիտական ու պաշտօնական  
լեզու, այդ պարտական ենք գլխաւորապէս *Մասի-*  
*սին*:

Տասնհաճոց միջ գրականութիւնը դարդանալ է  
սկսում 1848 ի Ֆրանսիական յեղափոխութիւնից յե-  
տոյ և անմիջապէս նորա ներշնչած դադափարների  
ազդեցութեան տակ: Մի խումբ երիտասարդներ  
բարձրագոյն կրթութիւն ստանալու համար Պօլսից  
անցել էին Փարիզ, 1846 թուին Պաղուայից աշտեղ  
էր փոխադրուել Մուրատեան վարժարանը, որի շուրջը  
հաւաքուել էին Ն. Գ. Այվազովսի և Աննեակեան  
հայերից ուրիշները: Բիշ քիչ այտեղ ստեղծուեց մի  
գեղեցիկ շրջան. Փարիզը ներկայացնում էր հայ ազգի  
գլխաւոր ուժերի հաւաքման տեղը. այնտեղ էին նա-  
հապետ Ռուսինեան, Կարապետ Եւթիւճեան, Գ. Այ-  
վազովսի, Խորէն Նար-Պէյ, Մերենց, Ստեփան Ռոկան  
ևն: Սորա տկանաւես էին այն շարժումներին, որոնք  
պատրաստեցին Ֆրանսիական յեղափոխութիւնը.

Թիէն, Գիգօ, Լամարաին, Էիւզօ. Շատապրիան և այլ  
այսպիսի հռչակաւոր անձեր նրանց ուսուցիչներն  
եղան. նոցա ազօտ, ժողովրդասէր, անկախ բնաւո-  
րութիւնը թափանցեց իրենց սրտերում. վերջապէս  
պայթեց յեղափոխութիւնը. հայ երիտասարդները  
սեռան և այդ արիւնստ օրերը և նոքա այնտեղ՝ այդ  
արեան մէջ ուխտեցին նուիրել իրենց անձը հայ ժո-  
ղովրդի ազատագրութեան գործին: 50-ական թուա-  
կաններին Փարիզում հրատարակուել են սկսում երեք  
հայ թերթեր. Մասեաց Աղունի, Արևելք և Արևմուտք,  
առաջինը Գ. Այվազովսկու և Խ. Փալֆայենի խմբա-  
գրութեամբ հրատարակուած՝ նուիրուած էր հայ  
գրական ու կրթական գործին, իսկ միւս երկուսը  
Սակփան Ասկանի խմբագրութեամբ նուիրուած էր  
հայ ժողովրդի ազատագրութեան հարցին: Սա. Ասկանը՝  
մի եռանդուն երիտասարդ, նախ ուսանող էր Փարի-  
զում. 1855 թուին հիմնարկելով նա Արևելք թերթը,  
հենց առաջին օրից յայտարարեց թէ ինքը ազատու-  
թեան, ժողովրդի դատին կողմնակից, աղաների շա-  
հատակութեանց ռիսերիմ հակառակօրդ պիտի հան-  
դիսանայ. նա չպիտի շոշոքորթէ հարստութեան ու  
չահի աննկարելեան տակ ու միւս թերթերի նման  
ճշմարտութիւնը չպիտի ծածկէ. քննադատութիւնը,  
յանցաւորի դատափեռութիւնը, մերկացումները նրա  
նպատակը պիտի լինին: Եւ իրօք Սա. Ասկանը անխնայ  
քննադատեց Մուրատեան կառիկ հարցը, ազգային  
պարկաբքարանը, իշխանաւորների կամայականու-  
թիւնները, պաշտօնեաների ապիկարութիւնը ևն. բայց  
իր ազատախօսութեան և նիւթականի սղութեան  
պատճառով Արևելքը փակուեց 1856 թ: Թերթին հա-  
մակերող 11 հոգի մի քանի տարի յետոյ ազագրութեան  
ծախքը իրենք վրայ առնելով հիմնարկեցին Արևմուտք

Թերթը (1859) դարձեալ Սա. Ոսկանի խմբադրութեամբ. բայց այս անգամ յարատեութիւնը աւելի կարճ եղաւ. հենց հիմնադիրները դժգոհ էին խմբազրի անսանձ լեզուից և պահանջում էին շափաւորել. ներքին վէճերի շնորհիւ Արեմուտքը փակուեց մի տարուց յետոյ. 4 ասրի ետք նորից բացուեց և 1865-ին վերջնականապէս փակուեց՝ հայ հրատարակախօսական ասպարէզի վրայ մի նշանաւոր գիտաւորի գերը կատարելով:

Փարիզի մտաւոր ուժերը վերադարձան Պօլիս և սկսան իրենց գործունէութիւնը, նոքա պատրաստեցին հայ ժողովրդի մէջ այն շարժումները՝ որոնց արգիւնքն եղաւ Տաճկահայոց Աղգային Սահմանադրութիւնը (1860), Արեմտեան հայոց ժողովրդական ազատագրութեան և ինքնաձանաչութեան զարգացման առաջին նշանը: Այդ օրից սկսում է գրական այն եռուն կեանքը, որ այժմ արդէն հանգել է:

Մինչդեռ գրական այս շարժումները տեղի էին ունենում Տաճկահայոց մէջ (Պօլսում), արեւելքում շարժման պատրաստութիւններ տեսնում էին և Ռուսահայերը:

Գրական շարժումը Ռուսահայոց մէջ աւելի ուշ սկսաւ քան Տաճկահայոց մէջ. Ռուսահայերը երկար ժամանակ կերակրուեցան Տաճկահայոց գրականութեամբ, գործ ածելով այն թերթերն ու գրքերը՝ որ հրատարակուում էին Պօլսում, Զմիւռնիայում կամ Վենետիկում, մեծ մասամբ գրաբար: Ռուսահայոց առաջին դպրոցը բացուեց միայն 1810 թուին. դա Ատորախանի Աղաբաբեան վարժարանն էր, որը հիմնեց Աղաբաբեան հարուստ անձը՝ Նիբեմ արքեպիսկոպոսի առաջնորդութեան ժամանակ. այս դպրոցի վարիչն ու հայկաբան վարժապետն էր Պօլսեցի նշա-

նա որ վարժապետ Սերովբէ Պատկանեանը. սոյն դպրոցի աշակերտներինն է Յարութիւն վրդ. Ալամդարեանը՝ որ մենք կը տեսնենք կեղծ դասական հեղինակներէ շարքում: 1816-ին բացուելով Մոսկուայի Ազարեան ճեմարանը և 1824-ին Քիֆլիսի Ներսիսեան դպրանոցը՝ Ռուսահայերն ունեցան ընդ ամէնը 3 վարժարան: Այս դպրոցներն աւարտող աշակերտները աշխատում էին մտնել աւելի քարձր դպրոցներ և համալսարանական կրթութիւն ստանալ: Ռուսահայոց յաճախած առաջին համալսարանական քաղաքներն եղան Գորբատ, Մոսկուա և Պետերբուրգ: Դորբատի համալսարանի առաջին հայ ուսանողը եղաւ Խաչատուր Աբովեանը, որ Պարբոսի շնորհիւ մտաւ նոյն համալսարանը 1830 թ. և աւարտեց 1836 թ.: Աբովեանը քաջալերուած այն սիրալիր ընդունելութիւնից որ նա գտաւ Գորբատում, իր հետ քաշեց նաև Նազարեանցին և այդ երկուսը եղան ռուսահայ աշխարհիկ գրականութեան ռահմիւրաները. նոցա յաջորդեցին ուրիշները և այսպէս կազմուեց Գորբատի հայ ուսանողութիւնը:

Կովկաս անցնելով Աբովեանը սկսեց իր գործունէութիւնը. բայց շյաջողելով իր մանկավարժական ծրագրներում՝ դիմեց գրականութեան: Նոյն ժամանակ, ինչպէս գիտենք, Տաճկահայերը ունէին արդէն գրականութեան բարձրացած աշխարհիկ լեզու, հրատարակոււմ էին Շտեմարան, Ազդարար Բիւզանդեան, Յայտարար դիւր լրոյ և մինչև իսկ Արշալոյս Արարատեանի պէս արժանաւոր մի թերթ: Աբովեանը որ գրարարն իբրև ժողովրդին անհասկանալի լեզու մի կողմն էր թողել և ուզում էր տալ հասարակութեան համար հասկանալի լեզու, կարող էր և պէտք էր վերցնել արեմտեան գրական լեզուն, որ փոքր ջանքերի շնորհիւ կարող էր հասկանալի դառնալ Կովկասի

հայերին: Բայց Արտվեանը այդ չարաւ. գիտութեամբ թէ անգիտութեամբ նա անակս անելով տաճկահայ բարբառը, ձեռք առաւ Երեանի բարբառը և գրեց 1842 թ. Վէրքը Հայաստանի վէպը նոյն ժողովրդական բարբառով:

Շատեր մինչև վերջերս համարում էին Արտվեանին իբրև Ռուսահայոց առաջին գրողը և արեւելեան աշխարհիկ գրականութեան հիմնադիրը: Բայց այս կարծիքը արդէն պէտք է մի կողմ դնել: Արտվեանից առաջ եղել են ուրիշներ որ գրել են ռուսահայ աշխարհիկ բարբառով: Մոսկուայում տպուած է վիճարանական մի գրուածք, որ շնայած Արտվեանից աւելի հին լինելուն՝ նրանից աւելի մաքուր լեզու ունի: Ժողովրդական նշանաւոր երգիչ Սայեաթ-Նովան գեւ. 1752 ին գրում էր Թիֆլիսի ժողովրդական բարբառով իր գեղեցիկ աշուղական բանաստեղծութիւնները: Բայց ինչպէս Սայեաթ-Նովայի երգերը, նոյնպէս և Արտվեանի Վէրքը երկար ժամանակ մնացին առանց նշանակութեան. Վէրքը իբրև ձեռագիր մնաց Արտվեանի տանը և առաջին անգամ լոյս տեսաւ 1858-ին, երբ Ռուսահայոց գրականութիւնը արդէն հաստատուն հիմքերի վրայ էր գրուած, կար աշխարհաբար թերթ, հրատարակախօսութիւն, բանաստեղծութիւն. այսպէսով Վէրքը աշխարհաբարի կազմութեան համար իրականութեան մէջ ոչինչ մասնակցութիւն չունեցաւ:

Այսպէս ուրեմն, ինչպէս Տաճկահայոց գրականութիւնը սկսել էր Պօլսի ռամիկ բարբառով, նոյնպէս էլ Ռուսահայոց գրականութիւնը սկսում էր առաջին անգամ Թիֆլիսի, յետոյ Երեանի ռամիկ բարբառով, իսկ Ռուսահայոց մաքուր գրական բարբառը սկսում է առաջին անգամ Մոսկուայում: Այստեղ կազարեան

ճեմարանում ամէն տեղից հաւարուած հայ աշա-  
կերաները սովորական դործածութեան մէջ հեղհեղեղ  
կողում են իրենց լեզուն և կամաց կամաց այդ կողուած  
մաքուր լեզուն դառնում է խօսակցական ընդհանուր  
լեզու նոյն դպրոցի սաների մէջ: Լազարեան ճեմա-  
րանի ուսանողները ճեմարանն աւարտելուց յետոյ  
անցան Գորբատ, այստեղ գերմանական ուսանողների  
օրինակով կազմեցին ուսանողական ընկերութիւն և  
ուսանողական եռանդով սոգորուած սկսան երգել  
ուսանողի կեանքը, սէր, զինի և հայրենիք: Թէև եր-  
գերի մեծ մասը թարգմանական էր և զրական տե-  
սակէտից չունէր առանձին արժանիք, բայց նոքա այն  
մեծ արժանիքն ունէին որ Ռուսահայոց առաջին աշ-  
խարհաբար տաղերն էին գրուած այն մաքուր գրական  
լեզուով որ պատրաստուել էր Լազարեան ճեմարանում:  
Այս երգերը տարածուեցան Հայոց մէջ, ոմանք մինչև  
խի Ռուսաստանի սահմաններից դուրս, ինչպէս է  
Գէորգ Գողոթեանի գեղեցիկ «Միժեռնակը» և իրենց  
հետ տարածեցին գրական ուստահայ բարբառը:

1843-ին՝ Վէրք Հայաստանից միայն մի տարի  
յետոյ Չմիւռնիայում դարձեալ բողոքական միսիո-  
նարների շնորհիւ լոյս տեսաւ Ռուսահայ գրական  
լեզուով Սաղմոսը, որից մի փոքր նմոյշ աւելորդ չենք  
համարում դնել այստեղ.

«Թող Աստուած վերկենայ՝ նորա թշնամիներն  
ցրվվին, և նորա երեսիցն փախչին նորանք՝ որ ա-  
տումեն նորան:

«Ինչպէս որ ծուխն փչանումէ, փչացրո՛ւ նորանց.  
Ինչպէս որ մոմն հալվումէ կրակի առաջին, թող  
ամպարիշաներն կորչին Աստուծոյ երեսիցն (Սղ. Կէ.  
1—2):»

1846 թուին հրատարակուել սկսաւ ուստահայոց

անգրանիկ թերթը «Կովկաս»: Փոխարքայ իշխան Վո-  
րոնցովը հիմնելով ուսսերէն Кавказе պաշտօնական  
թերթը, ցանկացաւ որ նոյնը նաև հայոց լեզուով  
հրատարակուի. և այս հրատարակութեան գործը  
յանձնեց Լազարեան ճեմարանի աւարտողներից Յակոբ  
Արզանեանցին, որ իրեն օգնական առաւ Կարնեցի  
Յակոբ վարժապետ Կարինեանցին: Կարինեանը ձեռք  
առնելով թերթի խմբագրութիւնը և իր հետ վերցնե-  
լով նաև Մ. Պատկանեանին, սկսաւ թերթի հրատա-  
րակութիւնը, որի առաջին համարը լոյս տեսաւ 1846  
թ. յունվար 12-ին: Թերթի լեզուն գրաբար էր և  
պարունակում էր տեղական լուրերը, մեծ մասով  
թարգմանուած Кавказе-ից. նա տևեց մինչև 1848 և  
փակուեց կառավարութեան հրամանով: Երկու տարի  
յետոյ 1850 թ. հրատարակուել սկսաւ Ռուսահայոց  
առաջին աշխարհաբար թերթը Արարատը Թիֆլիսում.  
Թերթի հիմնադիրն էր Գաբրիէլ քհն. Պատկանեանը,  
որ այսպէսով դառնում է Ռուսահայ աշխարհիկ գրա-  
կանութեան ամենաառաջին հեղինակներից մէկը:  
Արարատը շատ կարճ կեանք ունեցաւ. նա գաղարեց  
1851-ին. բայց գրականութեան հիմքը արդէն գրք-  
ուած էր:

Նոյն տարին ասպարէզ է իջնում Ստեփաննոս  
Նազարեանը՝ հրատարակելով ձառ. յաղադս փորձա-  
ռական հոգեբանութեան գրաբար գործը, որի յա-  
ռաջարանի մէջ կաիւ է յայտարարում գրաբարի դէմ:  
Երկու տարի յետոյ սկսում է նա իր աշխարհաբար  
գործերը, Առաջին շօգեգէն կերակուր, Վարդապե-  
տարան Կրօնի և Հանդէս նոր հայախօսութեան, որոնք  
հրատարակուում են 1853 ին: 1855-ին լոյս է տեսնում  
Պետերբուրգում հայ ուսանողների հուարական մի  
գործը, որ պարունակում էր մի շարք արձակ ու սոսա-

նաւոր բանաստեղծութիւններ. հրատարակել խումբը որ Գորբասի ուսանողական խումբն էր Պետերբուրգ փոխադրուած, կրում էր Գամառ-Քաթիպա անունը, և իրեն նպատակ էր դրել հայ գրականութեան զարգացումը աշխարհաբար նորանոր հատորների հրատարակութեամբ: Յաջորդ տարին լոյս տեսաւ նոյնի երկրորդ տետրակը, ուր կար նաև Ռ. Պատկանեանի Մայր Աբաքոն, որ ոչ միայն Ռուսաստանում, այլ և Կովկասում ու հեռու Տաճկաստանում ազգային սիրելի երգ դարձաւ:

Հասնում է 1858 թիւը, որով սկսում է Ռուսահայոց գրական կեանքի մի շատ բեղմնաւոր շրջանը. Մոսկուայում նազարեանցը սկսում է հրատարակել Հիւսիսափայլ թերթը. իրրև հակառակող ոյժ իր ազատամտական սկզբունքներին՝ իսկոյն հիմնում են Մոսկուայում ձաքաղը և Թիֆլիսում Մեղու Հայաստանին: Այս թերթերում ասպարէզ են իջնում ռուսահայ մտաւոր ուժերը՝ Նալբանդեան, Բաֆֆի, Պատկանեան և Սմբատ Շահազիզ:

Նազարեանի անուան ու ժամանակի հետ կապւում է երկու խոշոր երևոյթ հայկական գրական կեանքի մէջ. դոքա են՝ աշխարհաբարի վերջնական բաժանումը գրաբարից և արևելեան բարբառի բաժանումը արևմտեանից:

Ամէն ազգի մէջ նկատուած երևոյթ է որ երբ մի հին լեզու այլ ևս գործածութիւնից ընկնում է և նոր լեզուն նրա տեղն է անցնում: հնասէր գիտնական մարզիկ որ ճանաչում են հին լեզուի յարգն ու ճաշակը, չեն կարողանում միանգամից բաժանուել նրանից և ամէն ջանք գործ են դնում հինը վերանորոգելու. բացւում է հնի և նորի, պահպանողականութեան ու ազատամտութեան կռիւը: Ըները սկզբում ուժեղ

գիմագրութիւն են ցոյց տալիս, կարողանում են մի  
ժամանակ հին լեզուի յիշատակը վառ պահել, բայց  
իրենց յաջողութիւնը վաղանցուկ է. նորա օրից օր  
ընկնելով՝ վերջագէտ յազթւում են նորերից և նոր  
լեզուն զբաւում է հնի բոլոր ասպարէզները: Այս  
ընդհանուր ճակատագրական օրէնքը տեղի պիտի ու-  
նենար և մեր մէջ:

Գրաբարեանութիւնը հայոց մէջ նոր ժամանակ-  
ների երևոյթ չէ. դեռ միջին դարերից, երբ արդէն  
աշխարհարարի ու գրաբարի բաժանումը խօսակցա-  
կան լեզուի մէջ կատարուած փաստ էր, սկսել էր,  
ինչպէս բնական էր, գիտնականների մէջ մի շարժում  
աւանդ բարձրաբար վերացնելու և գրաբարը նորից կեն-  
դանի խօսակցական լեզու դարձնելու. մի բառով  
սկսել էր գրաբարեանութիւնը: Առաջին գրաբարեան  
շարժումների մասին տեղեկութիւն ստանում ենք  
մենք Կիրակոս պատմագրից, որ խօսում է ներսէս  
Ենորճալու ջանքերի մասին աշխարհարար խօսակցա-  
կան լեզուն մոռացնելու և նորա տեղ գրաբարը դնելու  
համար. «Ձի այնպէս էին կամք սրբոյն (ասում է Կի-  
րակոսը Ենորճալու համար) զի հնար իցէ ոչ որ խօսեսցի  
ի խօսս աշխարհականս, բայ ի գրոց, ոչ ի գինարբուս  
և ոչ յայլ ուրախութիւնս: Վասն այնորիկ արար նա  
երգս և ուսոյց այնոցիկ, որ պահէին զբերդն, զի փո-  
խանակ վայրապար ձայնիցն, զոյն ասացեն» (Կիր.  
պատմ. Մտակուս, էջ 67): Այնուհետև գրաբարեան  
շարժումների մասին տեղեկութիւն չկայ, մինչև ժի-  
զարի կէտը, երբ շարժումը բորբոքւում է և կազմում  
երկու հզօր հակառակամարտ բանակներ:

1848-ի ֆրանսիական յեղափոխութեան ենթապար-  
տական մեր կեանքի յառաջգիճական երևոյթներից շա-  
տերը, և այս յեղափոխական գաղափարների ծնունդ է

նաև գրաբարի դէմ յայտարարուած կռիւր:

Գրաբարի դէմ կռիւր յայտարարուեց առաջին անգամ Արեւմտեան հայոց մէջ. Փարիզում ազատական գաղափարներով սնուած ուսանողութիւնը վերագտանալով Պօլիս, մի կողմ գրաւ գրաբարը և առանձին զարկ տալ սկսաւ խօսակցական լեզուին: Ռուսիներէնը 1853-ին հրատարակուած է Ազգախօսութիւնը, որով ոչ միայն ուզում է վերջ տալ գրաբարին, այլ և կանոնաւորել աշխարհաբարի վիճակը: Ամբողջ հին սերունդը զինուում է նրա դէմ և Ռուսիներէնի գիրքը արգելքի տակ է դրւում: Ազգմուտ է երկու հակառակ բանակ, որոնք մկրտուում են գրաբարեան ու աշխարհաբարեան անուններով:

Կռիւր միաժամանակ մղւում է և Տաճկահայոց և Ռուսահայոց մէջ. և թէև վերջինները շուտով լուծում են հարցը յօդուտ աշխարհաբարի, բայց Տաճկահայոց մէջ կռիւր շարունակուում է մինչև 90-ական թուականները, 80-ական թուականները այդ կռուի ամէնից կատաղի ժամանակն են կաղմուում. անթիւ են այս առթիւ լոյս տեսած յօդուածները, բանակռիւնները, վիճաբանութիւնները: Գրաբարեանները նախ նպատակ ունին ուղղակի կենդանացնել գրաբարը թէ գրականութեան մէջ և թէ խօսակցական ասպարէզում. յետոյ աւելի մեղմելով ընդունում են խօսակցական լեզուի գոյութիւնը և պահանջում են որ դոնէ գրականութեան լեզուն գրաբար լինի. երբորդ շրջանին աւելի մեղմանալով ընդունում են աշխարհաբարի գոյութիւնը գրականութեան ցածր աստիճանների համար, սակայն բարձրագոյն գրականութիւնը, յատկապէս տաղաչափութիւնը պահանջում են գրաբար: Գրաբարեանների վերջին աստիճանը կաղմուում են այն շատ մեղմացած տիպերը, որոնք ուրիշ բան

չէին ուզում, բայց եթէ աշխարհաբար գրութեանց մէջ երբեմն երբեմն խառնել զբարբար սճեր ու զարձուածներ: Իբրև այս վերջինների ներկայացուցիչները մ'նում են մինչև այսօր Վենետիկի և Վեննայի հայրերը:

Աւելի խոշոր երևոյթ է մեր արևմտեան ու արևելեան զրահան բարբառների բաժանումը, որը վերջնականապէս տեղի ունեցու Նազարեանի օրով ու աշխատութեամբ:

Ինչպէս յայանի է, հայերը բացի Մայր Երկրից, որ գանւում է Տաճկաց, Ռուսաց և Պարսից տիրապետութեան տակ, ցրուած են Կովկասում, Փոքր Ասիայում, Պարսկաստանում, Եւրոպական Տաճկաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում, Աւստրիայում, Ռուսաստանում և մասամբ Ֆրանսիայում, Անգլիայում, Իտալիայում, Եգիպտոսում, Ամերիկայում և Հնդկաստանում: Այս ամբողջ աարածութեան մէջ սփռուած հայ ժողովուրդը այժմ խօսում է 27 գաւառաբարբառ, որոնք բաժանւում են երկու գլխաւոր տիպի առաջին տիպի բարբառները զանազանւում են միւսներից այն բնորոշ յատկութեամբ՝ որ ներկայ ժամանակը կազմում են ում կամ իս վերջաւորութեամբ. ինչպէս՝ բերում եմ, լալիս եմ. իսկ երկրորդ տիպի բարբառները որանց տեղ գործ են ածում կը, կու մասնիկները. ինչպէս՝ կը բերեմ, կույամ: Առաջին տիպի բարբառները, որոնք անյարմար անունով կոչւում են արևելեան բարբառներ, շատ սահաւաթիւ են և գանւում են Կովկասում, Պարսկաստանում և Հնդկաստանում: Իսկ երկրորդ տիպի բարբառները, որոնք նոյնպէս անյարմար անունով կոչւում են արևմտեան բարբառներ, խիստ բազմաթիւ են և շատ տարածուած: Նրանք գանւում են ամբողջ Տաճկահայաստանում, Փոքր-Ասիայում, Եւրոպական Տաճկաս-

տանոււմ, Բուլղարիայում, Ռումինիայում, Աւստրիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Իտալիայում, Եգիպտոսում և Ամերիկայում: Արևելեան բարբառների թիւը միայն 8 է, իսկ արևմտեան բարբառները 19 հատ են:

Պէտք չէ հարձել թէ ամէն արևելեան բարբառ գանւում է Կովկասում և Պարսկաստանում և կամ թէ ամէն արևմտեան բարբառ գանւում է Տաճկաստանում և գաղթավայրերում. ընդհակառակը խօսակցական արևելեան բարբառները, ինչպէս ասացինք, խիստ քիչ տեղ են բռնում և արևմտեան բարբառները խօսուում են նաև Ռուսահայոց մեծ մասի կողմից: Ինչպէս Խրիմ, Նոր-Նախիջևան, Կարս, Ախալցխա, Ախալքալաք, Աղերսանդրապոլ, Ապարան, որոնք արևմտեան բարբառներով են խօսում: Սրան հակառակ արևելեան բարբառներն էլ ասարածուած են Տաճկահայոց մի փոքրիկ շրջանում. այսպէս Բայազիդ և Զմիւռանիոյ շրջականներում մի քանի գիւղեր խօսում են Երևանի ու Ղարաաղի բարբառները:

Յիշեալ 27 բարբառները միայն խօսակցական լեզու էին սկզբում և գրականութեան մէջ մասնաշունչէն, գրութարք իբրև ընդհանուր գրական լեզու թագաւորում էր ամէն տեղ: Երբ աշխարհաբարք ու զեց գրականութեան բարձրանալ, նախ բարբառներն էին որ գրի առնուեցան. այսպէս Տաճկահայոց առաջին աշխարհաբար գրուածքները Պոլսի բարբառով էին, Սայեաթ-Նովան գրեց Քիֆլիսի բարբառով, Աբովեանը Երևանի բարբառով: Այնուհետև ուրիշներ հետևեցին սրանց և գրեցին բարբառներով, Սոււղուկեանցը իր գործերը գրեց Քիֆլիսի բարբառով, Ռ. Պատկանեանը մի խումբ մէկտեղ ու ստանաւորներ. Նոր-Նախիջևանի բարբառով, Էմին Տէր-Գրիգորեանը շատ թատերական գործեր թողեց Երևանի բարբառով, Մակար Բարխու-

դարեան, Կ. Մելիք-Շահնաղարեան, Տիգրան Նաղարեան գրեցին Ղարաբաղի բարբառով զանազան վէպեր ու զաւելչտական գրուածքներ. այսպէսով կազմուեց Տիխիսի, Երևանի, Ղարաբաղի, Նոր-Նախիջևանի և Պօլսի բարբառներով գրականութիւն: Բայց այս բարբառային գրականութիւնները իրենց փոքրիկ սահմանից աւելի չմեծացան և ընդհանուր նշանակութիւն չունեցան: Եւ մինչև այսօր էլ մեր բարբառները բոլորն էլ մ'նում են միայն իրրև խօսակցական լեզու:

Առաջին անգամ արևմտեան գրողները Պօլսի բարբառը մաքրելով, թուրք և օտար փոխառեալ բառերը նրա միջից ջնջելով, աղաւաղուած ձևերը գրաբարի համեմատ ուղղելով, սլակաս բառերի տեղ նորերն ստեղծելով և առհասարակ մեր լեզուին եւրոպական քաղաքակրթուած լեզուների ոճը տալ աշխատելով, կազմեցին մի գրական լեզու, որ սկսաւ հետզհետէ տարածուիլ:

Լեզուի մաքրութեան անսակէտից առանձին բախտ պէտք է համարենք այն հանգամանքը՝ որ աշխարհաբար գրակնութիւնը առաջին անգամ սկսաւ Պօլսում: Մենք վերևը մի քանի անգամ շեշտեցինք Պօլսի բարբառի աղաւաղեալ վիճակը, բայց այդ պէտք է վերցնել միայն համեմատական շարժումով: Պօլսի ուսմիկ բարբառը թէև լի թուրքերէն բառերով, բայց այնուամենայնիւ շատ մաքուր հայերէն բարբառ է. նրա քերականութիւնը գանուում է շատ հարազատ վիճակում, իսկ ինչ հայերէն բառ որ գանուում է այդ բարբառի մէջ՝ ձևով անհամեմատ աւելի մաքուր է քան օրինակ Կիլիկիայի և բուն Հայաստանի բարբառներից շատերը: Ի՛նչ կը լինէր այսօր մեր վիճակը՝ եթէ Զէյթունի, Հաճինի, Մարաշի, Ղարաբաղի, Ադուլիսի, Մարաղայի, Մոկաց կամ Վանի բարբառներին նման մի

այլանդակուած բարբառ գրականութեան անցնէր. այն ժամանակ մենք պիտի ունենայինք ընդհանուրի համար բացարձակապէս անհասկանալի մի գրականութիւն և դուրսէ մի տասնեակ գրական լեզու:

Պօլսի նորակազմ գրական լեզուն սկսաւ ուրեմն տարածուել ամէն կողմ, նոյն իսկ Կովկասում: Եթէ մի փոքր ջանք և բարբի կամեցողութիւն գործ դրուած լինէր Կովկասում, անշուշտ արեմտեան գրական լեզուն կընդունուէր նաև Կովկասի մէջ և այսօր հայերս կու-նայինք մէկ ընդհանուր գրական լեզու:

Բայց ռուսահայ գրողները, մասնաւորապէս Նազարեանը, այսպէս չմտածեցին: Նազարեանը ընդհակառակը կողմնակից էր բաժանման և զարկ տալով Նազարեան ձեմարանում կազմուած գրական բարբառին, կատարուեց վերջապէս ախար բաժանումը և ձևացան հայ ազգի մէջ երկու գրական լեզուներ և երկու գրականութիւն. արևելեան և արեմտեան:

Արևելեան անունով ճանաչում ենք Ռուսահայոց գրականութիւնը, որից անբաժան է նաև Պարսկահայ գրականութիւնը: Իսկ արեմտեան անունով ճանաչում ենք այն մեծածաւալ գրականութիւնը, որ կազմուած է Տաճկահայոց և ըստը հայ դադթականութեանց գրականութիւնից, ինչպէս են Ամերիկայի, Եգիպտոսի, Բուլղարիայի և Եւրոպայի հայ դադթականութիւնները, վերջինի մէջ հաշուելով նաև Վենետիկի և Վեննայի միաբանութիւնները: Ամանք ուզում են արեմտեան գրականութիւնից բաժանել ըստը դադթականութիւնները և նոցանից կազմել առանձին ճիւղ՝ Արտասահմանեան գրականութիւն անունով: Բայց այս բանը սխալ է: Գրականութեան բաժանումները որոշելու միակ հիմքը պէտք է լինի այն լեզուն, որով հեղինակը գրում է, առանց նկատի առնելու հեղինակի

անձնատ որութիւնը, նրա ծննդավայրը կամ որ քաղաքում ապրելը: Այսպէս եթէ մի գերմանացի գրէր հայերէն լեզուով գրքեր, նրա արտադրութիւնները պէտք է մտնէին հայկական գրականութեան պատմութեան մէջ և ոչ գերմանական: Նոյնպէս եթէ մի հայ հեղանակ գրէր գերմաներէն, նրա գրածները կը մտնէին գերմանական գրականութեան մէջ և ոչ թէ հայոց գրականութեան: Այս տեսակէտով արևելեան գրականութեան են պատկանում բոլոր այն հեղինակները՝ որ գրել են արևելեան գրական բարբառով, իսկ արևմտեան գրականութեան են պատկանում այն հեղինակները՝ որ գրել են արևմտեան գրական բարբառով:

Երկու գրական լեզուներէ բաժանումից բաւական յետոյ ջանքեր եղել են մեր մէջ երկուսը նորից միացնելու և միակ հայկական գրականութիւն ստեղծելու: Սոցա մէջ մենք կը յիշենք Մինաս Աերազին. սա 70-ական թուականներին Պոլսում ընտրելով երկու գրական բարբառներից իրեն գուր եկած ձևերը, գրաբարից վերջնելով գերսանունները, իրանից ստեղծելով դանազան նոր ձևեր, ընդունելով քերականութեան մէջ հռոմական միօրինակութիւն, վերջապէս կազմեց մի նոր լեզու, որը կոչեց Ընտրողական լեզու: Այս լեզուով գրեց նա իր մի քանի գրական աշխատութիւնները, որոնք են Գրական Փորձեր, Գրիչ և Սուր, Ազգային Գատախարակութիւն, Հայաստան և Իտալիա: Իրեն հեռակեցին մի կարճ ժամանակի համար Եղիա Տէմիրճիպաշեան Նոր-Պեանք անուն հատորում և Վերաիչ Փորթուգալեան՝ Արմենիա թերթի խմբագիրը: Ընտրողական լեզուն այս փոքրիկ սահմանից դուրս չելաւ և նոյն իսկ նրա հեղինակը շուտով թողեց նրան:

Վերջերս Կովկասահայ լրագրութեան մէջ Մա-

նուկ Արեղեան բաց արաւ միութեան հարցը և արաւ-  
իր առաջարկութիւնները, բայց ոչ մի գրական արդիւնք  
դուրս չեկաւ:

Այսպէսով գրական լեզուները միացնելու ջան-  
քերը ս'է թէ միայն մինչև այժմ անօգուտ են անցել,  
այլ և անօգուտ կը մնան ընդ միշտ: որովհետև արդէն  
կազմակերպուած լեզուի Զնջումը հեշտ գործ չէ և  
արուեստական կերպով լեզու ստեղծել անկարելի է:  
Լեզուների միութիւնը իսկապէս յաւիտեան անկարելի  
է և այդպիսի միութեան հասնելու համար հարկաւոր  
է մէկի կամ միւսի Զնջումը, որ կախուած է միմիայն  
քաղաքական հանդամանքներից: Մենք այսօր տեսնում  
ենք թէ ինչպէս արեւմտեան բարբառները, թէև աւելի  
հնագոյն, աւելի բազմաթիւ և աւելի մեծ տարածու-  
թիւն բռնած, բայց հեաղհետէ կոչցնում են իրենց  
հողը և հեաղհետէ հպատակում արեւելեան բարբառին,  
նոքա պահում են մասամբ հասարակ գործածութեան  
մէջ, բայց գրականութեան մէջ նոքա արդէն տեղի  
են տալիս արեւելեան գրական բարբառին: Արա պատ-  
ճառը ռուսական տիրապետութիւնն է. այնպէս որ  
ընականից արեւմտեան լեզու խօսող ժողովուրդները  
երբ մտնում են ռուսաց տիրապետութեան տակ,  
դառնում են անգամ արեւելեան գրականութեան,  
թէև խօսակցութեան մէջ պահում են արեւմտեան  
բարբառը: Այսպէս էղան Ախալցխա, Ախալքալաք,  
Կարս, Ալեքսանդրապոլ, Նոր-Նախիջևան, Երիմ և Ա-  
պարան: Եթէ ռուսական տիրապետութիւնը ապա-  
գայում տարածուի բովանդակ Հայաստանի և Փոքր-  
Ասիոյ վրայ, գուցէ արեւելեան բարբառը ընդհանուր  
տարածուի և արեւմտեան բարբառը աւելի ու աւելի  
փոքրանալով՝ մեռնի վերջապէս: Իսկ եթէ ընդհակա-  
ռակը Տաճկահայք լաւագոյն օրեր տեսնեն, կարող է

քաղաքական հանդամանքների հետ արեմտեան բարբառն էլ յերթող հանդիսանալ:

Արեւելեան և արեմտեան գրականութիւնները հետեւել են երկու տարբեր ուղղութեան: Արեւելեան գրականութիւնը կենտրոնացած լինելով Տիֆլիսում և ապրելով միշտ հայկական կեանքի հետ, բնական է թէ պէտք է տար աւելի ազգային գրականութիւն: Այս գրականութեան կրթիչ և իբր օրինակ ծառայել է ռուսաց գրականութիւնը, որ լինելով նոր և առողջ գրականութիւն, մեծապէս նպաստել է արեւելեան գրականութեան ոգու բարձրացման: Քոյոր ռուսահայ հեղինակները ներշնչուած էին ռուսական յառաջդիմական շարժումներով և նրանց արձագանգ գարձան: Վաթսունական թուականներին Ռուսաստանը սկսու ազատագրական գործը, վերջրեց ճորտութիւնը, զարկ տուաւ ուսման, ժողովրդական վերանորոգութեան են: Հայ հեղինակները կրթուելով Ռուսաստանում և իւրացնելով այդ ազատամիտ սկզբունքները՝ միևնոյն բաները ցանկացան գործագրել նաև մեր մէջ: Այսպէսով մեր ռուսահայ անդրանիկ գրականութիւնը ռուսական շարժումների ներշնչմամբ եղաւ:

Մինչդեռ ռուսահայոց գրականութիւնը աւելի ազգային գծեր ունէր, արեմտեան գրականութեան կենտրոն Պոլիսը, որ հեռու էր Մայր Հայրենիքից, բնական է թէ հեռու պէտք է լինէր նրանից նաև գրականութեան մէջ: Պոլիսը ապրեցաւ միայն հայրենիքի երազով: Արեմտեան գրականութեան սկիզբները՝ գրագէտների և բանաստեղծների ամբողջ ուշքը Հայաստանի վրայ է. և որովհետև Հայաստանի նոր կեանքից նորա միայն թշուառութեան սպառկերն ունէին իրենց աչքի առաջ, ուստի ողբացին նրան և իրենց մտիթարութիւնը գտան հին փառաւոր կեանքի

յիշողութեան մէջ: Գրագէտների գործերի մեծ մասը հայրենիքից է. Գուրեանի, Պէշիկթաշլեանի, Հէքիմեանի տասնեակ թատրերգութիւններից միայն մի երկուսը իրական կեանքից են, իսկ մնացեալ բոլորը հին պատմական կեանքից: Նոյն իսկ պատմական վէպը ծնւում է նախ արեւմտեան հայոց մէջ. առանց Վաֆֆիի արժանիքն ունենալու, բայց նրանից առաջ Մերենցը գրում է իր պատմական վէպերը:

Այսպէսով եթէ ուղենանք երկու գրականութեանց պատկերը համառօտ կերպով գծել մեր աչքի առաջ, կը տեսնենք որ արեւելեան գրականութիւնը ապրել է մեր հայրենիքի ներկայ կեանքով, իսկ արեւմտեան գրականութիւնը հեռու հայրենիքից՝ նրանցեալ կեանքով:

Բայց Օսմանեան կառավարութեան խտուրթիւնը, մանաւանդ երբ նկատեց հայկական դարթումը, թոյլ չտուաւ նաև երազով ապրելու Գրաքննութիւնը ջնջեց ոչ միայն Հայոց պատմութիւնը, Հին Հայոց գրականութիւնը, Հայաստանի աշխարհագրութիւնը, այլ մինչև իսկ ազգ, հայրենիք ու Հայաստան բառերը արգելուեցին: Մեր երկրի հին հայկական անուններն անգամ կարելի չէր արտասանել. փոխանակ Կարին ասելու հայերը պարտաւոր էին գործ ածել թրքական էրզրում բառը և այսպէս միւս բոլոր անունները. ուստի հայերից ամէն մի գիրք արգելուած է Տաճկաստանում, Վաֆֆու, Նալբանդեանի, Պատկանեանի անունները արտասանելն էլ չէ կարելի:

Այսպիսի հանգամանքների մէջ արեւմտեան գրականութիւնը ի հարկէ պէտք է բոլորովին հրաժարուէր հայկական կեանքից և իւր մաքի հաճոյքները զոհացնելու համար պէտք է թափառէր միայն օտար գրական թարգմանութիւնների և նոցա նմանութեան մէջ:

Ուստի զարմանալի չէ որ Պօլիսը այլ ևս չտար աղգային, զուտ հայ գրականութիւն և օգտակարապաշտ դաշտարներէից հեռանալով զուտ գեղեցկագիտական ճաշակը զարգացնէր: Իսկ բուն Հայաստանի ժողովուրդը՝ արեան ու արցունքի մէջ խեղդուած, զարմանալի չէ որ մինչև այսօր էլ չի տուել հայ գրականութիւն. նրա ամէն մի ձգտումը անկախ մամուլ ու գրականութիւն ունենալու՝ խանգարուել է Տաճկահայն կառավարութեան ճնշումներով:

Արեմտեան գրականութիւնը մենք բաժանում ենք 4 շրջանի.

Ա. շրջանը ներկայացնում է 60—80 թուականների գրականութիւնը, երբ Տաճկահայերը Սահմանադրութեան հաստատութեան և գրաբարի ու աշխարհաբարի վէճերի առթիւ եռուն կեանքի մէջ են. այս շրջանի գրողներն են՝ Ռուսինեան, Ստեան, Պէշիկթաշլեան, Դուրեան, Մամուրեան, Իերենց, Խրիմեան Հայրիկ և Նար-Պէյ: Այս շրջանում ծաղկում են գլխաւորապէս հրապարակախօսութիւնը, քնարերգութիւնը և պատմական կեանքից վերցրած ողբերգութիւնը:

Բ. շրջանը ներկայացնում է 80—90 թուականների գրականութիւնը, երբ Պօլսում հետամուտ են դարձնելի ու առհասարակ կրթական դործի զարգացման. ըայց այդ նպատակին գեռ լիովին շնասած՝ տակաւ առ տակաւ սկսում են տաճկական գրաբըննութեան ճնշումները: Այս շրջանի հեղինակներն են՝ Պարոնեան, աիկին Տիւսար, Սրուանձաեան, Թովմաս Բերգեան, Յովհ. Սեթեան, Եղիա Տէմիրճիպաշեան, Մինաս Աբրաղ, Մկրտիչ Աճէմեան, Ռեթէոս Պէրպէրեան: Այս շրջանում զարգանում են բանաստեղծութեան միւս ճիւղերը, վիպասանութիւնը, երևում են փիլիսոփայական գրումներ, կատարելութեան է հասնում

երգիծարանու թիւնը, որի անդուգական ներկայացուցիչն է Պարոնեանը: Տիրող ուղղութիւնը բնաօրաշա ու վիպական դպրոցն է:

Գ. շրջանը պարունակում է 90-ական թուականները, սկզբում հիմնում է Հայրենիք թերթը, որի շուրջը հաւաքում են Տաճկահայոց նորագոյն ուժերը. Արփիար Արփիարեան, Գրիգոր Զոհրապ, Հրանդ Կիւրճեան, Հրանտ Ասատուր, Լևոն Բաշալեան, Արշակ Զօղանեան, Երուանդ Ստեան, Զապէլ Տօնէլեան, Սիւյիս, Ֆիմի, Շանթ և Յակօր Ալփիար. սկսում է իրապաշտ (բէպիստ) ուղղութիւնը: Այս շրջանում զարգանում են գլխաւորապէս նորավէպն ու ժողովրդական կեանքից վերջրած կարճ պատկերները: Տաճկական խտուրթիւնները հետզհետէ ծանր կերպարանք են ստանում և վերջապէս պայթում է անկղ կոտորածը բովանդակ Տաճկահայոց գլխին:

Գ. շրջանը ներկայացնում է կոտորածից յետոյ անկեալ ու թշուառական հայութիւնը. ուժասպառ ժողովրդի հետ հայոց մտաւոր լաւագոյն ուժերը գաղթում են Բուլղարիա, Եգիպտոս, Եւրոպա և Ամերիկա. նիւթական անանկութիւնը մեռցնում է դրահանութիւնը. բայց մոխրի տակից կամաց կամաց ծլում են ըմբոստ ուժեր. հիմնում են թերթեր, գրականութիւնը տարածւում է Պօլսից դուրս Եւրոպա, Ամերիկա, Եգիպտոս, Բուլղարիա, որոնց ընդհանուր բնաւորութիւնը յեղափոխական ողին է:

Արեւելիկան գրականութիւնը Լէօն բաժանում է երկու շրջանի. առաջին շրջանը տևում է 60-ական թուականներից մինչև 1885, երբ գրականութեան միակ ձգտումը օգտակարն է. ժողովրդի լուսաւորութիւնը, նրա յառաջդիմութիւնը. այս շրջանի գրողներն են Աբովեան, Նազարեան, Գ. և Ռ. Պատկանեան,

Նալբանդեան, Սմբատ Շահագլղ, Ղազարոս Աղայեան,  
Պերճ Պաօշեան, Գ. Սունդուկեան, Գր. Արծրունի,  
Բաֆֆի և Լէօ. այս շրջանի հիմնական ոգին հրապարակախօսութիւնն է:

1885 թուից սկսում է երկրորդ շրջանը. այս շրջանի մէջ հրապարակօսական ձգտման տեղ տիրում է զուտ գեղեցկի բժրունուժը և գրականութիւնը սկսում է ծառայել միայն գեղարուեստին: Այս շրջանի գրողներն են՝ Յ. Յովհաննիսեան, Լեռենց, Շիրվանզադէ, Մուրացան, Մատուրեան, Լ. Մանուէլեան, Յովհ Քուժմանեան, Յար. Քուժմանեան, Արամ Զարբգ, Ատրպետ, Վրթանէս Փափագեան, Տիկին Խատիսեան, Աւ. Իսահակեան և Աւ. Ահարոնեան:

Հետևելով այս ընդհանուր տեսութեան մէջ պարզուած բացատրութեանց, մեր նոր գրականութեան պատմութեան մէջ մենք ընդունում ենք հետևեալ բաժանումները.

Ա. Շրջան. Կեղծ Գասական Գրականութիւն.

ա. մաս. Մխիթարեաններ.

բ. մաս. Ոչ-Մխիթարեաններ.

Բ. Շրջան. Աւսարհաբար Գրականութիւն.

ա. մաս. Արևմտեան Գրականութիւն.

բ. մաս. Արեւելեան Գրականութիւն.

## Ա. Շրջան

### Կեղծ Դասական Դրականութիւն

Ա. Մաս

Մ խ ի թ ա ռ ե ա ճ ճ ե ռ

#### 1. ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՅԻ

(1676—1749)

Ստ. Ազոնց Գիւզէր.—Պատմ. կենաց և վարուց տեառն Մխիթարայ արքայի Վենետիկ 1810.

Յ. Ազեբեան.—Պատմ. Մխիթարայ արքայի. հմուտ. Վենետիկ 1819.

Հ. Գ. Զարրհանայեան.— Պատմ. հայերէն դպրութեան. Բ. Վենետիկ 1878.

Ա. Երեցեան.—Վենետիկի Մխիթարեանք. Թիֆլիզ 1883. Լէօ.—հայկական տղազրութիւն. Ա. և Բ. հտ. տ. մաս.

Հ. Ղազիկեան.—Մխիթար (ստանաւոր). Բազմավէպ Մխիթարեան Յորելեան. Վենետիկ 1901, էջ 1—48:

**Մ**խիթարը ծնուեց 1676 թուին փետրւլ. 7 Սե-  
բաստիա քաղաքում. հայրն էր Պետրոս անուն անձը.  
Մխիթարի աւագանի. անունն էր Մանուկ: Հինգ տա-  
րեկան հասակում սկսաւ սովորել տեղացի մի քահա-  
նայի մօտ, որ զարմացած մնում էր երեխայի վաղա-  
հաս ընդունակութեան վրայ:

Ամէնքին յայտնի է Սեբաստիոյ հայոց շափազանց  
կրօնասիրութիւնը, որ շնայած ժամանակիս պայման-  
ներին՝ մինչև այսօր էլ ունին ճգնաւորներ, միանձնեւ  
և Աստուծու սիրու համար մարմնական ամէն տեսակ

զրկանքների կամաւորապէս իրենց անձը ենթարկող մարդիկ: Եթէ այդ այդպէս է դեռ այսօր, ի՛նչ պիտի լինէր երկու դար առաջ, երբ կրօնամոլութիւնը մեծագոյն առաքինութիւնն էր համարուում:

Այսպիսի կրօնամոլ շրջապատը շատ շուտ ազդեց և Միսիթարի վրայ և նա իւր ծնողացը յայտնում էր միշտ թէ երբ մեծանայ՝ կրօնաւոր պէտք է դառնայ: Այնքան մեծ էր իւր այս ցանկութիւնը, որ մի օր թողնում է տուն ու տեղ և մի հասակակից երեխայի հետ քաղաքից հեռանալով՝ գնում են մի քարայրի մէջ ճգնելու: Ամբողջ օրը ճգնում են և երեկոյին սպասում են՝ որ հրեշտակները գան և իրանց ծառայեն Յովհաննէս Մկրտչին նման: Երբ օրը մթնում է և հրեշտակները չեն երևում, սկսում են լալ և օգնութիւն ազադակել: մինչև որ ծնողները նրանց բացակայութիւնը տեսնելով ման են գալիս, գանում են և տուն գարձնում:

Ինք տարեկան հասակում Մանուկը ստանալով Սերաստիոյ Անանիա եպիսկոպոսից չորս տոտիճանները՝ ձեռնադրում է գպիր: Կոյն ժամանակ Սերաստիայում կային երկու կոյսեր, որոնք իբրև որբուհի յայտնի էին քաղաքում. նոքա աշխարհային հաճոյքներից հրաժարուած ազջկերք էին, որոնց միակ զբաղմունքն էր մարմնի զրկողութիւն, անվերջ ազօթք, գիշերային հսկում, պահեցողութիւն և ծովապահութիւն: Մանուկը դեռ տասնամեայ երեխայ էր, երբ քահանայի մօտ ուսումն արարտելով՝ այս կոյսերի խնամքին յանձնուեց: Կոյսերի մոլեռանդ սգին աւելի ազդեց Մանուկի վրայ և նոքա մեծ նշանակութիւն ունեցան նրա կրօնական դաստիարակութեան մէջ: Նոքա պատմում էին այն աստուածային անվերջ տեսիլքները, որ տեսնում էին իրենք և որով գուշակում

էին թէ Մանուկը մի օր աղղի լուսաւորիչ պէտք է գառնայ: Այս կրօնական մուկեռանդ հաւատքով իր այն մանուկ հասակում Մանուկը հրաժարում է մսից և 7 տեսակ պաղից, թագուն հագնում է մօրթի վրայից քուրձ, մեծ պատին երկու օրը մի անգամ է ուտում, մի անգամ էլ 6 շաբաթ ամբողջ ջուր չխմեց: Աւելորդ է ասել թէ նա իսպառ հրաժարուել էր մանկական հասակին պատշաճ ամէն տեսակ խաղերից և գուարձութիւններից:

Տասնըջորս տարեկան էր Մանուկը և կրօնաւոր լինելու բուռն կամք յայտնեց. ծնողները հաղիւ կարողացան մի տարի էլ պահել նրան. և վերջապէս մի օր երբ Մանուկի հայրը և հօրեղբայրները գնացել էին ուրիշ քաղաք, Մանուկը թախանձելով մօրը՝ ստացաւ հրաման և գնաց մտաւ Սերաստիոյ մօտիկ հռչակաւոր Ս. Նշան վանքը: Անանիա եպիսկոպոսը ընդունեց նրան և ձեռնադրեց սարկաւազ՝ տալով նրան Մխիթար անունը:

Մխիթարը մի տարի մնաց Ս. Նշանի վանքում, իւր ամբողջ ժամանակն անց կացնելով շաբաղաններ երգելով, Ս. Գիրք կարդալով և ոտանաւորներ գրելով: Ապագայ քարոզների փորձերն էր անում նա միշտ իր խցում առանձնացած, բայց այնքան յաջող էին այդ փորձերը, որ միաբանները թագուն լսում էին նրան զարմանքով:

Սերաստիա է գալիս Ս. Էջմիածնի նուիրակ Պարսկաստանցի Միքայէլ արքեպիսկոպոսը, որ իր գիտնականութեամբ և ճգնական խստութեամբ նշանաւոր էր: Մխիթարը գիմում է նրան և խնդրում աշակերտիւ. Միքայէլը ընդունում է և խոտանում հետք Էջմիածին տանել: ձանապարհ են ընկնում եւ գոկիայի վրայով գէպի Վարին: Գեկտեմբեր ամիսն էր, այդ

ցուրտ ձմրան Մխիթարը կորցնում է ճանապարհը և անձանօթ լեռներում կորչում. մի թուրք ձիապան գտնում է նրան և Կարին ասնելով յանձնում է Միքայէլին:

Միքայէլը խիստ մարդ էր և այն ժամանակուայ վարժապետների նման իւր աշակերտից պահանջում էր երկարամեայ հլու ծառայութիւն: Մխիթարը Կարինում գնում է պատահաբար «Նոսիումն քրիստոնէական» անունով կաթողիկական գիրքը, երբ Միքայէլը տեսնում է նրան այդ գիրքը կարդալիս՝ սաստիկ կատաղում է և պահանջում նրանից 12 տարւայ ծառայութիւն՝ վարդապետ ձեռնադրելու համար: Նոյն քաղաքում մի օր մի ճիզովիթ կրօնաւոր այցելութեան է գալիս Միքայէլին, ըայց նրան տանը չգտնելով՝ երկար խօսակցում է Մխիթարի հետ և առաջին անգամ գցում նրա սրտում լատինականութեան սերմերը:

Կարինից եկան Էջմիածին. Մխիթարը մնաց Միքայէլի մօտ ծառայութեան, միևնոյն ժամանակ ասնելով եկեղեցական սպասաւորութիւն և այդինքն մշակութիւն:

Սոսկալի էր այն ժամանակի փոքրաւորների դրութիւնը. վաղ առաւօտից զարթնելով եկեղեցի վազել փոխասացութեան ու սաղմոս քաղելու համար, ծառայել ամբողջ օրը վարդապետին՝ նորա ամենադոյզն ցանկութիւնն էլ գոհացնել ջանալով, անքուն լինել գիշերն ամբողջ, որպէսզի վարդապետի յանկարծական մի հրամանը կատարուի, աւելացնենք դրա վրայ և այդինքն մշակութիւնը ամառնային այն սոսկալի տաքին, որ յանձնուեց Մխիթարին, և ահա կուենանք մի փոքր պատկեր այն չարչարանքներից որոնց ենթարկուեց Մխիթարը Էջմիածնում երկար ժամանակ:

Վերջապէս 10 տարեկան էր, երբ շգիմանալով լմանա-  
կան կեանքի տարազայման ճգնութեանց՝ սաացաւ  
սաստիկ աչքացաւ:

Նոյն միջոցին Մխիթարի ծանօթ հայրենակիցներ-  
րից մէկը եկաւ. էջմիածին՝ Սեան ուխտի երթալու  
ցանկութեամբ: Մխիթարը՝ որ զգուել էր իւր գփուար  
և անտանելի ծառայութիւնից, որ նեղուած էր սաս-  
տիկ աչքացուից, յարմար առիթ համարեց և լմանքից  
փախչելով Սեան անցաւ՝ անապատական գառնալու,  
այն յոյսով որ էջմիածնում չգտած ուսումնասէր ու  
ճշմարիտ կրօնատէր և կեղեցականներին այնտեղ կը  
գտնէ: Բայց իր փնտռածը այստեղ էլ չգտաւ. և  
մինչդեռ յուսահատ ու վշտալից աղօթում էր Ս. Առջի  
պատկերի առաջ, աստուածային ներշնչմամբ լցուած  
մի ակտիք տեսաւ. Ս. Առջան իր հրեշտակներով խջճում  
է երկըր. Մխիթարը յայտնում է նրան իւր բարի  
ցանկութիւնները և Նա խոստանում է կատարել:  
Այս ակտիքից քաջախելուած նա ուղեց վերադառնալ  
իր հայրենիքը, իր հայրենակից հետ եկաւ. նրեան և  
կարաւանով ճանապարհ ընկաւ դէպի Կարին: Յասենի  
Մելքիսեթ եպիսկոպոսը պահեց նրան իր մօտ և լմանքի  
զղորոյում վարժապետ դարձրեց. այդ տեղ Մխիթարը  
ծառայեց սիրով ու հաւատարմութեամբ. եպիսկոպոսի  
օգնականն էր նա ամէն բանում, ընկերանում էր նրան՝  
նրա հոգեւոր այցելութեանց ժամանակ, նրա հրամա-  
նով քարոզ էր խօսում եկեղեցիներում և ժողովուրդը  
սիրով լսում էր նրան:

17 ամիս մնալով Բասենում՝ Մխիթարը անցաւ  
Կարին՝ հայրենիք վերադառնալու նպատակով: Կարի-  
նում նա իջնանից Պօղոս անունով անձի մօտ, որ  
չուովը տեսած լինելով՝ պատմեց նրան այդ քաղաքի  
պերճութիւնն ու փառքերը, և տուաւ նրան Կղեմէս

Գալանտսի «Միաբանութիւն Հայ եկեղեցւոյն ընդ Ս. եկեղեցւոյն Հռովմայ» թունդ կաթողիկոսական գիրքը: Սա երկրորդ դիտաւոր քարոզութիւնն էր Մխիթարի համար. այստեղ նա վճռեց վերջապէս երթալ Հռոմ, արեւմուտքի այդ նշանաւոր կենտրոնը, ուր յոյս ունէր գտնելու բարձրագոյն դիտութիւնը, որ ի դուր էր փնտռում Հայոց խաւար աշխարհում:

Սեբաստիա դառնալով դարձեալ մտաւ Ս. Նշան, ուր մնաց 8 ամիս. այնուհետև Մխիթարի աչքերը կուրացան և նա վանքը թողնելով տուն դարձաւ. վեց ամիս կոյր մնալուց յետոյ Մխիթարը լաւացաւ և նորից վանք մտաւ: Այս միջոցին Եւզոպիացի Յովհան վարդապետը ուսում առնելու համար Սեբաստիա գալով՝ ուզում էր Երուսաղէմ ուխտի երթալ: Մխիթարը որ ցանկանում էր Հռոմ երթալ, ընկերացաւ նրան այն մտադրութեամբ որ ճանապարհին կը համոզէ նրան Հռովմ երթալ: Մալաթիոյ մօտ Զրախեղդ լինելու վտանգից հազիւ ազատուած եկան Հալէք, ուր մնացին 3 ամիս. Մխիթարը ծանօթացաւ տեղացի լատին քահանայի հետ, որոնց միշտ տեսութեան էր դնում: Նոյն քաղաքումն էր ճիզվիտ Անտօն վարդապետ՝ քարոզիչ Արևելեան Հնդկաստանի. Մխիթարը բարեկամացաւ սրա հետ և միշտ երթևեկում էր նրա մօտ լսելու նրա քարոզութիւնները. երբ Մխիթարը յայտնեց նրան թէ ինքը մեծ փափագ ունի Հռոմ երթալու՝ վարդապետը հակառակեց, ասելով թէ իր ունեցած ուսումն արդէն բաւական է և թէ Երուսալոմ այլալեզու ցեղերի մէջ նա կը կորչէր: Երբ Մխիթարը շատ պնդեց, վարդապետը տուաւ յանձնարարականներ Հռովմի ճիզվիտական ընկերութեան դիտաւորին:

Այնուհետև Մխիթարն ու Յովհանն վարդապետը

ճանապարհ ընկան դէպի Աղէքսանդրիա, այստեղից էլ Կիպրոս։ Շողենաւումն էր գտնուում Սսի Գրիգոր Բ. Պիժակ կաթողիկոսը, որ անկարգ վարքի համար քշուելով դահից, դիմում էր Հռոմ՝ իր մի եպիսկոպոսի հետ՝ պապից օգնութիւն խնդրելու։ Մտածելով թէ սարկաւազին ու վարդապետին էլ հետ առնելով՝ աւելի շքով կարող է մտնել Հռոմ, համոզեց նրանց և իր կողմը քաշեց։ Հասնելով Կիպրոս՝ Հայոց ճգնաւորաց վանքում կաթողիկոսը Յովնանին եպիսկոպոս է օժում և թէև Միսիթարին էլ ուղում է վարդապետ ձեռնագրել, բայց սա հրաժարւում է։ Նրք պատրաստւում են մեկնել՝ Միսիթարը հիւանդանալով մնում է հայոց վանքը, ուր 2 ամիս սաստիկ տառապում է հիւանդութիւնից՝ ըստբովին անսնունդ, անխնամ և անօգնական։

Քիչ լաւանալուց յետոյ Միսիթարը վերադառնում է Սեբաստիա և նորից մտնում Ս. Նշանի վանքը, այստեղ Սողոմոնի առակները վերածում է ոտանաւորի, որ իր թշնամիներից մէկը՝ Մառուկ արեղայ՝ գողանալով այրում է։ 2մեռը նորից է հիւանդանում Միսիթարը և դարնան լաւանալուց յետոյ՝ 20 տարեկան հասակում ձեռնագրւում է արեղայ։ Այնուհետև նա աշխատում է աշակերաններ ժողովել. համոզում է նշանուած մի երիտասարդի թողնել իր նշանածին և կրօնաւոր դառնալ. երիտասարդը լսում է նրան, որի վրայ ծնողները բարկանալով հալածում են երկուսին էլ։ Միսիթարը այս միջոցին լսում է թէ Պօլսում է գտնուում Հռոմի աշակերտ և նշանաւոր գիւնահան Կարնեցի Խաչատուր վարդապետը, և ճանապարհ է ընկնում, գալիս նրա մօտ. Միսիթարը առաջարկում է նրա առաջնորդութեամբ կազմել քարոզիչներ ի մի խումբ որ պիտի աշխատէր ազգը լու-

աւարելու: Առշատուրը մերժում է: Մխիթարը չե-  
ջուսահատուում: մի ժամանակ սրաքիարքի կարգա-  
դրութեամբ նա քարոզիչ է նշանակուում Ս. Առաւու-  
րիչ եկեղեցում, միւս կողմից ժողովարարութիւն է  
անում որպէսզէ զնայ Օլիթի և այնտեղ պատրաստե-  
լիք ցանկացած քարոզիչների խումբը: Արքայազն էր  
երկու աշակերտների հետ նա է նստում Օլիթի եր-  
թալու համար, բայց նաև մէջ ծագած ժամատխար  
և ծովի սասակի աշկիծութիւնը ստիպում են նրան  
անցնել Մարտուան, Ամասիա, Նեղահիտ և վերջապէս  
Կարին, ուր Կարմիր վանքում վարժապետ է դառ-  
նում: Ազատ ժամերում նա պատրաստում էր դա-  
նազան կրօնական գործեր, սրանցից նշանաւոր է  
Բիբայան կոչուած համարաբանը: 23 տարեկան  
հասակում վանքի առաջնորդը ապիւ է նրան վար-  
դապետական դաւադան:

Սրանից յետոյ Մխիթարը առաջարկեց առաջ-  
նորդին պտտցստանել միաբանական ուխտ և երբ նա  
չհամաձայնեց, հետացաւ վանքից և անցաւ Կարին  
քարոզչութեամբ սրաքապելու:

Անհանդիսա Մխիթարը նորից անմիայ ելաւ Պո-  
լիս- բայց այս անգամ կեանքը շտա խոսն վիճակի  
մէջ էր Պոլսում: լատին կրօնաւարները կարողացել էին  
հայ հեռակորդներ որսալ, որնը հրատարակու հայ-  
հայում էին մեր եկեղեցին ու որբութիւնները: Պատ-  
րիարքը և ուղղափառ հայ ժողովուրդը կառավարու-  
թեան պաշտպանութեամբ հալածանք էին հանել  
հերձուածողների դէմ: նրանց բանտարկում, աքտորում  
ու կախազան էին բարձրացնում: Մխիթարը որ այն  
ժամանակ լատիներէնից թարգմանուած չորս գրքեր  
էր հրատարակել և Պեղալում մի սրահի մէջ աշա-  
կերտներ էր հաւարում դաղանի կերպով, կասկածուե-

լով կաթողիկոսական մեջ՝ ստիպուած է փախչել և ապաստանել Նապոլիոնեաների վանքը՝ ֆրանսիական զեօպանի հովանու տակ։ Այստեղ 1701 թուի սեպտ. 8-ին Ա. Աստուածածնի ծննդեան օրը հաւարելով նա իր ընտր աշակերաններին, թուով 10 հոգի, հիմնում է Ա. Աստուածածնայ ուխտը, որ պիտի հաստատուէր Մոսկուսում և որի գլուխն էր ինքը Մխիթարը։ Նա կարողանում է այս աշակերաններից մի մասը ուղարկել Մոսկա։ Նոյն ժամանակ պատրիարքը համոզում է կապուչինների վանահօրը որ Մխիթարին իրեն յանձնեն. այս լսելով Մխիթարը՝ փախչում է վանքից և մի քանի օր այս ու այնտեղ թաղնուելուց յետոյ՝ վաճառականի տարազով հողիւ կարողանում է փախչել ու ապաստանել Զմիւռնիա։ Փաղաւորից հրոյարտակ է դալիս այստեղ էլ նրան ձերբակալելու համար. Մխիթարը նաւ է նստում և փախչում, սաստիկ փոթորիկը նրան հանում է Զանթա կղզին, որտեղից դնում է Մոսկա։

Այն ժամանակ Մոսկան Վենետիկի հասարակապետութեան ձեռքն էր. Մխիթարը յաջողեցաւ կառաւարութիւնից ստանալ Մեթոնի գղեակը, երկու դիւղ և բնակութեան համար մի մեծ տուն. այստեղ հաստատեց նա իր միաբանութիւնը և յաջողեցաւ հաստատութեան թուղթ ստանալ պապից։ Կլիմայի անյարմարութեան և զբամի պակասութեան պատճառաւ վանքը աննկարագրելի նեղութիւններ կրելուց յետոյ՝ Մխիթարը վերջապէս կարողացաւ վայելել իշխանի շնորհներն ու բարեկամութիւնը, և նրա միջոցով զբամական օթանդակութիւն ստանալ կառավարութիւնից. իր ճարտարապետութեամբ Մեթոնի գղեակի մէջ հիմնեց մենաստան, եկեղեցի, հրապարակ, պարտէզ և ձիթաստան (1708 թ.)։

Յունաստանում Մխիթարը մնաց 12 տարի և մինչդեռ կարողացել էր նա վանքն ու միաբանութիւնը կարգաւորել, ապրուստի հարկաւոր միջոցներ հայթայթել, իրենց շնորհուած հողերը մշակել ու ձիթենիներէ բերքին էին սպասում, յանկարծ սկսաւ Սամանցոց արշաւանքը Վենետիկեցոց վրայ. Մոռան առնուեցաւ: Մեթոնի գղեակը քարուքանդ եղաւ և Մխիթարը ստիպուեց որտէ մեծադոյն կսկիծով թողնել իր այնքան երկար աշխատութեան արդիւնքը և իր աշակերաններէ հետ փախչել Վենետիկ, ուր ցանկութիւն ունէր նոր վանք հիմնելու (1715 թ.):

Շնորհիւ Մոռայից փախած Վենետիկեցի իշխանների աջակցութեան՝ նա դիմեց ծերակոյտին, բայց օրէնքը թոյլ չէր տալիս քաղաքում հիմնել նոր մենաստան, Մխիթարը չյուսահատուեց, աշխատեց և վերջապէս յաջողեցաւ ձեռք բերել Վենետիկի գիմացը քաղաքից դուրս գտնուած աննշան ու անընակ կղզին, ուր կար Ս. Ղազարի անունով եկեղեցին, որի համար և կղզին կոչուում էր Ս. Ղազարի կղզի:

1717 թուին Մխիթարը ձեռք ձգելով հրովարտակը, սեպտ. 8-ին մտաւ Ս. Ղազար և հիմնեց իր վանքը: Շուտով չարախօսները ամբաստանեցին թէ նա հայ է և պէտք եղածի չափ կաթոլիկ չէ. Մխիթարը ստիպուեց դնալ ձուտ, դիմել պապական ժողովին և սյոսեղ քննուելուց յետոյ արդարանալով ետ դարձաւ մեծամեծ պատիւներով ու շնորհներով: Նորահաստատ վանքի մէջ հաւաքեց նա իր աշակերանները, բացաւ դպրոց, ինքը դարձաւ ուսուցիչ ու վանահայր, և քիչ ժամանակի մէջ տուաւ նրան շատ կարևոր դերք, որպիսին չունէր այն ժամանակ ոչ մի հայ վանք: Քոստա տարւայ մէջ (1740 թուին) աւարտեց նա վանքի դասագան մասերի շինութիւնը և ինք տարի յետոյ 1749 թ.

ապրիլ 27-ին վախճանու ևց ծանր հիւանդութեամբ  
74 տարեկան հասակում:

Ինչպէս երևում է վերոյիշեալ կենսադրական  
գծերից, Մխիթարը տոկուն, չարքաշ ու աննկուն  
ընաւորութեամբ մի մարդ էր. կեանքի բազմաթիւ  
անյաջող հանգամանքները, տառապանքը, ձախորդու-  
թիւնները և վերջապէս հայոց անարդար հալածանքը  
չհասցըրին նրան և նա երբեք յետ չկանգնեց իրան  
ողևորող գաղափարից: Եր այս աննկուն ընաւորու-  
թեան հետ Մխիթարը ունէր մարմնի ու գէմքի գե-  
ղեցկութիւն, պատկառելի ու քաղցր արտաքին և  
զարմանալի քաղցր ընաւորութիւն. իր համբերու-  
թիւնը, աշխատասիրութիւնը, զգուշութիւնը, հեռա-  
ակասութիւնը, ինչպէս և բարութիւնն ու հեղութիւնը  
յատիշտակում էին բոլորի սրտերը և այս յատկութեանց  
պէտք է վերադրել այն հանգամանքը, որ 60-ի չափ  
հայ երիտասարդներ մտնանում են առւն, տեղ, հայ-  
րենիք և այնպիսի դառն նեղութեանց մէջ անդամ  
առանց յուսահատուելու՝ անբաժան են մնում իրենց  
մեծ վարժապետից:

Մխիթարի մեծագոյն յատկութիւնը իր ուսում-  
նասիրութիւնն էր. ուսման ու գիտութեան այս ծա-  
բաւն է որ թափառել առաւ նրան Սեբաստիայից  
Կարին, Կարինից Եջմիածին, այտեղից Սևան, Երևան,  
Հալէք, Պոլիս, Կիպրոս ևն: Մենք տեսնում ենք թէ  
հենց սկզբից այս ուսումնասիրութեան կից է նաև  
կրօնական ոգի. բայց անշուշտ այս չէ շարժառիթը  
Մխիթարի այնքան թափառական ու ճգնական կեան-  
քին, սրովհետև կրօնաւոր լինելու կամ կրօնական  
միաբանութիւն հաստատուելու համար բաւական էր  
Հայաստանի վանքերից որեւիցէ մէկը: Նա ուսում էր

փնտռում. և չհաւանելով ժամանակակից աղէտ հայ կրօնաւորներին ու լսելով Հոռոմի կրօնաւորների դիտաւթեան մեծ համբարը՝ դէպի այնտեղ էր ձգտում: Նա տեսնում էր հայ աշխարհի վրայ տարածուած խաւարք և ուղում էր հիմնել ուսումնական միաբանութիւն՝ գիտուններ և քարոզիչներ պատրաստելու համար, որոնք այդ խաւար հորիզոնի մէջ լոյս պիտի տարածէին: Այս նպատակի գործադրութեան համար դիմեց նա Պօլիս Խաչատուր վարդապետին՝ ճանապարհուեց դէպի Օլթի անցաւ Կարնոյ Կարմիր վանքը, յետոյ Պօլիս, և ասէնից յետոյ յաջողուեց իրեն Ա. Ղազարում հիմնել իր ցանկացած ուսումնական միաբանութիւնը:

Մխիթարի կր յնական համոզմունքի մասին տիրում է երկու տարբեր կարծիք. նախկին Վենետիկեան Գարբիէ կայս. Այվաղեան, ինչպէս և Նազարեան, Երիցեան ևն այս կարծիքն ունին թէ Մխիթարը ջերմեռանդ կաթոլիկ չէր. և նրա կաթոլիկութիւնը ձեռական ու անուանական էր: Այս բանին ապացոյց է ծառայում այն հանգամանքը, որ նա միշտ հակառակորդ եղաւ կօլէժցիներին՝ որոնք որտանց ու բացած հերձուածող հայեր էին. երկրորդ՝ հետք նա պահեց հայ եպիսկոպոս՝ իր աշակերտներին վարդապետ ձեռնադրելու համար. եթէ նա յարած լինէր կաթոլիկութեան՝ պէտք չունէր բնաւ հայ եպիսկոպոսի և իր ցանկութիւնը կարող էր կատարել լատին եպիսկոպոսների միջոցով. երրորդ՝ Մեթոնի եկեղեցին օծելիս շհրաւիրեց լատին եպիսկոպոսին և միշտ՝ ինչպէս ինքը, նոյնպէս և աշակերտները՝ հաւատարիմ մնացին հայկական եկեղեցու ծիսակատարութեանց:

Պօլսում Մխիթարի մասին եղած կատկածը կաթոլիկութեան մէջ և սորա հետեանօք յարուցուած

հալածանքը արդարացի չէին. բայց այս անարդար հալածանքը ստիպեց նրան փախչել Եւրոպա, ուր իր ուսումնական միաբանութիւնը հաստատելու համար ուրիշ միջոց չկար, բայց եթէ ընդունել առերես կաթողիկոսական լուծը, զո՞հ բերելով իր դաւանութեան արատքին ձեւերը: Այս կեղծիքը քաղաքագիտական մի հնարք էր, որին հետեւեցին Մխիթարեանց առաջին սերունդները մեծ գաղանապահութեամբ: Եկաւ ժամանակ երբ Ա. Կենտակեցի նշանաւոր վարդապետները (Հ. Միք. Զամչեան, Հ. Ղ. Ինժիճեան, Հ. Մ. Աւետիբեան ևն) առաջնորդութեամբ արքա հայր Ադանց Քիւմբիլի՝ բանակցութեամբ ետ մտան Պօլսոյ պատրիարքի հետ և ուզում էին միաբանութիւնը միացնել Էջմիածնի կաթողիկոսութեան կամ եթէ այս մասին արդեւիքի հանդիպէին պապական իշխանութեան կողմից՝ փոխադրել վանքը Անդլիա: Նոյն վարդապետները Պօլսում անկից տուն թափառելով քարոզում էին կաթողիկոս դարձած հայերին՝ չթողնել ուղղափառ կրօնը և նորից վերագառնալ Հայաստանեայց եկեղեցու ծոցը: Աննացոց և Կոլիճոց լրակսութեամբ ու մատնութեամբ այս բանը լսեց պապը և ճարպիկ քաղաքականութեամբ շուտով նորա առաջին առաւ: Այնուհետև Ա. Կենտակի միաբանները մտապահ իրենց հիմնադրի և մեծ հայրերի քաղաքականութիւնը և յաջորդ սերունդները կամաց կամաց յարուեցին գուռ կաթողիկոսութեան:

Այս կարծիքին հակառակ են ուրիշները և համարում են Մխիթարին ջերմեռանդ հաւատացեալ կաթողիկոս. Աէօն ընտրոշում է նրան գուռ հայ-կաթողիկոս բառով, այսինքն թէ նա թէև սրտանց ընդունում էր պապական կրօնը, բայց չէր ուրանում բնաւ հայ ազգութիւնը, ինչպէս ասում էին «գողիճցի» կոչուած

կաթոլիկները. ուրիշ խօսքով Մխիթարը աղգով հայ էր, կրօնքով հռոմիւնական, աղղի և կրօնի տարբերութիւնը կարողացել էր քմբռնել նա՝ գուցէ առաջինը լինելով հայերի մէջ: Աէօն կարծու՛մ է թէ Մխիթարի պէս ջերմեռանդ հաւատացեալ մարդը չէր կարող այնքան երկար տարիներ կեղծել ու խաբել ըստըինս: Արա դէ՛մ կարելի է առարկել թէ ինչպէս նոյն Մխիթարը կարողացաւ կեղծել լեզուի հարցում և մինչև իր մահը լատինարանութեան հողմնակից ցոյց տուաւ իրան, մինչդեռ ոխերիմ հակառակորդ էր, ինչպէս կը տեսնենք քիչ յետոյ: Այս հարցի վերջնական լուսարանութիւնը դեռ կարօտ է ժամանակի:

Մխիթարի կարեւոր դերը մեր գրականութեան մէջ՝ հայերէն լեզուի նախկին վիճակի վերականգնումն է: Ինչպէս դիտենք ծ.Գ. զարկից յետոյ մինչև Մխիթարի ժամանակը մեր լեզուն հասել էր ծայրագոյն անկեալ վիճակի. լատինարանութիւնը, գրաբարի ազդեցութիւնը և կրթութեան մեծ պակասութիւնը սակզծել էին մի ամենագոհնիկ գրականութիւն: Մխիթարը մտադիր եղաւ նախ մտքել այս լեզուն իր ըստը գոհնիութիւններից և հայերէնի նախնական վիճակը վերականգնել ըստ կարելւոյն:

Եւայց Մխիթարը կաթոլիկ էր և կաթոլիկութեան պաշտօնական լեզուն այն ժամանակ մնայն լատինարան աղքատ հայերէնն էր. Մխիթարն էլ պարտական էր այն լեզուով գրել, ապա թէ ոչ պապի առջև կամբաստանուէր նա իբրև հերետիկոս: Աւստի նա խո՛հեմութիւն համարեց՝ ինչպէս կրօնական խնդրում, նոյնպէս և այստեղ ձեռք առնել կեղծիքի քաղաքականութիւնը, հետեւել նախ այս անհեթեթ լեզուին, և յետոյ քիչ քիչ աշխատել մտքել նրան իւր կեղտե-

րից: Նա իւր աշակերտներին պատուիրեց շարունակել իր գործը. և իրօք մենք տեսնում ենք թէ ինչպէս նորա շարունակում են սկսուած գործը և հետզհետէ մաքրում այլանդակուած լեզուն. այնպէս որ կարող ենք ասել թէ Ասիերեանի և Չամչեանի ժամանակ այլ ևս լատինաբանութիւն չկայ:

Մխիթարի գրական գործերը բաւական շատ են. սորա բաժանում են երեք կարգի.

1. Կրօնական գրուածներ. Մխիթարը իր գործունէութիւնն սկսում է լատիներէնից թարգմանուած կրօնական գրքեր հրատարակելով. բայց որովհետև սկզբում այնպէս տեղեակ չէր ինքը լատիներէնի՝ ուստի հրատարակում է ուրիշների թարգմանութիւնները՝ իրեն վերապահելով որբադրելու և մաքուր հայերէնի վերածելու իրաւունքը: Երբ լատիներէնի մէջ յառաջանում է, այն ժամանակ հրատարակում է նաև իր թարգմանութիւնները: Այս հրատարակութեանց գումարումը 16 է, ինչպէս Աղբիւր բարի, Գրախոհ հոգւոյ, Խթան զղջման ևն: Բուն Մխիթարի հեղինակութիւններն են Մեկնութիւն Աւետարանին Մաթթէոսի, Մեկնութիւն ժողովոյի, Մեկնութիւն Հին և Նոր կտակարանի (անսխալ), որոնք միւսների հետ զուրկ են գրականութեան համար որևէ նշանակութիւնից:

2. Նախնետաց եկեղեցական գրեթէ հրատարակուածներ. այնպէս են Աւետարան, Սաղմոսարան, Խորհրդատետր, ժամագիրք և այդ բոլորի պատկն Էզոդ մեծահատոր պատկերազարդ Աստուածաշունչը, որը Մխիթարը վերականգնում է գանազան հին ձևապրերից և հաւատարիմ մ'նալով սակեղէն դարու լեզուին՝ հրատարակում է առանց լատինաբանութեան:

3. Հայկաբանական գրեր. Մխիթարը հրատարակում է նախ երկու քերականութիւն՝ մին՝ գրաբարի և միւսը՝ աշխարհաբարի. վերջինս տանկերէն բացատրութեամբ. սոցանկից դուրս թողնում է նաև մի ուրիշ Քերականութիւն՝ աշխարհաբար լեզուի և Համառոտ ճարտասանութիւն, որոնք մ'նում են անտիպ: Բայց Մխիթարի գլուխ գործոցն է լինում Հայկաղեան բառարանը, որ պարունակում է 3 մաս. գրաբարից աշխարհաբար, աշխարհաբարից գրաբար և յատուկ անուանց բառարան: Այս պատկառելի ու տաժանելի գործը՝ որի վրայ աշխատել են մէջ միայն Մխիթարը, այլ և իր բաղմամբիւ աշակերտները, հոթողական մի երկ է Մխիթարի անունն անմոռաց պահելու համար և հայերէն լեզուի առաջին բառարանն է. նրա վրայ հիմնուեց Վենետիկի նոր Հայկաղեան բառարանը որ Հայոց մեծագոյն ու պատկառելի աշխատութիւնն է:

Ինչպէս տեսնում ենք սոցա մէջ աչքի ընկնող ու հիմնաւոր աշխատութիւնները հայկաբանական գործերն են. նոյն իսկ նախնեաց գործերի հրատարակութիւնը, յատկապէս Ս. Գիրքը, նոյնպէս հայկաբանական է. և այստեղ երևան է գալիս Մխիթարի բուն նպատակը, որ էր սրբագրել աղճատուած հայերէնը, ջնջել լատինաբանութեան կեղտերը և հին ու մաքուր հայերէնը վերականգնել Հայոց մէջ:

Մխիթարը բանաստեղծութիւններ էլ ունի, որոնք հրատարակուած են Տաղարան անունով հատորի մէջ. բայց ըուրը այս ստանաւորներն մէջ զգում ենք աւելնի բացակայութիւնը. կան նաև Սաղմոսի առակների տաղտշարիութիւնը, որ գրել է Սերաստիայում, և Շարականներ՝ որոնք մինչև հիմա երգուում են Վենետիկեցոյ մէջ: Մխիթարը իբրև կրօնաւոր, մանաւանդ իբրև վանքի մարդ՝ չէր կարող սրանից աւելին անել:

Անտես անեղով Մխիթարի այս գրական, կրօնական ու քարոզչական արժանիքները, մի խոշոր արժանիք միայն կը սրանք իրեն.— Հայ շեղուի ու դրականութեան վերանորոգութիւնը:

## 2. ՏԵՍՈՒԹԻՒՆ ՎԵՆԵՏԿԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

1] Անտեսի վանքը 200 տարւոյ գոյութիւն ունի. իւր այդ ամբողջ 200 տարւոյ գոյութեան մէջ նա տուել է մեզ մօտ հարիւր հեղինակ և մօտ հազար հասարակական. մի պատկառելի դամար, որ ըստ երիցեանի կաղմեղով բոլոր հոյերէն դրքերի մօտ չորրորդ մասը, ամենապատուաւոր անգն է բանում վերջի դարերի մեր մտաւոր կեանքի մէջ: Այս ամբողջ աշխատութիւնները կարող ենք բաժանել 6 մասի.

1. Կրօնական եւ առու ամաբանական գրութիւններ. որոնք առհասարակ թարգմանութիւն են և նպատակ ունին կաթողիկոսութիւն քարոզելու. այս աշխատութիւնները Վենետիկ հրատարակութեանց մէջ կաղմում են մեծազոյն թիւը (ամբողջ հրատարակութեանց քառորդը) և գրականութեան համար ոչ մի արժէք չունին:

2. Առումնական. այս ճիւղին են պատկանում լեզուագիտութեան, բնական գիտութեանց, արուեստների ևն. նուիրում մեծ ու փոքր աշխատութիւնները, ինչ. գասագրքեր, բառարաններ, քերականութիւններ ևն, որոնք նմանապէս գործ չունին գրականութեան պատմութեան մէջ:

3. Թար գրականութեանց բարգմանութիւններ. Վենետիկեցի բոլոր հեղինակները ջանք են գործ գրել օտար գրականութիւնները մեզ ծանօթացնելու. նոր

Թարգմանել են յոյն, լատին, Ֆրանսիական, Իտալական և մասամբ անգլիական գրականութեան ընդհանր կարևոր գործերը, ինչպէս են Հոմերոսի Արիստոտէլի, Պլատոնի, Եսքիլէսի, Եւրիպիդէսի, Դեմոսթենէսի, Մոլիոկլի, Եպիկտետի, Պլուտարքոսի, Վերգիլիոսի, Սալլուստիոսի. Կիկերոնի, Կեսարի, Տակիտոսի, Սենեկայի, Ուլբատիոսի, Փեդրոսի, Ռասինի, Կորնէլի, Բոսիւէի, Ֆէնէլոնի, Դանտէի, Տասսօյի, Մանցոնիի, Միլտոնի, Բայրոնի երկերը: Դժբախտաբար Վենետիկեցիք սահմանափակուել են միայն դասական շրջանի մէջ և նոր ու նորագոյն ազատ գրականութիւնն իր խոյն են տուել: Այս ընդհանր աշխատութիւնները թէև առանձին խնամքով թարգմանուած և նշանաւոր իրենց ճշտութեան կողմից, սակայն գրաբար լինելով՝ նշանակութիւն ունեցան միայն ժՎ դարում և ժՔ դարի հազիւ մինչև կէսը: Այս դարերի հայ սերունդը կրթուեցաւ Վենետիկեցոց յիշեալ թարգմանութեանց շնորհիւ և նոցա մէջ դարգացաւ եւրոպական գրականութեան հետևողութեամբ արդի գրականութեան առաջին ծիւղերը: Բայց այժմ նոքա արդէն մոռացուած են իրենց լեզուի և իրենց դասական ուղղութեան պատճառաւ Վենետիկեցիք թէև այժմ էլ աշխատում են աշխարհաբար թարգմանութիւններ անել, բայց նոցա աշխարհաբարը երբեք չի յաջողում, որովհետև ուսման ժամանակից կամ գրաբարախառն աղաւաղ լեզուից այն կողմ չի անցնում:

4. Հին հայ մասնագրութեանց հրատարակութիւնը այս տեսակէտից Վենետիկեցոց նշանակութիւնը անգր-նահատելի է. նոքա են որ առանձին ջանք գործ դրին հաւաքելու և հրատարակելու մեր հին մատենագրութեան թանկագին մնացորդները, և կարող ենք ասել թէ ընդհանր գլխաւոր երկերը հրատարակել են,

սկսած և դարեց մինչև ժ.Պ դարը:

5. Հայագիտական աշխատութիւններ. բացի հայ մատենագրութիւնից՝ վեներականները տուել են մեզ հայոց լեզուի, պատմութեան, մատենագրութեան պատմութեան, մատենագիտութեան, հնախօսութեան, Հայաստանի հին և նոր աշխարհագրութեան և այլ հայկական գիտութեանց մասին ամենակարևոր և ամենաընդարձակ գործերը. ինչպէս՝ Բագրատունու Ջարգացեւոց ֆերականութիւնը, Ինճիճեանի Հնախօսութիւնը և Հայաստանի Աշխարհագրութիւնը, Չամչեանի Հայոց Պատմութիւնը, Ալիշանի տեղագրութիւնները, Ջարջանալեանի Մատենագրութեան Պատմութիւնը և Մատենագիտութիւնը, Ա. գերեանի և իւր ընկերների հրատարակած Հայկազեան բառարանը և այլն:

Պէտք է խոստովանել սակայն թէ վեներականները չեն տուել մեզ իսկական նշանակութեամբ գրականութիւն. յայտնի հեղինակները որ ծաղկեցան ամբողջ 200 տարւայ ընթացքում՝ են Հ. Միքայէլ Չամչեան, Հ. Ղուկաս Ինճիճեան, Հ. Մկրտիչ Ա. գերեան, Հ. Արսէն Բագրատունի, Հ. Երուանդ Հիւրմիւզ, Հ. Ղևոնդ Ալիշան և Հ. Մանուէլ Քաջունի: Սոցանից գրական արժանիք ունեցողները միայն են Բագրատունի, Հիւրմիւզ և Ալիշան, մանաւանդ առաջինը և վերջինը, որոնց վերայ խօսելու ենք առանձնապէս:

Հ. Մ. Չամչեանի (1738—1823) ամէնից կարևոր գործեր են. 1. Քերականութիւն Հայկազեան լեզուի (1779). մինչև այն ժամանակ եղած քերականութիւնները լի էին հեղինակների կամայական սրբագրութիւններով, լատինաբանութեամբ և չէին ներկայացնում հայերէնի իսկական վիճակը. Չամչեանի քերա-

կանութիւնը սոցա մէջ թէ ամէնից ընդարձակն է և թէ ներկայացնում է մաքուր հայ լեզուն՝ առանց լատինարանութեան: Կա տարածուեց բոլոր հայերի մէջ և մինչև իսկ Ղենեակից դուրս ուրիշ քաղաքներում մի քանի անգամ տպագրուեց: Այդ դիրքը մեր հին սերնդի գոյրոցներում համարում էր ուսման բարձրագոյն շրջանը:

2. Պատմաբիւն Հայոց, 3 հատոր ընդարձակ աշխատութիւն, որ ամենամեծն է մինչև այսօր հրատատարահաւած բոլոր Հայոց պատմութեանց մէջ: Հեղինակը սկսում է Հայկից և հասցնում է մինչև 1784 թիւ բողոտուել է այն ժամանակ ծանօթ բոլոր հայ ազգիւրներից, գիմել է նաև սառ պատմադրներին: Չամչեանի պատմութիւնը երկու գլխաւոր պահասութիւն ունի. ա) այն որ մի քանի պատմադրները որոնք մեր պատմութեան համար շատ մեծ նշանակութիւն ունին, նկատելի են առնուած Չամչեանի պատմութեան մէջ, սրովհետև այն ժամանակ դեռ երկան չէին եկած: բ) Չամչեանը չի տուել մեզ քննական պատմութիւն. ամէն մի ազգիւր, հայ թէ սառ, ժամանակակից թէ յետին, միևնոյն նշանակութիւնն է ունեցել Չամչեանի համար, առանց ոչ գարձնելու նրա հարադատութեան և հաւատարմութեան վրայ: Մի խումբ պատմագրեր որ այսօր քննադատութեան աչքով վարկից ընկել են, հիմը են ծառայում Չամչեանի պատմութեան. իսկ ընկաւորական և հնադիտական արդիւնքներից ոչինչ չկայ Չամչեանում: Այս պատճառներով Չամչեանի աշխատութիւնը այժմ շատ է ընկել իւր արժանիքից և նոր քննական պատմութեան պէտք կայ: Աւելացնենք նաև այս հանգամանք որ Չամչեանը կաթողիկ լինելով և Հայոց պատմութիւնը հաշակցնել ուղելով կաթողիկութեան հետ, շատ դէպքեր լսեղա-

թիւրեւէ և այնպէս է դուրս բերել որ իբր թէ հայ ժողովուրդը և հայ կաթողիկէները կաթողիկէ են եղել և դաւանել պապի դերիշխանութիւնը: Այս ամէն պահասութիւններով միասին Չամշեանի գործը տակաւին միակն է մեր մէջ և բոլոր գրողները ստիպուած են նրա պատմութեանը գիմել: Չամշեանի պատմութեան շարունակութիւնը կազմել է Պօլսեցի Աւետիս վարժապետ Պէրպէրեան, որ սկսելով 1772 թուից հասցնում է մինչև 1860, Տաճկահայոց Սահմանադրութեան հաստատութիւնը:

3. Մեկնութիւն Սաղմոսաց (1815) ատոր հատոր ահագին աշխատութիւն, որի համար աւելորդ է ասել թէ այժմ ամէն նշանակութիւնից ընկած է:

2. Ղուկաս Ենծիճեան (1758—1833 Պօլսեցի) յայտնի է իբրև աշխարհագրագէտ, հնախօս և պատմաբան. իր կարևոր գործերն են.

1. Աթխարհագրութիւն չորից մասանց աթխարհի (1802—5), 11 հատոր, որոնցից վերջինը Նոր Հայաստան՝ մեր երկրի արդէ վիճակի նկարագրութիւնն է և մեծ կարևորութիւն ունի Հայաստանի աշխարհագրութեան համար:

2. Գաւապսում (1814), 8 հատոր աշխատութիւն, ընդամէնը 3500 էրես, որի մէջ պատմում է Նւբոպական տէրութիւնների ժամանակակից պատմութիւնը՝ 1750 թուից մինչև 1800:

3. Հին Հայաստան (1822), Հայաստանի աշխարհագրութիւնն է հին և միջին դարերում:

4. Հնախօսութիւն (1835), 3 հատոր ընդարձակ աշխատութիւն, որի մէջ պարզում է Հին Հայաստանի կեանքը, քաղաքական ու վարչական կազմակերպութիւնը, թագաւորի, նախարարների և քանակի դրու-

Թիւնը, մի խօսքով հին հայոց քաղաքակրթութեան պատմութիւնը: Այս գրուածքով Կնճիճեանը հիմ դրաւ մի կարևոր գիտութեան՝ հայկական հնախօսութեան, գրուածքը թէև ունի իր Ժամանակի պակասութիւնները, ինչպէս Աղամի խօսած լեզուն հայերէն լինելը, Գրախօսի Բարձր Հայոց մէջ գանուելը ևն, բայց նա մինչև այսօր էլ միակն է հայկական հնախօսութեան մէջ և իր պարունակած ընդարձակ ու կարևոր տեղեկութիւններով դեռ շատ գնահատելի:

**Հ. Մկրտիչ Աւզերեան** (1762—1854 Անկիւրացի)  
Նշանաւոր է իւր երկու հատոր հայերէն բառարանով, որ կոչուում է Նոր Հայկազեան Բառարան: Մխիթար Արքան, ինչպէս դիտենք, կազմել էր արդէն մի մեծ բառարան, բայց միաբանութիւնը ձեռք ձգելով հին հայ մատենագրութեան բազմաթիւ նոր ձեռագիրներ, կարողացաւ ծանօթանալ մեր լեզուի նորանոր բառերի հետ, այնպէս որ Մխիթարի աշխատութիւնը այլ ևս անբաւական էր. ուստի երեք հոգի, Ախալքեան, Միւրմէլեան և Աւզերեան գլուխ են կանգնում և միաբանութեան բոլոր աշակերտները հետ կազմում են յիշեալ բառարանը, որ նախ ունէր 12 հատոր, 12,000 երեսից բաղկացած, բայց շոխմանալով տարագրական մեծամեծ ծախսերին, տպում են նրանից միայն երկու հատոր՝ համառօտած ձևով (1836): Նոյն իսկ այս համառօտած ձևի տակ նոր Հայկազեան Բառարանը խիտ հոյակապ դործ է, արժանի հայոց անունը գիտնական կաճառների առաջ պատկառելի դարձնելու: Իւրաբանչիւր բառի դէմ դրուած է յունարէն, լատիներէն, աշխարհաբար, ռումիական և թուրքերէն հոմանիշները, հին մատենագրութիւնից բերուած բազմաթիւ վկայութիւններ ճշտում են բառի

նշանակու թիւնը. հնացած է միայն բառերի ստուգաբանութիւնը՝ որ այժմուայ գիտական պահանջներին բոլորովին չի համապատասխանում:

Նախորդից մի տասնեակ տարի յետոյ Հ. Աւգերեանը դարձեալ ձեռք բերելով նոր բառերի պաշար՝ կազմում է Առձեռն Բարարանը, որ թէև աւելի փոքր զերբով, բայց ունի 5000 բառ ու ոճ աւելի քան նախորդը:

Աւգերեանի երկրորդ մեծագոյն աշխատութիւնն է «Լիակատար Վարժ Երբոց» 12 հատոր, որանդ հարուած են Հայոց եկեղեցու մէջ տօնելի բոլոր սրբերի վկայաբանութիւնները:

Հ. Մանուէլ Բարունցի (1823—1904 Պօլսեցի) Վեներակի զինանկան միաբաններից է. նա մեզ առել է գրական զիտութեանց ընդարձակ հատորներ, ինչպէս Թուարանութիւն, Աշխարհագրութիւն, Հնախօտութիւն, Բնաբանութիւն կամ Ֆիզիքա, Բնալուծութիւն կամ Քիմիա, Մեքենադիտութիւն, Արուեստաբանութիւն, Երկրագործութիւն, Ներամարանութիւն, Մեղուաբուծութիւն, Պարտիզպանութիւն, Պաղարանութիւն: Իր ամենամեծ աշխատութիւնն է երկհատոր Բառգիրք Արուեստից և Վեղեցիկ Գպութեանց. այստեղ հաւաքել է նա զիտութեանց և գեղարուեստների վերաբերեալ բոլոր տեղեկութիւնները և կարող ենք ասել թէ հայերէն լեզուով եղած միակ հանրագիտակն է (encyclopédie), բայց դժբախտաբար բոլորն էլ գրաբար լեզուով գրուած լինելով՝ անմատչելի են հասարակութեան:

Հ. Սզուարդ Հիւրմիւզ (1799—1876 Պօլսեցի) նմանապէս Վեներակի նշանաւոր հայրերից է. նրա

գործերի մէջ աւելի շատ են ինքնագիր աշխատութիւնները և գրական գործերը, որոնք միայն կարող են անցնել գրականութեան պատմութեան մէջ:

Հիւրմիւղի ինքնագիր բանաստեղծական գործերն են.

1. Մաղբանք չափաւ՝ ստանաւոր աշօթքների հաւարածոյ.

2. Բութասանք Վրուրի Որմզղանայ. պարունակում է ծաղիկների և բոյսերի վրայ զանազան բանաստեղծութիւններ.

3. Յոբայ գիրք. Ս. Գրքից Յոր երանելու պատմութիւնն է որ սրտառուչ կերպով ստանաւորի է վերածել հայկական չափով.

4. Օրհնութիւնք հին կսակարանաց եւ ծաղկաբայի Սաղմոսաց. Ս. Գրքից, մասնաւորապէս Սաղմոսներից վերցրած հատուածներ են ստանաւորի վերածուած:

5. Վրուրի Որմզղանայ առակք. նոյնպէս ստանաւորի վերածուած առակներ և վերջապէս՝

6. Տաղք, որ հրատարակուած են Մխիթարեան տաղարանի երրորդ հատորում:

Կարելի է յիշել նաև Հիւրմիւղի աշխարհարարից գրաբար. Բառարանը, որ Մխիթար Աբբայի նոյն աշխատութեան աւելի կաատարեալ հրատարակութիւնն է:

Բացի սոցանից Հիւրմիւղ ունի շատ թարգմանութիւններ, ինչպէս են Բոսիւէի, Բուրդալուի և Մասիլիոնի բեմբասացութիւնները, Ռասինի Ֆեդրա և Գոթոզիա, Ռուէնի հնախօսութիւնը, Տակիտոսի Տարեգիրքը, Ֆենելոնի Տելեմաքը, Վերգիլիոսի հովուերգութիւններն ու Ենէականը, Բեռնարդէն-դը-Սէն-Պիէռի Պոզոս և Վերգիլէն, Մարկոս Արելիոսի թղթերը, Մետաստասիոսի սրբազան թատերերգութիւնները ևն:

Վենետիկի ամէնից մեծ, ամէնից արդիւնաւէտ

հայրերն են Բաղրատունի և Ալիշան. անցնենք խօսել սոցա մասին աւելի ընդարձակ և առանձին գլուխներով:

### 3. 2. ԱՐՍԷՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

(1790—1866)

Հ. Ե. Ղազիկեան.—Հ. Արսէն Կ. Բաղրատունի. տես Միսիթարեան Յորելեան, Չենետիկ 1901, էջ 126—146: Իոյն.—Բազմավէպ, 1899—1900: Գեղունի.—1900.

2. Արսէն Կամիտաս Բաղրատունին ծնուեց 1790 թ. օգոստոս 21 Պօլսում. նա համարուում է Բաղրատունեաց արնուական ցեղից. մայրը հիւանդ լինելով՝ առաջին օրից յանձնում է նրան յոյն ստնտուի, որով Բաղրատունին սկսում է սովորել յունարէնը իւր մայրենի լեզուի պէս: Մօրն սխտական զաւակը լինելով 11 տարեկան հասակում ուղարկուում է Վենետիկ աշակերտելու: Այստեղ առանձին ուէր ու եռանդ է ցոյց տալիս յոյն և լատին լեզուները սովորելու, այդ մատենագրութեանց գլուխ գործոցները միշտ կարդում է. Աստուածաշունչն ու Հոմերոսը ամբողջ 50 տարի ձեռքից բաց չէ թողել նա՝ մինչև իր կեանքի վերջին օրերը:

18 տարեկան հասակում նա արդէն լաւ գիտէր յունարէն, լատիներէն, իտալերէն և ֆրանսերէն լեզուները. կարգում էր Հոմերոս, Վերգիլիոս, Տասոս, Ռասին, Վաֆոնաէն և Ֆէնէլոն իրանց ընազիր լեզուներով. իւր այդ մատաղ հասակում սրտումը վառւում է բանաստեղծական հուրը և ցանկանում է նրանց հետևող լինել:

1810 թուին Բաղրատունին ձեռնադրուեցաւ վարդապետ և նշանակուեցաւ վանքում ուսուցիչ, աուաւ ուսեալ աշակերտներ: Եր ամէնից սիրելի պարագմունքն եղաւ հայ լեզուն, որի ուսումնասիրութեան համար բաւական չհամարելով Վենետիկի գրադարանի բաղմաթիւ ձեռագրերը, անցաւ Պարիզ՝ քննելու Ազգային գրադարանի ձեռագրերը և ծանօթանալու նոցա պարունակած գանձերին:

7 ամիս Պարիզում պարապելուց յետոյ՝ անցաւ Հռովմ, իրրե Մխիթարեան դործակալութեան օգնական: 1829 թուին Ռուսաստան գնաց իրրե օգնական և թարգման Յովհ. վ. Սերվիեանի ազգային խնդրի պատճառով Ռուսաց կառավարութեան առաջ. բայց այնտեղ Սերվիեանը հիւանդանալով մեռնում է և նրա պաշտօնը ինքն է կատարում յաջողութեամբ:

1831 թուին Բաղրատունին նշանակուեց Տիւզեան Յակոբ ամիրայի դրան երէց. այս պաշտօնով մնաց նա երկար տարիներ և սորանով առիթ ունեցաւ բաղմաթիւ բանաստեղծական ճանապարհորդութիւններ անելու Եւրոպայում և Եւրոպական Տաճկաստանում:

Բաղրատունին իր գրական գործունէութիւնը սկսաւ ընդարձակ ֆրանսերէն քերականութեան հրատարակութեամբ (1821), որից յետոյ ձեռնարկեց թարգմանել շատ օտար հեղինակներ: Առանձին սէր ունենալով քերթողական արուեստին՝ գրեց մի խումբ ոտանաւորներ, որոնցից լաւագոյններն են Եղերգ սօխակին, Գանգատ Պառնասեայ, Գատաստան Ապոլոնի, Յաղթանակ արդարոց, Գաշտիկն յաւար ևն: Բայց նա հետամուտ եղաւ մանաւանդ մի մեծ նորութեան հայ բանաստեղծական արուեստի մէջ, որի երկրորդ հիմնադիրը եղաւ ինքը.— գա հայկական շափն էր: Նա վաղուց նկատել էր որ յանգաւոր ու շափաւոր

աանաւորը յեախն դարերի դործ է և մաւել է մեր մէջ արարական ազգեցութեամբ. հին տաղարանների և շարականների մանրամասն քննութեամբ նա վերջապէս երևան է հանում մեր հայրերի բանաստեղծական արուեստը և այն չափը՝ որով նորա գրում էին հին ժամանակ: Այս չափը նորոգելու համար մեր մէջ իբր նմոյշ հրատարակում է նախ Վերգիլիոսի Մշակականքը և յետոյ Ուրասիոսի Քերթոզական Արուեստը (1847), որի յառաջաբանի մէջ երկարօրէն պարզում է իբր գիւտի հանդամանքները:

Հայկական չափը մեծ ընդունելութիւն դաւա հայոց մէջ և շատեր սկսան գրել ու թարգմանել այդ նոր չափով: Պէշիկթաշլեանը գիմում է նրան Վերգիլիոսի այս խօսքերով. «Չկէս փառաց իմ կապուեցեր»: Երբմեան Հայրիկը Հայաստանի խորքերից սքանչացում է յայնում այս թարգմանութեան վրայ և թէ ինքն էլ հեռակէլու է նոյն չափին:

Հայկական չափի ընդունելութիւնը խրախուսեց Բաղրատունուն և նա հրատարակեց վերջապէս Հայկ Իլըցակն խոշոր գիւցազներգութիւնը, որ իւր և Վենետիկի միտքանութեան, գուցէ և մեր ամբողջ դասական շրջանի դուրս գործոցն է և պսակել է հեղինակի անունը անմուսանալի յիշատակով: Դեռ Պօլսում եղած ժամանակ Բաղրատունին սկսել էր այդ աշխատութիւնը, բայց հրդեհը ոչնչացրել էր. բարեկամների խորհրանքով երկրորդ անգամ սկսում է նա և աւարտում այդ մեծ գործը՝ «Վրէժ լուծելու համար քառասուն դարերի լուսութեան»:

Ամէն հին ազգ ունեցել է իւր պատմական — կրօնական կեանքից մի խոշոր երկ՝ գիւցազներգութիւն կամ Ս. Գերգ. ինչպէս յոյները Համերոսը, լատինները Վերգիլիոսը, երբայեցիք Աստուածաշունչը, պարսիկ-

ները Ձենդ-Աւետանն ու Շահնամէն, հնդիկները Վեդան, Մահաբարատան և Ռամայանան, չինացիք Քինգերը ևն: Բագրատունին որ սնուել էր այսպիսի դասական հրաշակներաներով, նախանձով էր նայում նրանց վերայ և ցաւում էր որ հայոց այս հին ժողովուրդը մի այսպիսի հսկայ զիւցազներդութիւնից զուրկ է. և նա իր ձեռքով կանգնեց պատկառելի կոթողը հայի ու Հայկի անուան նուիրում:

Հայկ Դիւցազներդութիւնը (տպ. 1858) գրուած է Հովհերոսի և Վերգիլիոսի սճով, բաժանուած է 20 դրբի և պարունակում է 22,210 տող հայկական շափով: Այս տեղ պատմում է Հայկ նահապետի գործը և Հայ ազգի հիմնարկութիւնը. բայց որովհետեւ մեզ ծանօթ պատմութիւնը ինքնին շատ անբաւական էր այսպիսի մի զիւցազներդութիւն զուրո բերելու համար, ուստի հեղինակը օտկուում է շատ բան իրանից ստեղծել:

Ահաւասիկ Հայկի քսան դրբերի նիւթը համառօտ կերպով.

Նաւասարդի զիշերն էր՝ երբ Աստուածային հրամանով Հայկը որոշում է կռիւ մղել Բէլի գէմ. Վստամը որ Հայաստանի հին բնիկներից էր՝ համաձայն չէ կռուի որոշման. տօնական ուրախութեանց միջոցին գալիս է Բէլի պատգամաւորը և առաջարկելով իր պայմանները՝ պահանջում է հնազանդութիւն. Հայկ արհամարհում է պատգամաւորին (Դրուագ Ա.) և իսկոյն բանակն յարգարելով ճանապարհ է ընկնում: Սահմանապահ Վաղմոսը փախչելով Հայկի մօտ՝ յայտնում է թէ Բէլը գալիս է անհղ բանակով: Երկնքում ժողով է կազմուած առաջիկայ մեծ կռուի համար. Աստուած իր հրեշտակներով Հայկի կողմն է, իսկ զժոխքն ու տարտարոսի բոլոր սատանաները պաշտ-

պան են կանգնած Բէլլին: Կների ներշնչութեամբ  
Պատամը ապստամբում է Հայկի դէմ և սկսում է  
զրգուել ժողովուրդը նրա դէմ: Բէլլի բանակը յառա-  
ջանում է և Քուխ գետակի մօտ ճակատում. Վատամը  
առանց հրամանի ինքնադուխտ ճակատ է յարդարում  
և ջախջախում նրանց յառաջանպահ գունդը (Բ):  
Հետևեալ օրը Բէլլ մեծ ուժերով առաջանում է Հայկի  
վրայ. Հայոց կազմից Վատամ մենամարտութեան է  
գնում Բէլլի բանակը և իր ախոյեանի հետ երկար  
մենամարտութիւնից յետոյ՝ երկու կողմերն էլ ան-  
պարտելի են մնում (Գ): Բէլլ ուղարկում է նոր պատ-  
դամաւոր որ և առաջարկում է հաշտութիւն երեք  
պայմանով. ճանաչել Բէլլի իշխանութիւնը, պաշտել  
նրան իբր աստուած, տալ Հայկի դուստր Հայկանոյ-  
շին Բէլլին կնութեան: Պատգամաւորը Հայոց բանակը  
դալով՝ մանրամասն քարոզում է իրենց կրօնը. Հայկը  
մերժում է և նոյ նահապետը պատմելով ամբողջ  
Պատուածային մեծագործութիւնը՝ յորդորում է կռուել  
Բէլլի հետ (Դ): Հայկ պատմում է Սենաարի գաղթը,  
աշտարակաշինութիւնը, լեզուների խառնակութիւնը,  
Բէլլի ըմբոստութիւնը և իր հեռանալը Բէլլից: Վատամ  
յայտնապէս ապստամբում է Հայկի դէմ և Հայկը  
սաստիկ երդումներով թողնում է Վատամին առան-  
ձին կռուել Բէլլի հետ, պայմանով որ եթէ յաղթէ՝  
Հայկը թողնի Հայաստանը և հեռանայ (Ե): Վատամ  
ընդունում է և ճակատ յարդարում. բայց անգատա-  
բախ անձրերը խանդաբում է նրանց (Զ). միւս օրը  
սկսում է սոսկալի ճակատամարտը. Վատամի կազմը  
տկարանում է. Արմաշիս, Սոս և Արմենակ մոռանալով  
Հայկի նդովքը, խառնում են կռուի. բայց նոքա ևս  
վտանգի մէջ են. Հայկ ուղում է միջամտել, բայց մի  
բանակ ուղարկում է իր դէմ իր վրանում բռնելու

համար իրեն. Հայկ խորատակում է այդ բանակը (Է). Աբմենակի կողմը յաղթուում է, Հայկի որդին Հայկակ ընկնում է կուում և Նրա մայմնի վրայ մեծ սուգ է լինում. վասնդուից կացութեան մէջ ժողովուրդը աղերսում է Հայկին ու Վասամին հաշտուել միմեանց հետ և միացեալ ուժով ջախջախել Բէլի ուժը. բայց Հայկ ու Վասամ անողոր են. Եօթնօրեայ զինադադարի ժամանակ թաղում են զիսկները. հանդիսաւոր նկարագրում է մանաւանդ Հայկակի յուղարկաւորութիւնն ու մեռելահացի խնջոյքը: Կուռի երկիւղից պաշարուած՝ Բէլը նոր պատգամաւոր է ուղարկում Հայկին և պահանջներից մէկը կրճատելով՝ պահանջում է միայն հնազանդութիւն և խնամութիւն: Հայկ մտք է ուղարկում Կովկաս և Ապահունիք՝ օգնութեան կանչելու համար իր եղբայրներին և իր խուսկեալ Ապահ որդուն (Ը): Կովկասեաններէ անեղ բանակը միանալով Ապահի դունդին, գիշերանց պատահում է Բէլի ուղարկած բանակին որ ուղում էր յետեից հարուածել Հայկին: Ահռելի պատերազմի մէջ Բէլեանք խորատակում են խոպառ (Թ): Արճէշում նաև են նստում Հայերը՝ զիմաց անցնելու համար. սանգարամեաների հանած անեղ ալեկոծութիւնը խուսկում է Նրանց. Բէլի գորքերը լսելով՝ խուժում են ծովեզրը՝ արգելելու համար Հայոց դուրս գալ. տեղի է ունենում մեծ նաւամարտ (Ժ): Հայկը վրայ է հասնում. Հայերը ցամաք են ելնում և երկու կողմից ջախջախում Բէլի բանակը. Հայկ յաղթական, բայց վերաւոր դառնում է (ԺԱ). Բէլի պահնորդները դաւ են նիւթում վերաւոր Հայկին սպանելու համար իր վրանում (ԺԲ). Հայկանոյշ վրայ է հասնում և քաջարար կուռելով գերի է ընկնում (ԺԳ). Բէլը նրան իր առաջն է կանչում և ամէն հնարք գործ է դնում

հրատարակելու համար նրան, բայց ի դուրս նորից դիմում է Հայկին և հաշտութեան իբր միակ պայման՝ խնդրում է Հայկանոյշի ձեռքը, Հայկ իր ազջիկը մահուան է նուիրում ու մերժում Բէլի պատգամաւորներին: Վստամ որ մինչև այն ժամանակ թագուն աշխատում էր Հայկի հակառակ, նրա ազնուութիւնն ու մեծանձնութիւնը տեսնելով՝ զղջում է և իր բանակով նրան հնազանդութիւն յայանում: Վստամ և Հրանտ գնում են Բէլի բանակի վրայ՝ գերի Հայկանոյշին ազատելու համար (ԺԴ). բայց Հրանտն էլ գերի է ընկնում և Բէլի հրամանով մահուան գատապարտուում: Աստուած որ բարկացել էր Հայկանոյշի մի անարժան արարքի համար, հաշտուում է Հայոց հետ, բախարը շրջում է Հայկի կողմը, բժշկում է նրան իր վերքերից (ԺԵ) և յայտնում նրան իր յաւիտենական անօրինութիւնները (ԺԶ): Ասիւն սկսում է Հայկ ու Բէլ բանիցս իրար են փնտաւում, բայց նոցա պատահումը խափանում է. երեկոն և Բէլեանց դժուարին կացութիւնը վերջ է դնում կռուին (ԺԷ). Բէլեանք լաստեր են գցում գետի վրայ՝ թագուն պաշարելու համար Հայկի բանակը. բայց նոյի աղօթքով հեղեղ է բարձրանում և լաստերը քշում. Բիւրասպը հաճելու համար աստուածներին՝ մարդազոհ է անում, ուր դենել է ուղում նաև Հայկանոյշին, բայց նա հրաշքով ազատուում է (ԺԸ): Դժոխքը դուարթացած մարդազոհի ըուրումով՝ դուրս է գալիս Հայկի դէմ. Երկինքն էլ հանում է արդարների գունդը. սոսկալի պատերազմի մէջ Բէլեանք յաղթուում են (ԺԹ). երկրորդ օրը նոր փորձ է կատարում Բէլ և երկու բանակներն իրար են խառնում. Հայկ ճեղքելով թըշնամինների գունդը՝ Բէլի վրայ է գնում և իր լայնալիճ ազեղով դեռին փռելով նրան՝ վերջ է աւելիս

ահեղ ճակատամարտին (Ի):

Իր ամբողջութեան մէջը Հայկը Հոմերոսի օրինակութիւնն է. այստեղ էլ պատերազմների, ճակատամարտների, նուամարտի և մենամարտութեանց ահեղ նկարագրութիւններ, որսորդութիւն, քանուկների արշաւանք, սպառազինութեանց պատիւերներ, աստուածների մրցում, սիրային յափշտակութիւններ, գիշերային դաւադրութիւններ, փոթորիկ, մըրրիկ, որոտում, նաւաբեկութիւն, վերջապէս ծայրէի ծայր կռիւ ու աղաղակ: Նիւթին համապատասխան էլ լէզու է գործ ածել Բագրատունին. հայկական շափի ծանր ու վեհ ոճը, լեզուի ճոխութիւնը, հոմանիշների և հականիշների առատութիւնը, նմանաձայնութիւններ, բնաձայն քառեր, մանաւանդ կրահոտ և ուժգին քառերի յատուկ ընտրութիւնը տալիս են գրքին ահեղ կերպարանք: Իբր նմոյշ բերում ենք այստեղ մի քանի կարճ հատուածներ Հայկի ուժեղագոյն էջերից:

**Վաստի մեհամարտը (էջ 89).**

Որպէս զոյգ մի մեծամեծ բռնաժանի սաստիկ  
գամփռունք,  
Մի՛ կրկին ի կռիւ խառնեալք գաղանային սուր  
ատամաճք,  
Չատշին խուռն մի կան հոյին տիգօք աշաց մոմա ալով,  
Եւ դարձեալ յարձակին գմիմեամբ պատեալ հողաթաւալ.  
Ոչ ինչ ընդհատ և սորին առ ամենի վայրենութեան՝  
Վերստին անկան յիրեարս՝ միմեանց արեանցն ծարաւք,  
Հաւատար վառեալ զինուք զոր մոլութիւն լինէր  
նպաստ,  
Մուրցացի և աքացի բռնամարտիկ պատերազմեալ,

Որոց կռուիլք ի մկնդաց բռնաքարանց վիմաց լախտից  
Ձէք ինչ ընդհատ ի ջախջախել զէն և զոսկերս թա-  
կաթոպ:

Նախ արուեստ ճարտարող ընդ քաջութեան  
խառն կռուէր:

Եւ զարդիս կատաղութիւն և եթ շարժէ զողի զմարմին,  
Եւ կալեալ զփողից միմեանց գող խեղդ ընդ անձն  
հեղձամղձուկ,

Է զի մին ի ներքոյ, միւսն ի վերայ կորաքամակ:  
Է զի սա ի գետին, այլ զընկերաւն սրատատեալ,  
Եւ մերթ այնպէս զիրկընդխառն ընդ հող փռչուցն  
թաւալգլորը:

Բամբիւնք ոտիցն և կոփմանց իբրև անկեալ վիմանց  
թնդէր:

Եւ յանկարծ թօթափեալք առ ի միմեանց ձեզ առ-  
պարէս,

Ամենայն ուժգնութեամբ իրան յիրան բախել զիմեն,  
Խորտակել երկոցունց կամ գէթ միումն, և վճարել:

Որպէս երկուք ի մըբրկի նդհարկանիցին նաք բարձ-  
րարերձք

Յափշտակեալք յալեայն յիրեար և երկաքեօն անդէն  
ջախեալք:

Կամ իբր յահեղ գեանաշարժ ի տարերացըն զզրդել  
Ձլերինսն քարածեռս յերկուս հերձեալ տեսանիցես,

Եւ զմեկնեալսն ի միմեանց անդրէն յիրեարս բաբախեալ:

**Տեղատարափը (Ձ. էջ 155).**

Մթացան երկինք, և հողմք չորից ծագաց ոստեան  
ի կռիւ,

Քարանձաք հեծէին, ճարձատէին լերանց մայրիք,  
Եւ անդունդք վասպուրական ամեհարար զաղանացեալ

Գոչէր վիշապաձայն, և մինչ ի դլուխս պարեկաց  
Իբրև զուռնդ յարդի մղեղեալ հոսեալ զփրփուք ծո-  
վուն սրսկէր:  
Գոռաց երկինք որտալիք ի ծոց ամպոց ահագնացայտ,  
Եւ ճայթումունք փայլատականց ծագաց մինչև ի ծագս  
երկնից  
Պատառեալ զիւր աղջամուղջ խաւարին զաշս շա-  
ցուցին:  
Փռչին ելեալ ծառացեալ և զիզացեալ յերկին կցէր,  
Զաիեղերս ծածկէր յաշաց, զերանգս ի մի թաթաւէր  
թոյր:  
Զէր յոտին կալ կանգուն և յաղթանդամ սկայից  
անդամ:  
Այր ի վրանս իւր անկաւ՝ զապաւանդական պնդելով:  
Հօտք հօրանք անդեայք խուճապ խիտ բառաշմամբ  
իջեալ ի գիւր,  
Ի հովիտս, ի խորշ տեղիս մակադէին կուռ առ մի-  
մեամբք:  
Բիւր ի լերանց արձագանդք խօսին ազգի ազգի ձայնի ք:

ՌՐԱՅԵՂՈՒԹԻԱՆ (Զ. էջ 171).

Յոտնաարօփ սալասմբակ զընդմանէն յօդս եռայր  
փռչին:  
Գնան ծածկին ի մրրիկն, ի մառախուղ սուղեալ լերանց:  
Հայկեանց ցրուեալ ի մայրիսն յայսկոյս յայնկոյս յա-  
ռաջս առաջս:  
Ի հաջել հետադօտել շանց՝ ի գոթրգից ասպատակին  
Գոտտուցեալ բոյլք երէոց վազեն վարգին ի վեր ի  
վայր:  
Անդ քառարօփի դռոյթ, անդ դոռ, անդ ոտն ի դոփ,  
մկունդ ի կոփ,

Թուենդ առ անառա, բոմբ է բոմբիւն թոււմբ է թըմ-  
բիւն գանգը արձանաց:  
... Ահա ցլիկ մի վայրի խոցեալ նեախւ յոյժ գառնա-  
շունչ,  
Գիււահոտ գազանութեամբ խողանաստեք զիզեալ է  
կռոււնս,  
Արիւննուշտ աչք բոցալաւ, կամակոր ուն աղեղնաձև:  
Վրիժակք է դիտիւն խոնարհեալ, հուպ տա երկրաւ  
քերեալ պատրաստ,  
Ալորեալ կանգնեալ ազին գալարաձև զերդ խարազան,  
Փռնչէր գայր արշաւասոյր, սրընթացիւք շանց վոճ-  
մակ զճեա,  
Արբիկ փոշւոյն պտուտիեալ՝ զերէ և գայր շոպէր  
յաշաց:

Հայկից յետոյ իբրև Բազրատունու երևելի փորձը  
գալիս է Հոմերոսի Ելիսականը, որ թարգմանուած է  
յունարէն բնագրից նոյնպէս հայկական շափով: Աքան-  
չելի ճաշակը, բնագրի քացարձակ հաւատարմութիւնը,  
թարգմանութեան կատարեալ ճշտութիւնը այնպէս  
մըցում են միմեանց հետ որ կարելի է ասել թէ նա  
իւր ճոխութեամբը գերազանցում է յոյն բնագիրը:

Այնուհետև գալիս են Անգլիացի նշանաւոր բա-  
նաստեղծ ~~Միլթոնի~~ Կորուստ Գրախտին և Սախողի,  
Ռասինի, Վոլտէրի, Ալֆրէդրիի և շն. թատերական  
գործերի թարգմանութիւնը, որ նա հաւարել է ձա-  
ւակ ճիճ եւ նոր ողբերգութեանց հատորի մէջ:

Յիշենք վերջապէս Բազրատունու Զարգացելոց  
Քերականութիւնը (1852), որ 40 տարւայ անխոնջ աշ-  
խատութեան արդիւնը է. սա մի գանձարան է Ե—ժԳ  
գարերի հայերէն լեզուի. այնտեղ կարելի է գանել  
հայ լեզուի ամէն շրջանների վիճակը, թէև առանց

գիտական ու կանոնաւոր համակարգութեան. այս  
աշխատութիւնը Այվազովսկին կոչեց Քերականու-  
թիւն քերականութեանց և նրա նմանը դեռ չէ հը-  
րատարակուած ոչ մի տեղ հայոց մէջ:

Բազրատունին վախճանուեց 1866 թ. գեղա-  
24-ին, 77 տարեկան հասակում:



#### 4. Հ. ՂԵՒՈՆԻ ԱԼԻՇԱՆ

(1820—1901)

\*\*\*—Հ. Ղե. Ալիշան (ընդարձակ կենսագրութիւն),  
Վենետիկ 1901. նոյն.—Գեղունի 1901:

Հ. Ալիշանը ծնուել է Պօլսում 1820 թ. յուլիսի 18-ին. իւր աւագանի անունն էր Քերովբէ. մանկական հասակի և նախնական կրթութեան մասին տեղեկութիւն չունինք: 12 տարեկան հասակում իր Սերովբէ եղբօր հետ 1832 թ. հեռանում է Պօլսից Հ. Մկրտիչ Աւգերեանի առաջարկութեամբ և գալիս է Ս. Ղաղարի վանքը: Ալիշանը սկզբից հանդարտ, պարկեշտ և կրօնասէր մէկն է եղել և անշուշտ այս յատկութեանց պէտք է վերագրել այնքան փոքր հասակում ասուն-տեղ թողնելով վանք ապաստանելը: Քիչ ժամանակից ընդունելով կրօնական կոչումը (1836 թ.)՝ ստանում է Ղանդ անունը, իսկ 1840 թ. քսան տարեկան հասակում վարդապետ է ձեռնադրուում:

Ալիշանի ժամանակ Վենետիկ դպրոցի ուսումնական ծրագիրը այնքան բարձր չէր. այնպէս որ Ալիշանը ապագային մի մեծ հեղինակ լինելու համար համապատասխան գիտութիւն և կրթութիւն ստացած չէր. պէտք է ուրեմն իւր առաջադիմութիւնը, կրթութիւնը և գիտութեան մէջ ձեռք բերած պաշարը վերագրել իւր հանճարին և սեփական աշխատութեան:

Վարժարանից դուրս գալուց յետոյ Ալիշանը Վենետիկի Ռափայէլեան վարժարանում ուսուցիչ է նշանակուում։ Երբ տարիներումն է, որ նա սկսում է հրատարակութեան տալ իր վառվառուն երեակայութեան ծնունդ քերթուածները։ Բայց ուսուցչական պաշտօնը բաւական ծանր էր Ալիշանի համար, որովհետեւ բացի դասերից իր զբայ էին ծանրանում նաև վարչական գործերը, այնպէս որ Ալիշանը ստանում է կրճքի հիւանդութիւն։ Երբ Ռափայէլեան վարժարանի տեսուչը վախճանուում է, Ն. Ալիշանը նշանակուում է տեսուչ, այս միջոցին նա 28 տարեկան էր, բայց նոյն իսկ այս տարիքի մէջ այնպիսի փորձառու և խոհուն մարդ էր նա, որ շատ հասուն միաբաններից աւելի գործ էր կատարում։

Վենետիկի Բաղմալէպ թերթի հիմնադիր Ն. Փարբէէ Ալվազովսիին Փարիզի Մուրատեան վարժարանի մէջ տեսչութեան պաշտօնի հրաւիրուելով՝ Ն. Ալիշանը նշանակուում է Բաղմալէպի խմբագիր։ Հասունեան և հակահասունեան վէճերի առթիւ Ալիշանը ստիպուում է ճանապարհորդել չռոմ և ներկայանալով պապին՝ աշխատում է ջնջել այն տարածայնութիւնները, որոնք ծագել էին Վենետիկի միաբանութեան դէմ կրօնական հարցերում։ Նոյն քաղաքում Ալիշանը պատարագում է Ս. Պետրոսի հոյակապ եկեղեցում՝ առաքելի դերեգմանի զբայ։ Մի քանի ամիս մնալով չռոմում, Ալիշանը այցելում և ուսումնասիրում է բոլոր կարևոր հնութիւնները, մասնաւորապէս հայկական ձեռագրերը։

Ալիշանը ուրիշ առիթներով ճանապարհորդում է Լօնդօն, Վեննա, Բերլին, Փարիզ, Բրիքսել, Շուեցարիա և այլն։ Փարիզում նա նշանակուում է տեսուչ Մուրատեան վարժարանի, ուր ամէն կերպ աշխա-

տում է հայասիրական զգացմունք տարածել ո՛չ միայն աշակերտներին, այլ և օտար եւրոպացիներին մէջ:

Փարիզից վերադարձին դարձեալ նշանակում է Ռափայէլեան վարժարանի տեսուչ և ահա այս ժամանակ է, որ տալիս է ազդին մի քանի երեւելի աշակերտներ, որոնք յետոյ յայտնի գրողներ դարձան, ինչպէս՝ Արապիոն շէքիմեան. Թովմաս Քերզեան, Արփիար Արփիարեան, Նորայր Բիւզանդացի և այլն: Իրան աշակերտել են նոյնպէս Պրիգոր Արժրունին և իւր եղբայրը Անդրէաս՝ հայերէն սովորելու համար: Պրիգոր Արժրունին նկարագրում է այս շրջանում իւր կրած ապաստութիւնները Ալիշանի ոգու մասին. նա նրա մէջ տեսնում է մի մեծ ազգասէր, որի բոլոր կեանքը հայութեան է նուիրուած. վարժարանում նկարչութեան դասերին նա նկարել էր տալիս ազգային հերոսների և մեր հին աւերակների նկարները. հայերէն լեզուն գպրոցի միակ հիմքն էր կազմում. այնքան զարգացել էր հայրենասիրական զգացմունքը իւր մէջ, որ մինչև իսկ Վենետիկի վանքի պարտէզի մէջ իր աշակերտներին ձեռքով շինել էր տուել Վանայ լճի ճիշտ օրինակութիւնը և նրա ամին նստած երազում էր հայրենիքի մասին և գրում իր հայրենասիրական ստանաւորները:

Բայց Ալիշանը բոլորովին տարբեր մարդ էր կրօնական խնդիրներում. սկզբից մինչև վերջ նա եղաւ ամենաթունդ կաթողիկէ, որ բացի կաթողիկոսութիւնից ուրիշ կրօն չէր ճանաչում և մեր ազգութիւնը համարում էր հերձուածող, հերետիկոս: Իր բոլոր աշխատութեանց մէջ, ուր որ առիթը ներկայացել է, նա ճգնել է ցոյց տալ թէ հին հայերը կաթողիկէ են եղել, թէ մեր բոլոր կաթողիկոսները հպատակութիւն են յայտնել շատ մի պապերին և այլն: Իր բոլոր կեանքի

մէջ տեսնում ենք թէ ինչպիսի գուրգուրանքով է վերարբերում զանազան կաթուղի սրբերի և սրբավայրերի հետ: Բայց պէտք է խոստովանել թէ Ալիշանի այս մոլեռանդութիւնը չի մնասել երբէք իր հայ զգացմունքներին:

Տեսչութիւնից հրաժարուելով Ալիշանը Ս. Ղազարի վանքում ստանձնում է աթուակալի պաշտօն, ուր և մնում է մինչև իւր մահը 1901 թ. նոյ. 8:

Ալիշանի գործունէութիւնը պէտք է քննել երկու տարբեր տեսակէտից. ա. իբր բանաստեղծ և բ. իբր զիանական. սրա համեմատ էլ իր գործերը պէտք է բաժանել երկու խումբի. գրական — բանաստեղծական գործեր և գիտական գործեր:

Հայր Ալիշանի գրական գործերի առաջին բաժինը կազմում են իր բանաստեղծական երկերը. այսպիսի աշխատութիւններ սկսել է ընծայարանից. աշակերտական շրջանում գրել է շատ ճառեր՝ կարգալու համար դպրոցում որոնք այժմ կորած են: Աւսանողական ընթացքի վերջերում գրել է հրատարակութեան արժանի գործեր. իւր գրողին ու քաջալերելը լինում է սիրելի ուսուցիչը Հ. Գաբրիէլ Այվազովսկի, որ իր հիմնած Բագմավէպի մէջ հիւրընկալում է Ալիշանի առաջին գրական գործերը:

Ալիշանը գրել է սկսում 19 տարեկան հասակում. այս միջոցին նա վանքումն էր և բացի վանքի նեղ պարխոպներից ուրիշ հորեղոն չուներ, իւր գրքերն էին Աստուածաշունչը և Քովմա Գեմբացու Աստուածաբանութիւնը: Զուներ իր ձեռքին մի երևելի գրական հեղինակ, որով նա ողևորուէր կամ առաջնորդուէր. բայց նրա քնարի համար բաւական էին բնութեան տեսարանները, խաղաղական մտքուր երկինքը, լուսինը, աստղերը, ծովը, զեփիւռը և իւր ընկուղնու շուաքը:

նա երգում է բնութիւնը և իւր այդ հասակում դասական բանաստեղծի գրչով ներկայացնում է նրա ճոխ նկարները: Բայց բնութիւնից իւր երգերի առարկայ է դարձնում նա հոգեորը, Աստուած, կրօնը և նրա ծնած զգացումները: Վարդապետ դառնալուց յետո Ալիշանը կարողանում է կարգալ ամէն ազգի մեծ բանաստեղծների երկերը և այն ժամանակ իր գրիչը նոր թափ է ստանում: Իտալական ապստամբութեան ժամանակ, երբ Վենետիկը լցուած էր հրոսակներով, Աւստրիական զինւորներով, ռումբերով ու թնդանօթներով, երբ Իտալացի կամաւորները դունդ գունդ ոգևորուած անցնում գնում էին հայրենիքի ազատութեան համար կռուելու, ոգևորում է Ալիշանը և այդ ոգևորեալ շրջանին գրում է Հայրունի երկը, որ լի է հայրենի յիշատակներով ու յոխորտ երգերով, ինչպէս Բամ Փորոտան, Աւագ և Փոքր Մատիսի խօսակցութիւնը, Հայկ, Տրդատի մահը, Մուշեղ քաջակորով, Վարդանանց նահատակութիւնը ևն:

Ալիշանի բանաստեղծութիւնները մեծ մասամբ հաւաքուած են նուազ գործի մէջ, որ ունի 5 հատոր և որի վերջին հատորը միայն «նահապետի երգեր» աշխարհարար լեզուով են, մնացեալները լինելով խրթին գրարար: Երկրորդ տեղը կարող է բռնել Լճիկ եղևնեաւ, որ պարունակում է իմաստասիրական, բարոյական և հոգեբանական խորհրդածութիւններ. սոքա գրուած են իտալական մի գիւղի գերեղմանատան մէջ բարձրաբերձ եղևնու շուաքի տակ՝ գերեզմանների ախուր յուշերով. կազմում է մի փոքրիկ հատոր: Երրորդ տեղը գնում ենք Աղօթք Աբեղայի, որ նոյնպէս մի փոքր հատոր է և պարունակում է ապաշխարող արեղայի որտարուխ հառաչանքներն ու զգայուն աղօթքները գէպի Աստուած:

Ալիշանը սկսել է նաև գրել մի մեծ դիւցազներգութիւն Տրդատ թագաւորի վրայ. այս բանը սկսում է նա երկտասարդութեան հասակում, իր երեւակայութեան ամէնից ուժեղ և վառվառուն ժամանակին: Աշխատութիւնը նա պահում է երկար ժամանակ իր անկողնու տակ և չի համարձակում հրատարակութեան տալ. վերջապէս նա դիմում է Բագրատունուն և նրա կարծիքը հարցնում այդ Դիւցազներգութեան մասին: Բագրատունին չի հաւանում. և Ալիշանը իսկոյն խոհարարին է յանձնում իր գործը և իր աչքի առջև այրել է տալիս: Քանի հասունանում է Ալիշանը, այնքան հեռանում է բանաստեղծութիւնից և յարւում աւելի լուրջ գործերի, այն է հայագիտութիւնը իր զանազան ճիւղերով, առանց սակայն խոսրո լուեցնելու իր քնարերգակ ձայնը, որ երբեմն երբեմն հնչեցնում է նոյն իսկ ամէնից խոր գիտական գրքերում:

Ալիշանի բանաստեղծական գործերը մեծագոյն մասամբ գրաբար են. քչերն են միայն որ գրուած են աշխարհաբար լեզուով: Ալիշանի գրաբարը բանաստեղծութեանց մէջ խրթին, մութ ու ճոռոմարան է. ազգութիւն առաջ բերելու համար յատկապէս ընտրուած ծանրալուր ու անսովոր բառերը ո՛չ միայն չեն տալիս փնտռուած ազգութիւնը, այլ և մթնեցնում ու բառերի կուտակութեան, աղմուկի ու ժխտրի մէջ անհասկանալի են դարձնում իմաստը: Գրաբար բանաստեղծութիւններն իբր տիպական օրինակ յիշենք Բամ փորոտանը, որ իբր հայկական մարշ (քայլերգ) շատ տարածուած է մեզանում:

ԲՆՃ՝ փորձոտան բարձուտա բոմբիւնք այրարա-  
 տեան դաշտն ի վայր  
 Արի արանց արիւնքն յեռանդն առատանան ի  
 հրազայր  
 Հրաւէրք հայրենեաց հռչակի նդհանուր  
 Հողիք Հայկազանց բորբոքին ի հուր  
 Արք երկնաւորի պոսակին էք կարօտ,  
 Արք երկնաւորին փառաց երկնայորդ  
 Հապ օն արի արանց մանկունք  
 Հայրենալիքէ՞ք հայկազունք...

Ալիշանի աշխարհաբար բանաստեղծութիւններն  
 անհամեմատ աւելի բարձր են դրաբար գրուածներէց-  
 հակառակ դրաբարի փքոցուսոյց դարձուածներին՝ մի  
 պարզուկ, միամիտ, քնքոյշ քնարերգութիւն ու հով-  
 ուերգական անոյշ դալլալիկներ լցնում են ընթերցողի  
 հոգին փափուկ զգացումներով. ճիգ, արուեստակու-  
 թիւն, գեղեցիկ երևալու ջանքեր չկան նրանց մէջ  
 ամէն ինչ սահուն, կոհիկ ու բնական: Ալիշանը փոխ է  
 աւնում նրանց մէջ միջնադարեան աշուղական տա-  
 ղերի ոճը, ձևն ու լեզուն, և դրաբարի ու աշխարհա-  
 բարի հետ միախառնելով մի գեղեցիկ գուրեկան  
 ամբողջութիւն է առաջ բերում:

Ահա մի քանի կտորներ Նահապետի երգերի գե-  
 ղեցկազոյն էջերէց.

Նուսնկայն գերեզմանաց Հայոց

Ա՛յ իմ լուսնակ գեղեցիկ, աստուածամազ գու-  
 լապանք,  
 Զոր առաջնորդ գիշերոյ դրաւ յերկինս ինքն Տէր,  
 Կոյր մթութեան աչք անփակ, սրտիս այլ դու աչք  
 կուտաս,  
 Երբ շողշողուն շրթայով կախուած շարժիս յիմ վրաս:

Քո թեւն՝ երկնից արծաթէն հիւսած, պատրոյզդ  
ալ սսկի,

Ազամանդէ կայծակներ սիւսես զաստղերդ շորս դի-  
եղի մեղրի նման կաթ մի յամանէդ յիս թափած  
Կու խաղաղէ կրքերս զինչ ալիք լծիս հանդարտած:  
Ո՛հ, ս՛նց պայծառ էիր դուն կենացդ երկրորդ  
գիշերին,

Երբ նոր քաշուած Աստուծոյ ճախարակէն ընդ երկին.  
Ո՛հ, ս՛նց փայլուն էր քո լոյսն երբ առաջին այն  
անդամ

Գիշերադուարձ պլպուլիկըն ձգեց ձայն երկնահամ.  
Շունչն պայծառ քեզ նման հովակ հովիտ կու  
խաղայր.

Հեզիկ հովով թունդ ելած մաքուր առուակըն հետայր.  
Ձկայր ահանջ հողեղէն որ զայն լսէր ու փառք տայր.  
Միայն հրեշտակք լսէին և շարժէին զքեզ վայր.  
Եւ դուն լռիկ շափեցիր զանամպ երկնից կէս բոլոր,  
Իով ու ցամքի վարագոյր բացիր, ներքև մտար խոր.  
Երբ արեգակն կու գայր հրեղէն ստօքն յօգս ի վաղ,  
Չարշալուսոյ ցօղ սիւնէր և զառաւօտն հրամաղ...

Կացի՛ր արև, յետ կաղի՛ր, մ՛ ելնե՛ր յերկինքդ  
կապոյտ,

Թող լուսնեկի՛դ ի ման գալ գեռ ի մէջ թուխ  
ամպերոյտ,

Կայ կայ լուսնակ դու յառաջ, լեռնէ ի լեռ սարէ  
սար,

Մէջ ձորերուս խորերուս անցիր յուշիկ հաւասար.  
Հետ քեզ ունիմ ես զանդատ, քեզ նահապեան  
ունի բան,

Սիրան յերկուս է ճղքած, և ցաւերն, ս՛հ, զանաղան:  
Պայծա՛ւ լուսնակ, մի՛ փախչիր, թէ տրամութեան  
լուսն ձայն,

Յաւած սրաի մխիթարանք ես դու կանգնել յեր-  
կինքն այն.  
Ման գաս յերկիրն եղեմայ, բայց ոչ ի հինն այն  
գիշեր, -  
Երբ երջանիկ էր գեռ մարգ, լուկ սէր ու կեանքն  
յիշէր.  
Ճերմակ ճաճանչգ յայնժամ տաք էր ջրերուն ու  
ծաղկանց,  
Ուր որ կաթէր քու շաղիկ՝ կենդանութիւն էր  
անանց...  
Գարձիք նայէ հիմ ի վայր, նայէ ի փէշ սարերուս,  
Նայէ ի տափ առճարիս, և ի հողքանք գեղերուս...  
Ա՛հ, գերեզմանքն են Հայոց, որ ոչ ևս են յաշխարհի,  
Մաշած նշխարք մեր հարանց՝ թաղուած ի խոր  
խաւարի:

### Ողբամ զեզ Հայոց աւխարհ

Չայս իմ կենաց դառնահամ ծովս որ եմ կտրել՝  
Հայոց աշխարհ, զբեզ իսկի չեմ մոռացել.  
Հիմ՝ որ շնչիկս ի հազազիս է ոտնառած,  
Մաշթափ ճակատս գետընուց ակնկորած,  
Ընդ չորս բոլորդ հեա այիմ, հեա ծածկին հեռի.  
Այլուի քշիկ մ՝ ու նահապեան աի մեռնի.  
Ո՛հ, զիմ կնաիկ ճակատս այլ չեմ կտրեր կանգնել  
Ու պսպղուն Մասեաց սարերն ի վեր նայել,  
Այլուի քշիկ մ՝ ու այս ափունքս աի լռեն,  
Այս բարկ շքերս զժերունիս չի աի դանեն.  
Գուք բազմաշար Մոկաց լերունք քարաբերանք,  
Գուք ինձ եղիք գերեզման, դուք ինձ արձագանք.  
Փետտած քնար, ահա քեզիկ տամ թոյլ մասներս,  
Անմնջ փափագ, անմնջ կրակ, մաէք ի ներս:

Ձայն պատառուկ սիրտն որ տեսնուք՝ այնոր  
ներքև

Կան մին քանի սուր հառաչանք կարմիր ու սև.  
Ճնշած կրճկունքս աղկկարին, ս՛հ, զինահար,  
Այսօր քարշեմ ու դուրս բերեմ զիմ ցաւն հազար.  
Թող ի Տարօն հասնին ձայներս, սարքն պատռին,  
Մեղրագետոյն ալիքն անոյշ՝ լեզի կտրին.  
Հեա Խորօնից քերթողահօր պատմագրին  
Թող կիսաա շունչս ողբակցելով երթան ուրին.  
Ձաշխարհն Հայոց ես լամ զիմ քաղցրն հայրենիք,  
Արին արցունքս հեա թափեմ քաղցր ու ցրտիկ:  
Ահա թուլցած աղիքս պինդ պինդ քարշեցան,  
Մոխրէն ի դուրս կրակունք ելան սիրտս լցուան,  
Թռաւ ելաւ նահապետին սիրտ վեր ու վեր,  
Իջաւ խորցաւ գերեզմանաց վախեր վհեր:  
Ողբամ զքեզ Հայոց աշխարհ, ողբամ զքեզ . . . :

Հ ր ա զ դ ա ն

Հրազդան, գեաակդ իմ հայրենի,  
Հրազդան, ջրիկդ իմ անուշիկ,  
Ահա թողել զհողն օտարի  
Բարկէնս հասել եմ պանդխտիկ.  
Ա՛յ Հրազդան, ա՛յ ջուրք հայրենիք,  
Ա՛յ ափունք, յէ՞ր լայք լռիկ:

Ես ձեր դրացնակն եմ, չէք ճանչել,  
Սիրտս գձեզ չէ մոռցել խսկի.  
Գուք կարկջիկդ է՞ր էք մոռցել,  
Իբժղուն երեսդ է՞ր սուգ ունի.  
Ա՛յ Հրազդան, ա՛յ ջուրք հայրենիք,  
Ա՛յ ափունք, յէ՞ր լայք լռիկ:

Ա՛հ, անց ու գնաց է եղել ամէն,  
Ա՛հ, անց ու գնաց է Հայաստան.  
Զեա անմէկիկ թողած աստէն  
Հետ անցնիս գնաս դ՛՛ւն այլ չբազդան...  
Անցի՛ր գնա ջրեկդ հայրենի,  
Արտասուք հերիք են Բարգէնի:

Շուշանն Շաւարշանայ

Կուսանք Հայոց, նոր շուշան  
Տեսէք ի գաշտ Շաւարշան:  
Պայծառ պատկեր կուսանաց  
Հայոց պտակ պարծանաց:  
Ճակատն ի քող խորոտիկ,  
Յանձած ի հոլ խոպուպիք,  
Տատրակ ատտամբ մանտրուքայլ  
Ման դայ ի գաշտ ցօղափայլ.  
Մեղր կաթէ շրթներուն,  
Փայլիտան աչքն սիրուն:  
Կուսանք Հայոց, նոր շուշան,  
Տեսէք ի գաշտ Շաւարշան:

Շուշանն Շաւարշանայ, Պիպուն Աւարայրի, Մասիսու սարերն հրաշալի պօէմաներ են, արժանի ամբողջովին մէջ բերելու այստեղ, բայց դժբախտաբար գրքիս սահմանը թոյլ չի տալիս:

Ալիշանի զիտական աշխատութիւններէ մէջ ամէնից կարևորներն են տեղագրական մեծամեծ երկերը. ամէնից առաջ նա հրատարակում է մի ճոխ Գաղաքական Աշխարհագրութիւն, որից երկու տարի յետոյ սկսում է հայկական տեղագրութիւնները. նախ հրատարակում է Տեղեկագիր Հայոց Մեծաց, յետոյ Շիրակ, Սիսուան, Այրարատ և Սիտական կոթողային

գործերը: Նա մտադրուած էր կազմել ամբողջ Հայաստանի ու Փոքր-Ասիայի տեղադրութիւնը, այնպէս որ Փոքր-Ասիայի արեւմտեան ծայրից կարելի լինէր իւր գրքերով ճանապարհորդել ամբողջ երկրները մինչև Ատրպատական: Արա համար էլ նա թողել է Հայկաբան անունով 8 հսկայ անտիպ հատորներ, որոնցից պէտք է դուրս հանէր ապագային Հայկական տեղադրութեանց միւս հատորները: Բայց այս բանը չյաջողուեց իրեն, որսվհեաւ նախ շատ ու շ սկսու և երկրորդ՝ վանքը կարող չէր դիմանալ այնքան տպագրական ծախքերի:

Ալիշանի գործերի մէջ առանձին տեղ են բռնում Յուշիկը Հայրենեաց Հայոց, Ծնորհայի և պարագայ իւր, Հայրուսակ, շին հաւատք հայոց, Հայ-Վենեա, Արշալոյս քրիստոնէութեան և Հայապատում: Յուշիկի պարունակում է աղգային երեւելի անձերի կենսագրականներն ու դէպքերի պատմութիւնը. բաժանուած է 2 հատոր, ընդ ամէնը 32 գլուխ՝ մի գեղեցիկ վերջաբանով. ամբողջը իբրև հայրական գիշերային դասախօսութիւններ Նահապետից ուղղած Հայկակ որդուն. սիրուն կատրոններից են Ս. Թէոդորոս Սալհունի, Վահան Գոյթնացի, Շուշան Վարդենի ևն: Գիրքը բռնում է տեղադրական չոր երկերի և զուտ բանաստեղծական գրուածների մէջտեղը. պարզ աշխարհաբար լեզուով նկարագրում է այն սիրելի անձերի կեանքը և Հայկակին ազդում հայրենասիրական զգացմունքներ:—«Շնորհալի եւ պարագայ իւր» Ն. Ծնորհալու ընդարձակ կենսագրութիւնն է. գիրքը կարծես գրուած է վէպի ձևով, բայց պարունակում է անթիւ տեղեկութիւններ Կիլիկիայի պատմութեան, աշխարհագրութեան և բանաստիութեան մասին:—Հայրուսակ պարունակում է մեր մատենագրութեան և դանազան

գաւառական բառքաւներէ մէջ գործածական բոյսերի անունները, իւրաքանչիւրի ընդարձակ նկարագրութեամբ:— Լին Լաւասէ Լայոց խօսում է մեր հին հեթանոսական կրօնքի մասին. հին հայ աստուածների նկարագրութիւնը, առասպելները, ոգիները, արգի պառաւական հաւատալիքները և նախապաշարունները մանրամասն նկարագրուած են այս գրքում:— Լալ-Վիցնէ Վենետիկի հին հայ գաղթականութեան պատմութիւնն է՝ հանուած իտալիոյ արքունական դիւանատանից:— Արեւոյս Քրիստոնեայի պատմում է Լայոց քրիստոնէութեան առաջին և երկրորդ դարձը, որ կարճ և թէ իւր Տրդատ դիւցազններգութիւնից մի քաղուածք է:— Լայապոսում Ալիշանի հրատարակած վերջին աշխատութիւնը մի տեսակ Լայոց Պատմութիւն է հիւսուած մեր դանազան պատմագրերի գրածներից հէնց ընագրների լեզուով, բայց նորանոր ծանօթութիւններով ճոխացրած:

Ալիշանի գրական ու գիտական աշխատութիւնները, միասին հաշուած նաև հին մատենագիրների հրատարակութիւնները, ընդամէնը 70 են, որոնցից 23-ը անտիպ է մնում: Անտիպ գործերի մէջ խիստ քիչ բան ենը գտնում գրական, բայց ընդհանրապէս նոցա մէջ կան մեծամեծ գիտական աշխատութիւններ: Այսպէս 1) Լայասան Լայկազանց ցՏիգրան, այսինքն Լայաստանի նախնական պատմութիւնը մինչև Տիգրան Ա-ի ժամանակը. այս աշխատութիւնը արդէն յանձնուած է տպագրութեան: 2) Լայ եկեղեցի, որի մէջ քննութեան են առնում բոլոր այն խնդիրները, որով հայ եկեղեցին հերձուածող է համարոււմ պապի առաջ: 3) Ժայով, Լայաստանեայց եկեղեցու բոլոր կրօնական ժողովների պատմութիւնն է: 4) Լայ վափօրայի յԵրոպա. Երոպայում արած ճանապարհոր-

դութեանց ժամանակ Ալիշանը առանձնապէս հետա-  
մուտ է լինում հաւաքելու դանազան ժամանակնե-  
րում հիմնուած հայ վանքերի պատմութիւնը և  
ամփոփում այս գրքում: 5) Կոնդակէ, մի հսկայ հատոր,  
որի մէջ հաւաքուած են Հոռմի պապերի և հայ եկե-  
ղեցական ու քաղաքական պետերի թեթեւեղութիւն-  
ները: 6) Հայ-Վեհեք, որ տարբեր է իւր հրատարակած  
համանուն աշխատութիւնից, բայց դարձեալ նոյն  
նիւթի մասին է և ծաւալով կազմում է 6—8000  
մեծագիր երևոններ: 7) Առձեռն Բառարան, Առձեռն  
բառարանի երրորդ տպագրութիւնը, որի մէջ մտցրել  
է հաղարար նոր բառեր: 8) Արոպայի հայ սուրբեր.  
կենսագրութիւն ըստ այն հայազգի սրբերի, որոնց  
անունով վանքեր կամ մատուռներ կան հիմնուած  
Արոպայի դանազան մասերում: 9) Գրչագրաց զարգե-  
լայտեղ հաւաքուած են հայ գրչագրոնների նկարչական  
արտագրութիւնները, որոնք քաղուած են հաղարար  
հայ ձեռագրերից:

Վերևում մենք խօսեցինք Ալիշանի լեզուի մասին  
իր գրական գործերում. այժմ անցնենք գիտական  
գործերի լեզուին: Ալիշանի գիտական գործերն էլ մեծ  
մասամբ գրուած են գրաբար, ինչպէս են իր բոլոր  
տեղագրական գործերը. բայց կան նաև բաղմաթիւ  
աշխարհաբար գործեր: Սոցա մէջ Ալիշանի գրաբարը  
շատ աւելի պարզ է, բայց այնու ամենայնիւ չունի  
ոչ Բագրատունու լեզուի վեհութիւնը և ոչ Վեննայի  
գրողների պարզութիւնը: Աշխարհաբարի մէջ էլ Ալի-  
շանը շեղում է ընթացիկ լեզուից. այն գրաբար  
դարձուածները, այն միջնադարեան ռամկական ձևերը  
որ խառնում էր նա իր բանաստեղծութիւնների մէջ,  
գործ է ածում նաև այստեղ. բայց այստեղ նորա այլ  
ևս չունին իրենց շնորհը, և իբրև կոշտ անհարթու-

Թիւններ ամէն տեղ գլուխ են բարձրացնում. այսպէս օրինակ կու մասնիկի գործածութիւնը ներկայումս անկատարի հին ձևը, այլ շողկապը ևն. օրինակ նա այլ կուզայր:

5. ՎԵՆՆԱՅԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Ե. երիցեանց.—Վենեակի Մխիթարեանք. Թիֆլիզ 1883, էջ 73—76:

Հ. Գ. Մէնէվիշեան.—Գննազրական ակնարկ Երոէն արքեպիսկոպոսի Եյոնեան, Վեննա 1895.

Սո. Մալխասեանց.—Երոէն արքեպոս. Եյոնեան. Եզգազրական Հանդէս, Թ. էջ 282—4:

Մարութեան.—Ե. Մ. Գարագաշեան. Լոյս Օրացոյց 1905, էջ 555—562:

**Ս.** Ղաղարի վանքում Մխիթարի յաջորդ Սաեփաննոս Մեղքոնեանի արքահայրութեան ժամանակ միաբանները մէջ Գժտութիւն ծագելով՝ մի խումբ միաբաններ թողնում են վանքը և անցնելով Աւստրիոյ Տրիէստ քաղաքը՝ Մարիա Թերեզա կայսրուհու պաշտպանութեամբ հիմնում են այստեղ իրենց համար առանձին միաբանութիւն (1773 թ.): Գժտութեան պատճառի մասին զանազան կարծիքներ կան. երիցեանք կարծում է թէ սրա պատճառը Վենեակեցոց կեղծ կաթոլիկութիւնն էր: Ինչպէս զիտենք, Վենեակի միաբանութեան հիմնադիրը Մխիթար արքան Իսաղիայում հաստատուելով իր վանքի յարաւեութեան համար ստիպուել էր առ երեսո ընդունել կաթոլիկութիւնը, բայց սրաի խորքում միշտ մնում էր մաքուր հայ: Մխիթարի յաջորդ յիշեալ Սաեփաննոս Մեղքոնեան արքահայրը շարունակում է Մխիթարի քաղա-

քահանութիւնը՝ առ երեսս մ'նալով կաթողիկ, բայց իրապէս ուղղափառ հայ: Այս կեղծիքին չհամակերպելով ապա յիշեալ միաբանները և որտանց ընդունելով կաթողիկոսութիւնը՝ հեռանում են նրանցից: Այս կարծիքը սակայն ստոյգ չէ և այժմ հաստատուած է թէ գժտութիւնը ծագել է դրամական խնդիրների պատճառով միայն:

Բաժանւող միաբանները 15 հոգի էին, որոնց գլուխն էր Աստուածատուր վրդ. Պապիկեան: Տրիէստի միաբանութիւնը սկզբից շատ ազգատ էր, ուստի հեռանելով Վենետիկեցոց օրինակին՝ սկսան գրքեր տպել և զանազան տեղեր, մանաւանդ Հնդկահայոց մէջ, ժողովարարութիւն անել: Բայց այս միջոցները յաջողութիւն չգտան, որովհետեւ ժողովարարութիւն անողները կամ կերան իրենց հաւաքած գումարները և կամ նորից Վենետիկ անցան. այսպէսով միաբանութեան վարկը շատ ընկաւ:

Տրիէստցիք հենց սկզբից հակառակորդ լինելով Վենետիկեցոց, առանձին միաբանութիւն կազմելուց յետոյ աւելի ոխերիմ հակառակորդ դարձան և պաշտպանութիւն գտնելու համար յարեցան Կոլէժցոց և Վիքանացոց, որոնք յայտնի էին իբրև հայ անուան ըուրբովին հակառակ, զուտ լատինացած հայեր:

1807 թուին Ֆրանսիացիք մանելով Տրիէսա, ուրիշ կաթողիկ վանքերի հետ կողոպտեցին նաև Միթիթարեանց վանքը և միաբաններն ցրուեցան այս ու այն կողմ: Մի քանի տարի այսպէս ցրուած մնալուց յետոյ՝ 1811 թուին նոքա հաւաքուեցին Վեննա և Փրանկիսկոս կայսեր պաշտպանութեամբ հիմնեցին իրենց վանքը:

Վեննայի նորակազմ միաբանութիւնը շատ խեղճ գրութեան մէջ էր նիւթականի կազմից. բայց իրանց

ճարտիպութեամբ և հմտութեամբ ընչ ժամանակի մէջ միաբաններն այնպէս դարդացնում են իրանց տպարանը, որ Աւստրիոյ հայտնութեան մէջ դասնում է ամէնից նշանաւորը: Այսօր ևս Վիեննայի Մխիթարեան Հայոց տպարանը Աւստրիայի առաջին տպարանն է, որ տպւում են գերմանական բազմաթիւ օրաթերթեր, անթիւ գրքեր և մասնաւորապէս աւստրիական հասթիլիկ եկեղերու ծիսակատարութեան գրքերը, որոնց պաշտօնական տպարանն է: Տպարանի նիւթահան օգուաններով Վիեննայից հարդաւորում են վանքը, բաց անում զպրոց, գրադարան, հիմնում եւրոպա շարաթաթերթը, հրատարակում բազմաթիւ գրքեր և վերջապէս Հանդէս Ամսօրեայ Թերթը, որ Հայոց լուսագոյն մասնագիտական թերթն է հայագիտութեան մէջ:

Մխիթար Աբրայի և Վենետիկեան միաբանութեան գործը եղել էր լատինարանութիւնը ջնջելով վերականգնել հայերէնի հին վիճակը. հին հայերէնի սահման էին դնում նորա ԺՅ դարը: Բայց մեզ յայտնի է թէ մինչև այս դարը հայերէն լեզուն անցել է մի քանի շրջաններից, ինչպէս յունական գալոսը, արարական ազդեցութիւնը և վերջի գարերում էլ թուրքերի և թաթարների ազդեցութիւնը: Վիեննայից մտածում են գրառարը մարբել նաև օտար ազդեցութիւններից. նորա մտածում և գանում են թէ գրառար հայերէնի ամենամաքուր շրջանը սկսում է Ա. դարի սկզբից, այն է Ա. Սահակից ու Ս. Մկրտչից և համարում է մինչև նոցա մահը, այսինքն մինչև Ս. դարի կէսը: Ենչ գրուածք որ պատկանում է այս շրջանին ներհայացնում է մեզ ամենամաքուր հայերէնը և ինչ գրուածք որ այս շրջանից յետոյ է, նա կրում է օտար ազդեցութիւն:

Այս մտածմունքով Վիեննացիք Վենետիկեաններէց մի քայլ աւելի առաջ են գնում և մինչդեռ Վենետիկեցիները ընդունել էին մի խառնակ հայերէն, Վիեննացիք ընդունում և գրում են սոկեդարեան գրարար հայ լեզու: Նոցա գրարար աշխատութիւնները բոլորն էլ գրուած են այս լեզուով և համարեալ թէ հետևողութիւն են Ս. Գրքին, Եղնիկին և առհասարակ Ոսկեդարեան հեղինակներին:

Վեննայի վանքը աւելի նոր լինելով չի տուել այնքան բաղմամբիւ աշխատութիւններ և այնքան շատ հեղինակներ, որչափ Վենետիկի վանքը: Բայց այս բանը Վեննայի միաբանութեան առաջին շրջանի համար է, իսկ քսան տարի է որ նա այնպէս դարձել է և հայագիտութեան մէջ այնպիսի առաջադիմութիւն է ցոյց տալիս, որ ոչ մի քաղաք չի կարող մրցել նրա հետ: Վեննայի միաբանութիւնը դարձել է այժմ հայագիտութեան կենտրոն:

Վենետիկի և Վեննայի մէջ եղած մեծադոյն տարբերութիւնը քննական ոգին է: Վենետիկեցոց հրատարակած աշխատութիւնները սկսած այբբենարանից մինչև հսկայ Հայկազեան բառարանը բոլորովին դուրի են քննական ոգուց: Պատմական գործերը, լեզուական քննութիւնները, բառարանները, հայագիտական գրուածքները, հին մատենագրութեան վերաբերեալ գրուածքների հրատարակութիւնները՝ բոլորն էլ լոյս են ընծայուած համաձայն աւանդական գիտութեան: և այս է պատճառը որ Վենետիկեցոց գործերից և ոչ մէկը այսօր չի համապատասխանում ճշմարիտ գիտութեան պահանջներին և բոլորն էլ դատապարտուած են մոռացութեան:

Մինչդեռ Վենետիկցիք և նոցա օրինակով բովանդակ հայութիւնը հետևում էր հին աւանդական

գիտութեան, ընդհակառակը Վեննացիք վերցրին քննական գիտութիւնը: Աւանդական գիտութեան համար ճշմարտութիւն էր ամէն ինչ որ հին մատենագիրները մեզ տալիս էին. այսպէս հների աւանդած առասպելները, այլանդակ զրոյցները, անպատմական դէպքերը, ժամանակագրական սխալները՝ բոլորն ընդունուած էին. իսկ քննական գիտութիւնը ամէնից առաջ քննադատութեան ենթարկեց հին մատենագիրների աշխատութիւնները, առաւելութիւն տուաւ միշտ ժամանակակից հեղինակներին, կասկածով վերաբերուեց այն հեղինակներին, որոնք պատմում էին հին դէպքերը՝ առանց ժամանակակից լինելու, նշանակութիւն տուաւ մանաւանդ արտաքին հեղինակներին և վերջապէս շընդունեց այն բանը որ քննադատութեան բովից չէր անցել: Գիտութեան այս ոճը, որ յատկապէս Գերմանացիք ստեղծեցին, Վեննացոց շնորհիւ անցաւ մեզ և այս ոգուն ենք պարտական Գրիգոր Խալատեանի, Ստեփաննոս Մալխասեանի, Գալուստ Տէր Մկրտչեանի և ուրիշների աշխատութիւնները: Իրանք Վեննացիք առաջին անամ օրինակ տուին քննական աշխատութեանց, հրատարակելով Տիեզերական Պատմութիւնը, Խորենացու քննութիւնները ևն:

Այս բոլորի հետ պիտի խոստովանել որ Վեննայի միաբանութիւնը բուն գրականութեան համար ոչինչ չի տուել. նրա արդիւնքները միայն գիտական են: Վեննայի ամենայայտնի հեղինակներն են Լ. Յովսէփ Գաթրճեան, Լ. Մատթիա Վարագաշեան և Լ. Արսէն Այանեան: Սյո երեքը ոսկեդարեան հայերէնի գիւտանոցներից կամ նրա նշանաւոր պաշտպաններից են:

Լ. Յովսէփ Գաթրճեան փիլիսոփայ մտքի, քննական ոգու աէր մի գիտուն էր. նա էր որ առաջին

անգամ մտցրեց մեր մէջ քննական գիտութեան ոճը, հրատարակելով երկու հատոր ընդարձակ Տիեզերական Պատմութիւնը (գրաբար), որ քննական պատմութեան առաջին փորձն է: Հրատարակել է նոյնպէս Պատմութիւն հայ մատենագրութեան, որ սակայն մնում է մեծագոյն մասամբ անտիպ: Գաթրճեանը ունի գեւշատ աշխատութիւններ, որոնք սպասում են հրատարակութեան և որ Վեննացիք երբեմն երբեմն լոյս են ընծայում նոր փոփոխութիւններով, ինչպէս է Պատմագրամատոյցի Հայոց խոշոր աշխատութիւնը, որ հրատարակուեց Հ. Տաշեանի խնամքով:

**Հ. ԱՆՏՈՆ Մատարիա Գարագառեան** (1818—1903 Պօլսեցի) Վեննայի նախկին միաբաններից էր, որ սակայն յետոյ յարուելով Բիւխների նիւթահան փիլիսոփայութեան, թողեց վանքը և կրօնական կոչումը (1856 թ.) և մինչև իր մահը իբրև աշխարհական ապրեցաւ Պօլսում: Գարագառեանի անունը կապուած է սոկեզարեան հայերէնի հետ և նրա մօլեռանդ պաշտպանը հանդիսացաւ մինչև իր մահը: Թողել է 35 աշխատութիւններ, որոնց մեծագոյն մասը գատական գպրոցական գրքեր և թարգմանութիւններ են և ակզ չուենին զրահանութեան պատմութեան մէջ: Այս գործերի մէջ նշանաւոր են ձառակ Ոսկիդէն Իրպրուրեան և Քննական Հայոց Պատմութիւն:

Գարագառեանը ո՛չ միայն Ոսկեզարեան հայերէնի պաշտպան, այլ և Կեղծ Գատականների ամէնից մօլեռանդ հետեոյն էր. նա համոզուած էր թէ գրաբար հայերէնը պիտի կենդանանայ մի օր և իր բոլոր ջանքերը ուզողուած էին այս ցանկալի օրը մի քիչ աւելի մօտեցնելու: Այս պատճառով է որ նա հիմ գրաւ իր աշակերտ Եսայր Գուրգէնի հետ ձառակ գրաբար ամսթերթին և այս պատճառով է որ նա գրում էր մի

այնպիսի այլանդակ աշխարհաբար, ինչպէս է Քննական Պատմութեան լեզուն:

Քննական Պատմութիւնը (4 հատոր) Գարագաշեանի գլուխ գործոցն է, այս աշխատութեան մէջ նա մանրամասն քննում է Հայոց մասին խօսող հայ և օտար պատմիչներին, յատկապէս Խորենացուն և հիմնուելով օտար պատմիչներին վկայութեան և արտարին պատմութեան վրայ դուրս է բերում մեր ազգի ճշգրիտ պատմութիւնը սկզբից մինչև Վահան Մամիկոնեանի ժամանակը: Հետաքրքիր է յատկապէս այս գրքի տուածին հատորը, որ խօսում է մեր անպատմական շրջանի մասին, այն է մեր ազգի ծագումից մինչև Տիգրան Բ: Գարագաշեանը մերժելով Խորենացուն, անհաւատութեամբ վերաբերուելով ասորեստանեան և հայկական բեռնագիր արձանագրութեանց, պատմելու գրական սշինչ չէ ունենում և անում է միայն զանազան կատիածելի և նիստազրու-թիւններ, որոնք իրար են ջրում: Գրքի այս մասը արդէն բոլորովին հնացած պէտք է համարել և ամէն ինչ նորից պէտք է սկսել:

Բայց Վեննայի վանքի ամէնից նշանաւոր անձը Հ. Այանեանն է:

Հ. Արսէն Այանեան ծնուել է Պօլսում 1825 թ. յունվ. 7. իր աշխարհական անունն էր Վիշէն: 1828-ին Յունոց ապստամբութիւնը ծագելով՝ Սուլթան Մահմադը կորցրեց նախարհի նաւամարտը, ուր եւրոպացիները միացեալ զօրութեամբ այրեցին Օսմանցոց ամբողջ նաւատորմը: Այս դէպքի վրայ ստատիկ զարանտելով Սուլթանը՝ վաւտեց բոլոր եւրոպական տէրութեանց դեսպաններին, հալածանք հանեց եւրոպացոց դէմ, նայնպէս և բոլոր կաթոլիկ հայերին Պօլսից արտորեց Գաղատիա: Վիշէնի ծնողքն էլ իրենց հետ վերցնելով եռամեայ երախային՝ անցան նշանակուած

աբսորատեղին: 1830 թ. աբսորից վերադառնալով Վիէէնը մանուս է Պօլտոյ Միտիթարեանց վարժարանը, ուր աշակերտում է Լ. Վրթանէս Զալխեանին: Այստեղ հայերէն ու լատիներէն լեզուի ճաշակն առնելուց և այդ լեզուներէ մէջ մեծ յաջողութիւն ցոյց տալուց յետոյ՝ լաւ հայերէն սովորելու համար լճաում է մտնել Վեննայի վանքը:

Տասը տարեկան էր Այանեանը՝ երբ Պօլտից դուրս գալով՝ անցնում է Վեննայի Միտիթարեանց վանքը: Այստեղ հայ. լատին. իտալ. ֆրանս. տաճկ. արաբ. անգլ. գերմ. լեզուներէ, դրական գիտութեանց և աստուածաբանութեան մէջ մեծ յառաջդիմութիւն ցոյց տալուց յետոյ, արտագրում է մի քանի փոքր դրական աշխատութիւններ և 1840 թ. դառնում է կրօնաւոր՝ ընդունելով Արսէն անունը: Այնուհետև Այանեանը ճանապարհորդում է Պօլիս, Զմիւռանիա, Այաթն, Փարիզ և այլ քաղաքներ 1862 թ. անցաւ Վեննաիկ, ուր պարսպում էր հայադիտական ուսումնասիրութիւններով:

Գեռ աշակերտ էր Այանեանը՝ երբ յօրինեց մուրակներէ աստղաբաշխական տախտակը. յաջորդ տարին լատիներէնից թարգմանեց մի քանի ճառեր: Նոյն ժամանակին է ընկնում Ռսկեգարեան հայերէնի դիւար, որի հեղինակն էր գլխաւորապէս Լ. Յովսէփ Գաթրճեան: Վէճը շատ էր սաստկացել Վեննացոց և Վեննակեցոց մէջտեղ. Այանեանը ո՛չ միայն յարում է Ռսկեգարեաններէ կողմը, այլ և բազմաթիւ յօդուածներով ցոյց է տալիս վեննակեաններէ հակաճառութեան ապարդիւն լինելը: Այանեանի այս յօդուածները դանւում են Եւրոպա թերթի մէջ և առանձին չեն հրատարակուած: Նոյնպէս Եւրոպայի կամ Հանգէս Ամսօրեայի մէջ հրատարակել է մի շարք հայադիտական ուսումնասիրութիւններ, որոնցից կարևորներն

են Կրկնագիր Ազատանդեղոսի քննութիւնը, Նոր Կառկարանի ձեռագիրների ուսումնասիրութիւնը, Տառադարձութեան խնդիր և այլն:

Բայց Այանեանի անունը անմահացնող գործը Լոկէ է իւր Քճնական Քերականութիւն արդի հայերէն լեզուի աշխատութիւնը, որ հրատարակեց 1866 թուին և որ բոլոր մասնագէտներին կողմից զնահատուած է իբրև արժանաւոր երկ և մինչև իսկ սեանց կողմից կոչուած է ժԹ. գարի լեզուաբանական գլուխ գործոցներից մէկը:

Այս գիրքը բաղկանում է երկու մասերից. առաջին մասը՝ որ գրքի ներածութիւնն է, խօսում է ընդհանրապէս լեզուի ծագման վրայ, հայերէն լեզուի և օտար լեզուների փոխադարձ կապակցութեան վրայ, գրաբարի միջնագարեան հայերէնի և արդի գուռաբարբառների մասին և այլն. իսկ երկրորդ մասը աշխարհաբարի քերականութիւնն է, ուր իւր քանչիւր ձևի կամ կանոնի ծագման և զարգացման պատմութիւնն է անում սկզբից մինչև այժմ: Գննական քերականութեան արդիւնքն եղաւ վերջականապէս լուծել աշխարհաբարի հարցը և իր արհամարհելու վիճակից բարձրացնելով՝ ապւ նրան այն արժանաւոր տեղը որ վայել էր գրաբարի յաջորդին: Այանեանն եղաւ որ ապացուցեց թէ լեզուների մէջ չկայ բնիկ կամ օտար, հարադատ կամ աղաւաղ, այլ թէ լեզուները ներկայացնում են անվերջանալի փոփոխութիւնների մի շարք և թէ աշխարհաբարը նոյնքան հարադատ հայերէն է որքան գրաբարը:

Այանեանը երկար ժամանակ պարապեց ուսուցչութեամբ. այսպէս 1851 թուից սկսած Չմիւսնիոյ Մխիթարեան Պարժարանում. 1867—76 տեսուչ Պօլսի Մխիթարեան վարժարանում. այս թուին ձանձրանալով տեսչական պաշտօնի գծուարութիւններից՝

հրաժարուեց և քաշուեց Վեննայի վանքը: ուր 1886 թ. քննարուեց արքահայր Կորնելիոս արքահայրը հենց սուսջին տարուանից սկսաւ ուշադրութիւն դարձնել վանքի ուսումնական մտկարդակը բարձրացնելու: Կորնելիոսը հասարակ վեննական վարդապետներէց զիտնական երիտասարդ ուժերը և նրանց օգնութեամբ հենց իր արքայութեան երկրորդ տարին հիմ գրաւ Հանդէս Ամսօրեայ թերթին, որ հայազիտութեան սուսջին և ամենափառաս որ ներկայացուցիչն է:

Այսինքն ոչ միայն պարապեց հայազիտութեամբ, այլ և զեղարուեստով: Կախանձախնդիր լինելով Հայոց եկեղեցական երգեցողութեան կարգաւորութեան, նա պատրաստեց մեր պատարագի թէ պարզ և թէ քառաձայն ձայնադասութիւնը եւ բարոյական խաղերով: Կորնելիոսը ձեռքով մինչև 50 անասկ ազարանական մայրեր հայերէն տառերի համար, այնպէս որ այժմ Վեննայի հարուստ ազարանի բոլոր հայկական տառերն ու ծաղկազրերը իր ձեռքի արտադրութիւնն են: Նրա գործն է նայնպէս մի խոշոր երկրագունդ հայերէն լեզուով, որ մասնագէտներէց գրուած է ստացել:

1895 թուին կատարուեց Այսինքնի յիտնամեայ յարեւանք և 1902 թ. յալիս Ե-ին վախճանուեց Վեննայում:

Վեննայի վանքը այժմ քան երբ և իցի փայլում է մի քանի մասնագէտներով: որոնց գլուխն է Հ. Կարսոս Տաշեան երիտասարդ զիտնականը, սոցա միջոցով Հանդէս Ամսօրեայ թերթը հասնում է իր կատարելութեան, կազմում է «Մայր Եւրոպի հայերէն ձեռագրաց», սկիզբ է գրում հայ մասնագիրներէ քննական հրատարակութեան: կազմում է լիակատար Ժողովածու հայերէն գրքերի ու թերթերի և այլն:

Բ. մաս

Ոչ—Մխիթարեաններ

1. Գէորգ Դպիր

(1737—1812)

Ա. Այվազեան, Շար հայ կենսագ. Ա. հաս.  
էջ 11—73, Պօլիս 1893:

Մխիթարեաններից դուրս՝ ժամանակագրական կարգով առաջին կեղծ դասական հեղինակը Գէորգ Դպիրն է, որ ծագել է ԺԸ. դարի երկրորդ կեսին և ԺԹ դարի սկիզբը, իբրև նշանաւոր լեզուագէտ, հայկաբան, աստուածաբան, պատմաբան, քերթող ու թարգմանիչ:

Գէորգ Դպիր Տէր-Յովհաննէսեան՝ Պօլսի Պալաթ թաղի աւագերէց Տէր Յովհաննէս քահանայի որդին էր: Ծնուել է 1737 թուին՝ նոյն թաղում, որի համար էլ կոչոււմ է նաև Պալաթ-ցի Իր ժամանակ, ինչպէս ուրիշ հայաբնակ վայրերում, նոյնպէս և Պօլսում չկար որ և է ուսումնական հաստատութիւն: Գէորգ Դպիրը իր նախնական կրթութիւնը ստացաւ հօրը մօտ, որ ինչ-

պէս հասկանալի է, չէր կարող մի մեծ բան լինել: Սակայն իր բնածին հանճարով, ընդունակութեամբ և աշխատասիրութեամբ կարողացաւ յետոյ այնպէս առաջ տանել իր ուսումը, որ ձեռք բերաւ գիտութեան առատ պաշար և սովորեց տասնի չափ լեզուներ: Բացի հայերէնից, նա գիտէր տաճկերէն, պարսկերէն, արաբերէն, երբայեցիերէն, յունարէն, լատիներէն, իտալերէն, և այլն: Իր այս գիտութեան և լեզուագիտութեան շնորհիւ՝ մեծ յարգ ու պատիւ էր վայելում ոչ միայն հայոց մօտ, այլ և յունաց պատրիարքների, եպիսկոպոսների, հրէայ խախամպակաների և տաճիկ երեւելիների կողմից: Մինչև անգամ յոյն նշանաւոր ամիրաներ իրենց որդիների կրթութեան և յունարէնի ուսման գործը յանձնել էին նրան: Իսկ հայ ամիրաները՝ ոչ միայն իրրև անային ուսուցիչ վարձել էին նրան իրենց որդիների դաստիարակութեան համար, այլ և իրենց սիրելին ու խորհրդականն էին դարձրել՝ ազդային գործերի կառավարութեան մէջ: 1810 թուին՝ երբ հայերի և կաթողիկոսների կրօնական միութեան հարցը բացուելով՝ մեծ ժողովներ տեղի ունեցան Պատրիարքարանում հայ հոգևորական դասի և ուսեալ առաուածարան վարժապետների մասնակցութեամբ, այնտեղ էր նաև Գէորգ Գոլթրը և պաշտպանում էր հայ դաւանութիւնը:

Գէորգ Գոլթրի աշխատութիւնները բաժանուում են հետևեալ ձևով.

1. Թարգմանութիւններ.— Գիրք մեծագին

և պատուական ականց (պարսկերէնից), Յաղագս  
գորութեանց կերչեաց, Դիւցարանութիւն, Պատ-  
մութիւն Տրովպոյայի, Վէմ զայթակղութեան,  
Ազատիտոս, Գիրք Պարապմանց Կիւրղի (չունա-  
րէնից), Սաղմոս Դաւթի (նոր թարգմ. երբայե-  
ցերէնից) :

2. Լեզուական զործեր.— Ոտանաւոր բառա-  
բան Պարսկերէն, Ընդարձակ բառարան պարս-  
կերէն—հայերէն, Արաբերէն ընդարձակ բառա-  
բան, Քերականութիւն պարսկերէն, արաբերէն,  
հայերէն: Սոցանից ամենամեծը և Գէորգ Գպրի  
զլուխ գործոցն է համարուած Պարսկ.—հայերէն  
ընդարձակ բառարանը (տպ. Պօլիս 1826), որի  
նման աշխատութիւն բիշ լեզուի մէջ կայ: Հե-  
ղինակը զրքի վերջում գրել է 400-ից աւելի հա-  
յերէն բառերի համեմատութիւնը պարսկերէնի  
հետ, որոնք ոչ միայն ստոյգ ևն մեծագոյն մա-  
սամբ և համապատասխանում են գիտութեան  
արդի խօսքին, այլ և այս առաւելութիւնն ու-  
նին որ հնագոյն հայ ստուգարանութիւններն են:  
Այս տեսակէտից մենք չենք վարանում անուա-  
նել Գէորգ Գպրին իրրե հայ լեզուաբանութեան  
առաջին ուսովիրան:

Այս երկու շարք աշխատութիւնները բնա-  
կան է առանձնապէս կապ չունին բուն գրակա-  
նութեան հետ: Գէորգ Գպրի բուն գրական գոր-  
ծերն են իւր պատմական աշխատասիրութիւննե-  
րը, որոնք են.—Պատմութիւն վէզիրներուն օս-  
մանցոց տէրութեան (անտիպ ընդարձակ գործ),  
Պատմութիւն օսմանեան (տպ. 1741) որ մեծ

մասամբ թարգմանել է Հասան Բէկ-Ջաղէ պատմագրից, ուրիշ աղբիւրներից շարունակելով և հասցնելով մինչև 1728 թիւը. Պատմութիւն օսմաննան, նախորդից տարբեր, ընդարձակ աշխատութիւն, որից օգտուել է Այվազովսկին իր Օսմանեան պատմութիւնը կազմելիս, և որը այժմ կորած է:

Հայ գրականութեան համար առանձնապէս կարևոր է Գէորգ Գպրի Հայոց պատմութիւնը: Այս աշխատութիւնը կազմելու համար հեղինակը չքաւականանալով առձեռն աղբիւրներից, ձեռնարկել է գիտական ուղևորութեան դէպի Փոքր Ասիա, Հայաստան ու Կովկաս, այցելել է շատ վանքեր, ուսումնասիրել է հին ձեռագրեր, արտագրել է շատերը, և շատերն էլ գնելով՝ Պօլիս է վերադարձել: Շամախի եղած ժամանակ զբառնում է Եւսեբիոսի Քրոնիկոնի հայերէն թարգմանութեան միակ օրինակը, որի յոյն բնագիրն էլ կորած լինելով, տիեզերական նշանակութիւն ունէր ընդհանուր գիտութեան առջև: Օգտուելով ձեռք բերած այս ընդարձակ պաշարներից, Գէորգ Գպրիը ձեռնարկում է վերջնապէս աշխատութեան և պատրաստում է երկու հատոր ընդարձակ Հայոց Պատմութիւնը, որ և յանձնում է մի ամիրայի՝ հրատարակութեան համար: Բայց լոյս տեսնելուց առաջ ձեռագիրն անյայտանում է...:

Այվազեան ասում է թէ Գէորգ Գպրի յիշեալ գործը Չամչեանի պատմութիւնն է:

Այս բոլորից դուրս Գէորգ գպրի ունի նաև

մի Երզնարանի, որտեղ հաւաքուած են եղել իր բանաստեղծութիւնները. բայց այս գրուածքը անտիպ լինելով, անկարող ենք սրեւէ կարծիք յայտնել նրա մասին:

Կեանքի վերջին տարիներում՝ Գէորգ Դպիրը բուրբովին քաշուած է Պալաթի եկեղեցու մի խցիկը, և այնտեղ, զրքերի ու իր աշխատութիւնների մէջ խորասուզուած, անց է կացնում իր վերջին օրերը, մենակեացի անշուք կեանքով: 1812 թ. ծանր հիւանդանալով մեռնում է և թաղոււմ մեծ շքով. նա արդէն ազգի սիրելին էր դարձել. ազգային բարեբար Պէղծեան Յարութիւն ամիրա կանգնոււմ է նրա վրայ մի փառաւոր շիրքիմ: Գէորգ Դպիրի կտակով իր անտիպ աշխատութիւնները ուղարկոււմ են Վենետիկ, Պօլսում կորչելու վտանգից ազատելու համար:

## 2. ՍԵՐՈՎԲԷ ՊԱՏԿԱՆԵԱՆ

(1760—1837)

Ե. Շահազիզ, Տէր-Գարբէլ Պատկանեանց.  
Թիֆլիս 1910.

Ա. Խաչիգեանց, Երգք Սերովբէ վարժապետի Պատկանեան. Մոսկուա 1857.

Սերովբէ Պատկանեանը ծնուել է Պօլսի Ղալաթիա թաղում՝ 1760 թուին. նրա հայրը նոյն թաղի Ս. Լուսաւորիչ Եկեղեցու բահանայ՝ Տէր Պետրոս Պատկանեանն էր: Սերովբէն մի ժիւր, աչքաբաց ու խելօք մանուկ է լինում, որ իւր

վրայ է դարձնում այն ժամանակ յայտնի Մար-  
գար Խոջենց Զմիւռնացու ուշադրութիւնը, և նրա  
հոգացողութեամբ ուղարկում է 1779 թուին  
Վենետիկի վանքը՝ ուսանելու Այս տեղ վեր-  
ջացնելուց յետոյ՝ շարունակում է նաև Տրիեստի  
վանքում, և ընդ ամէնը եօթ տարի Մխիթարեանց  
մօտ սովորելուց յետոյ՝ վերադառնում է Պօլիս՝  
իւր ստացած մտաւոր լոյսը տարածելու իւր  
հայրենակիցներին խաւար շրջանում: Այս նպա-  
տակով Պօլսում բաց է անում մամուլւոր դըպ-  
րոց. քիչ ժամանակից Սերովրէի անունը տարած-  
ւում է իրրև հմուտ հայկարան: Մի բանի տարի շա-  
րունակելուց յետոյ՝ կեանքի ձախորդութիւններից  
ստիպուած, Պատկանեանը փոխադրում է Տփղիս  
(1794), ուր նոյնպէս բաց է անում դպրոց: Կով-  
կասում և Թուսաստանում աւելի ևս տարածւում  
է նրա հռչակը. Յովսէփ Արղութեանը լսելով  
նրա գովասանքը՝ տալիս է նրան «Վարժապետ  
Հայոց» տիտղոսը. Եփրեմ և Ներսէս արքեպիս-  
կոսոսաները իրենց բարեկամութիւնն ու հօր  
պաշտպանութիւնը նուիրում են սիրայօժար-  
Քիֆլիս, Ղլլար, Նոր-Նախիջևան և Աստրախան՝  
ձեռքից ձեռք են բաշում նրան՝ իրենց զաւակ-  
ների գաստիարակութիւնը յանձնելու համար:  
1806-ին նա անցնում է Նոր-Նախիջևան, ուր ա-  
ռաջին անգամ ձեռնարկում է վերացնել հայ դըպ-  
րոցից խալիֆայական կարգերը և մտցնել եւրո-  
պական կարգերը՝ սր սեպի էր Վենետիկի և  
Տրիեստի Մխիթարեանց մօտ: 1809-ին՝ երբ Աս-

տրտխանում բացուում է Ազարարեան վարժա-  
րանը, Եփրեմ նորընտիր կաթուղիկոսը անձամբ  
փոխադրուում է նրան Աստրախան, նրան է յանձ-  
նում զպրոցի գլխաւոր վարժապետութիւնը, և  
ցոյց տալու համար իր առանձին սէրն ու համակ-  
րանքը՝ ժողովրդի ներկայութեամբ քարոզ խո-  
սելով՝ աւախ է նրան իր մատի մատանին, և  
թասակ ու գաւազան կրելու իրաւունք, որ յա-  
տուկ էր միայն աւազ քահանաներին: Սերովբէ  
Պատկանեանը մնում է Ազարարեան զպրոցուում  
մինչև 1821 թիւը. այնուհետև միևնոյն քաղա-  
քում բացուում է Հոգևոր վարժարանը. Սերովբէն  
հրաւիրուում է նոյն զպրոցի տեսչութեան պաշ-  
տօնին, միւս կողմից ներսէս Աշտարակեցին ցան-  
կանում է նրան ներսիսեան զպրոցը փոխադրել,  
երբորդ կողմից Գրիգոր եպս. Զաքարեանը հրա-  
ւիրուում է Քիչնէ, բայց սոցանից ոչ մէկը չի յա-  
ջորում. և Սերովբէն մի քանի տարի անպաշտօն  
մնալուց յետոյ, վերջապէս հրամարուում է վար-  
ժապետական պաշտօնից՝ տկարութեան պատճա-  
ռով: 1827-ին գնում է Նոր-Նախիջևան, ուր հրա-  
ւիրուած էր որդին Գարբիէլ Պատկանեանը՝ ու-  
սուցչութեան պաշտօնով. այս տեղ մի քանի  
տարի մնալուց յետոյ՝ 1836 թուին դարձեալ անց-  
նում է Աստրախան, ուր և մեռնում է:

Սերովբէ Պատկանեանը գրել է մի խումբ  
զրարար ստանաւորներ, որոնց մեծ մասը իր մա-  
հից յետոյ հաւաքուելով հրատարակուել են ա-  
ռանձին հատորի մէջ (Մոսկուա 1857): Այս հա-

տարածոն պարունակում է 29 երգ, որոնցից 11-ը  
գրւած կրօնական տաղեր են, մնացեալը պատմա-  
կան ու զօղարանական տաղեր: Կրօնական եր-  
գերը՝ որոնք նուիրուած են Քրիստոսի ծննդեան,  
Յնաչի, Աստուածածնի, Յարութեան և այլն, գրը-  
ուած են հին հայոց գանձերի սճով. և ինչպէս  
հրատարակիչը յայտնում է գրքի յառաջարանում,  
առանձին եղանակներ յարմարեցրած՝ երկար  
ժամանակ երգուած էին եկեղեցիներում կիրակի  
և տօն օրեր: «Պօլիս, Աստրախան, Արաստան,  
Ղզլար և Նոր-Նախիջևան մինչև այսօր անլուրի  
մնաց նրա երգերի արձագանգը, ասում է հրա-  
տարակիչը. նրանք այնպէս քաղցր են թւում  
ժողովրդին, որ չի լինում մի հանգէս կամ ու-  
րախութիւն, ուր նրա երգերը չհնչուին, երիտա-  
տարդը կամ պատանին այն ինչ զուարթացած  
գինիով՝ սկսում է նրա երգերից մէկը և հանդի-  
սականները զմայլած լսում են երգի քաղցր բա-  
ռերն ու ներդաշնակ նուագը: Գարուն ու ամառ՝  
դաշտերն ու անտառները նրա երգերով են զուար-  
թանում և լեռներն ու ձորերը նոցա ձայնակից  
են լինում հետուից»:

Կարգալով այսօր Ս. Պատկանեանի երգերը  
և համեմատելով այս տողերի հետ, կը տեսնենք  
որ տրուած զօվեստը շափաղանց է: Երգերը հա-  
տարակ բանաստեղծութեանց աստիճանից չեն  
բարձրանում. ոչ լեզուի գեղեցկութեամբ և ոչ  
բովանդակութեամբ կարող են նրանք հմայել  
ընթերցողին: Եւ եթէ հայ ժողովուրդը ցոյց է

տուեի աշնպիսի սիրալիր բնդունելութիւն, այդ պէտք է բացատրել միայն արքայ գրական ամբուլութեամբ: Փողովուրդը պէտք ունէր հողեկան բաւականութեան, երգի. նրան տալիս էին կրօնական վիճարանութիւններ, աստուածաբանական դժուար խնդիրների բացատրութիւնը, քերականութիւններ... և երբ երեան էր գալիս մի տաղերգու, որի երգերը՝ թէկուզ նուազագոյն չափով բաւականութիւն էին տալիս իր սրտի պահանջներին, նա սիրով բնդունում էր նրանց:

Իբրև ճաշակ Սերովբէ վարժապետի կրօնական տաղերի, մէջ եմ բերում այստեղ «Ի մանկունս Բեթղեհեմի» վերնագրով ստանաւորը, որ նրա գործերի մէջ ամէնից յաջողուածն է:

Արթունք զուարթունք,  
Բանին բանաւոր ծիծաունք,  
Գարնան աւետիք,  
Գրախտին գոյնզգոյն ծաղկունք.  
Եւ քաղցրաճաշակք,  
Չարմին գանազան մրդունք.  
Էղիմ շնչական,  
Ընտրեալ աղաւնեաց ծաղկունք.  
Թոշունք թեաւորք,  
Փողով ձեր ի ծառ, ի տունկ  
Ի ծամ գիշերի  
Լոյս լուսակարկաջ աստղունք.  
Մնկօրեր լիբանց ծառ,  
Մաղկաքաղիկ հաւունք.  
Կարմիր տերևունք,  
Հոտ անմահութեան բուրմունք.  
Չայն քաղցրագուարճք,  
Ղամբարապայծառ մանկունք.

Ճողովից գնայիր,  
Մէջ բեթղհեմի մանկունք,  
Յիսուս ծնանէր,  
Նա՛ դուք խոյտայիր, մանկունք,  
Շրտուցեալ գնայիր,  
Ուրախ և բերկրեալ մանկունք,  
Չկայ ձեզ նման,  
Պարծանաց ծնողաց ծնունդք,  
Ձուրք մանրամասալ,  
Ռահ երկնագնաց թիթուներ,  
Սուրբ Կարապետին  
Վերայ գրկարարձիկ սանունք,  
Տեասն իջեալ յերկնից՝  
Ըստ արձաթափայլ մանկունք,  
ՅՊետրոս հարցանէր,  
Ի իս զձեզ սրածել գառունք,  
Փթթեալ վարդենիք,  
Բրիտանսի ճոկեալ եղունք:

Ինչպէս տեսնում ենք, երգը ներկայացնում է պատկերներ ձի տմբողջ շարք՝ սրտնք արագ արագ յաջորդում են միմեանց՝ գոյների յաջող գոնազանութեամբ, գրարար լեզուն է միայն, որ իր սեղմութեամբ գրեթէ միշտ ծածկում է պատկերների զեղեցկութիւնը. և եթէ նայնք աւելի պարզուած և աշխարհիկ լեզուի վերածէինք, անշուշտ պիտի ունենայինք քնարական բանաստեղծութեան մի զեղեցիկ կտոր: Համեմատել օրինակի համար Ձուրք մանրամասալ... տողերի թարգմանութիւնը.

Դուք ալիքներ էիք, որ մանր մանր ծաւալեցաք,  
Դուք թիթեաներ էիք, որ երկնքի ճամբան գնացիք,  
Ու սուրբ Կարապետի գրկում սանիկներ գարձաք:

Պատկանեանքի պատմական տաղերը նուիրուած են սուս սանկական և սուս-պարսկական պատերազմներին: նրա երգերին նիւթ են գարձել Տփղիսի տերութը Պարսից ձեւարով, Յիցիանովի յողթլանակը, Գանձակի առումը, Գուրիթ-Գանիէլիան զէճերը, Էջմիածնի տղատութիւնը և այլն: Գոյարանական տաղերը նուիրուած են ժամանակակից նշանաւոր անձերին՝ Լուսոյ Աղլբաւանդը Ա. և Նիկողայոս Ա. կայսեր, Եփրեմ կաթուղիկոսին, Աստրախանի առաջնորդ Յովհաննէս արքեպիսկոպոսին և սուսոյ Գայիսս արքեպիսկոպոսին, Ներսէս Աշտարակեցուն և այլն: Այս բոլորը շատ աւելի անյաջող են քան կրօնական տաղերը: ներշնչման՝ պետութեան բացակաութիւնը զգալի է:

### 3. ԳՐԻԳՈՐ ՊԱՏՈՒԵԼԻ ՓԷՇՏԻՄԱԼՃԵԱՆ

(1773—1837)

Ա. Պէրպլերեան Պատմ. Հայոց

Բ. Արեղեան. Ուրուպոյճեր 19-րդ դարու գրականութեան. Արարատ 1909, 321—9.

Վերջ Գրքին ժամանակակից է Գրիգոր Փէշտիմալճեանը, որ ծնուել է Պօլսում 1773 թ.: նա նշանաւոր է դարձել իրը նշխարան, սասուածարան և բանաստեղծ: ժամանակակիցները մեծ գովեստով են իտում նրա մասին և շին յիշուս

նրա անունը՝ առանց «պերճիմաստ, դիտնական, մեծիմաստ, սասոււածիմաստ, բազմերախտ հայր» մակղիրներին: Գրեթէ իր ամբողջ կեանքը անցըրել է վարժապետութեամբ, հասցրել է բազմաթիւ աշակերտներ, որոնցից մէկն է Գէորգ Գ. կաթուղիկոսը: Նա մասնակից է եղել նաև ազգային գործերին, յատկապէս կաթողիկէներէ հետ անգլի ունեցած վեճերին և միաբանական ժողովներին: 1810-ին, երբ Յովհաննէս պատրիարքը ժողով գումարեց պատրիարքարանում՝ երկու հասուածներէ միութեան մասին խորհրդակցելու, Գէորգ Գպրի հետ ներկայ էր նաև Գրչգոր վարժապետը: 1814-ին Աբրահամ պատրիարքը պաշտօն յանձնեց նրան գտնել և հրատարակել մի աշխարհի հին ձեռագիր Շարական, որ չլինէին «Ով Հրաշալի» շարականի վերջին երեք աները, որովհետև այս աներն էին որ սաստիկ խրտչեցընում էին կաթողիկէներին: Փէշտիմալճեան յաջողութեամբ կատարեց այս առաջարկը: Բայց նորատիպ Շարականը խոսովութիւն ձգեց ժողովրդի մէջ, որոնք բողոքեցին պատրիարքին. Փէշտիմալճեանը բանտարկուեցաւ և քիչ էր մնում արտօրուէր ազգային վարչութեան ձեռքով, եթէ բարեկամ ամիրաներ չմիջամտէին և չազատէին նրան: 1820-ին «Հրաւեր սիրոյ» տետրակի ասթիւ գումարուած ժողովում զարձեալ ներկայ էր Փէշտիմալճեան և մէկն էր զլիտաւոր զերականաարներին: Այս ժողովում հայերը շատ զիջումներ արին և ձեռք բերին կաթողիկ հայերի միութիւնը:

Բայց Գուլճեհանները նորից խառնակութիւն ձգեցին՝ պապի կողմից նշույթի թուղթ բերելով: Փէշաբաձաձեանը այս առթիւ հրատարակեց իր Յայտարարութիւնը՝ որով դատախեատւ էր նոցա այս զրգոխ աբարքները:

1837 թ. դեկտ. 30-ին մեռաւ Փէշաբաձաձեան՝ 64 տարեկան հասակում:

Ասանց հաշուելու հին հայ մատենագրութեանց հրատարակութիւնները, որոնցից զխաւսըն է Յայսմաւուրքի երրորդ տպագրութիւնը (սրբադրուած ու համառօտուած), Փէշաբաձաձեանի աստուածաբանական ու հայկաբանական գործերն են՝ Տրամարանութիւն (տպ. 1854), Բերականութիւն (տպ. 1829), Լուսաշարիղ կամ Հանգանակի քայսատրութիւն (տպ. 1848), և Բառզիրք Հայկազեան լեզուի: Վերջինը կարելի է կոչել Փէշաբաձաձեանի զուխ գործոցը: Երկու հատոր պատկանելի աշխատութիւն է այն՝ 2000-ից աւելի մեծազիր երեսներով, որ հեղինակի մահից յետոյ Յովհաննէս Տէր-Պօղոսեանը հրատարակել է (Պօլիս 1844): Դրուածքը՝ ինչպէս յառաջաբանում էլ ասուած է, քաղուած ու ամփոփուած է մինչև այն ժամանակ հրատարակուած զանազան հայ բառարաններից, զխաւսորակէս Վենետիկի նոր Հայկազեան Բառարանից: Մտացուած բառերից մի մասն էլ աւելացրել է հրատարակիչը: Բառզիրքը թէև խոշոր գործ, սակայն զխտական ու հայկաբանական տեսակէտից շատ կողմերով պակաս է Վենետիկի Հայկազեանի արժանիքից:

Փէլչախմալճեանը հեղինակել է նաև մի մեծ Ստուգարանական Բառարան, որը հրդեհի ժամանակ (1816) ամբողջապէս այրուել է: Ազատուել է նրանից միայն մի թերթիկ, որ Տէր-Պօղոսեանը տպել է յիշեալ Բառարանի յառաջարանում: Այս կտորից երևում է որ աշխատութիւնը հին պատուելիական զգրոցի սճով անմիտ մի գործ էր և գիշտութեան պահանջներին բարոյութիւն անհամապատասխան:

Փէլչախմալճեանի բանաստեղծական գործերի մէջ ամէնից նշանաւորն է «Գիմաստութիւն ի շարչարանս Քրիստոսի», որը գրել է 1820 թուին, բայց 25 տարի ամբողջ անյայտ մնալուց յետոյ՝ վերջապէս Պօլսի Մատթէոս պատրիարքի ջանքով և մի ամիրայի ծախսով լոյս է տեսնում (Պօլիս 1845), էման գնով վաճառուելու համար:

Հեղինակը յառաջարանում յաշանում է թէ այս աշխատութիւնը պատրաստել է զգրոցական մտնուկների գրասիրակութեան համար, որպէս զի ամէն ժամանակ կարգաւոր, սպասին նրա բարի խրատներից և Քրիստոսի խաչելութեան սրինակը կշեն իրենց անձի մէջ: Պէտք է ասել սակայն որ Գիմաստութիւնը մանկական գրասօժր լինելուց շատ հետո է:

Գիմաստութիւնը՝ որ մի ընդարձակ բանաստեղծական գործ է (305 էջ, սեթսնեան շափով), բաժանում է երեք մասի: Առաջին մասի մէջ ներկայանում է Ս. Կոյսը՝ խաչուող Յիսուսի առաջ և տեսնելով նրա դասն շարչարանքները:

ողբում, բողոք է ուղղում երկնքին ու երկիրին, նրեշատկապետին, արեւելքի աստղին ու մողերին, Բեթղեհեմի մանուկներին, Եղիսարեթին, Յովն, Մկրտչին, Ախէն՝ ձերտնուն, Մովսէսին ու Լիզիային, Ղազարոսին, նախահայրերին, Չիթենեաց լեռան և նոցանից մխիթարութիւն է խնդրում իւր ամենչափ սրտի համար: Եւ նրանք մի ասմի խօսք են ասնում, լիզու են եղնում երկիրնն ու երկիրը, աստղը, մեռած մանուկները, սնչունչ լեռաը, պատմում են Քրիստոսի նրաշարժութիւնները, մխիթարում մօր խոցուած սիրտը: Երկրորդ մասի մէջ՝ Յիսուս գամուած թաշի վրայ՝ արտասանում է իւր եօթը պատգամային խօսքերը. Հնչը, թնո սոցա, զի ոչ գիտեն, զինչ գործեն — Այսօր ընդ իս իցես ի գրախաին, — Կին գու, սնն սրդի քո. — Աստուած իմ, Աստուած իմ, ընդէր թողեր զիս. — Ծարաւի եմ. — Ամենայն ինչ կատարեալ է. — Հնչը, ի ձեռս քս աւանդեմ գնոցի իմ: — Հեղինակը այս եօթը խօսքերից իւրաքանչիւրի վրայ առանձին գլխով արամախօսութիւններ է գնում Ս. Կոյսի, Յիսուսի, աւագակի, ներկայ նրեաների և անցորդների մէջտեղ: Մեանում է Յիսուս, զգրգում են երկիրն ու երկիր, արեւը, երկիրը լիզու են ասնում, գերեզմանները նրախրում են Տիրոջ մարմինը՝ բնակելու իրենց մէջ, դժոխքի հողիները նրձուում են, սրովհետեւ անս կը գայ Տէրը՝ ապաակելու իրենց դարաւոր գերութիւնից:

Երրորդ մասում՝ Քրիստոս մարմնով շիրմի

մէջ է, իսկ հողին մանում է դժոխք, կանչում է արդարների հողիները. մի առ մի գալիս են Ադամ ու Եւա, Աբէլ, Սէթ և բոլոր նախահայրերը, մարգարէները և այլն, իւրաքանչիւրը պատմում է համառօտ իր գործը և Քրիստոսի ողորմութիւնն է խնդրում: Բոլորը արքայութեան բաժին են դառնում: Առանձին մի գլուխ նուիրուած է Սողոմոնի դատաստանին. առ էլ նախորդների նման Քրիստոսի ողորմութիւնն է խնդրում, բայց նա մի առ մի յիշում է նրա շար գործերը և դժոխքի բաժին թողնում. սակայն նրա թախանձանքից զթաշարժուած՝ վերջապէս ներում է: Այնուհետև նկարագրուած է դժոխքը. այստեղ են բոլոր մեղաւորները, Կայէն, Բէլ, Սողոմ ու Գոմոր, Փարաւոն, Եղիպտացիք, պարսիկ մոգերը, իւրաքանչիւրը իր վիճակն է ողբում, զղջում: Արանից յետոյ պատմուած է Քրիստոսի յարութիւնը, համբարձումը, և Հոգեգայտեան տեսարանով փակուած է գիրքը:

Ամբողջ գիրքը գրուած է սահուն գրչով, պարզ ու յստակ լեզուով. գրաբարը Փէշտիմալճեանի գրչի տակ աւելորդ խոժոռութիւններ, ճամբարակ բացատրութիւններ չունի: Ամբողջութիւնը միահեռա՝ նիւթի միօրինակութեան հակառակ, մինչև այսօր էլ հետաքրքրութեամբ կարդացուած է: Առանձին կենդանութիւն է տալիս նաև այն հանգամանքը, որ գործը ծայրէ ի ծայր արամախօսութիւն է, ինչ որ առաջին անգամ էր երևում մեր գրականութեան մէջ:

Գաղափար կազմելու համար զբուսածքի մասին, կը գնենք այստեղ 4 հատուած՝ նրա ամենայաջող էջերից:

1. Հրեշտակի անէծքը սատանային՝ Յխուսի խաչելութեան տոթիւ.

Ահա խաչին նեա լայնայիճ,

Մըխի ի սիրտ քո սայրալից...

Գործիք մահուն անմահ Փրկչիս

Խլին ըզքո սըբեալ ժանիս...

Թուք և ապտակ Հաստչին երկնից

Քեզ անընկէց սուժք սատակիչ...

Եզէզն անշուք գաւազանիս,

Զոր հնարեցեր մեծ Արքայիս,

Լիցի մահակ զլիսոյդ ջաղխիչ,

Ոչ սք գտցի քեզ կարեկից:

Փուշք պըսակին թաղաւորիս

Լիցին խայթոց քեզ խոցոտիչ.

Հարցիս վիրօք շարաւալից,

Եւ ոչ գտցես ըսպեզանիս:

Երկաթագամ սևեռք ստից,

Որով պնդեալ կայ ի վայտիս,

Նոքիմբք անլոյժ բեռեւցիս

Ի յախտեանս յախտենից:

Որ ըզքացախն և ըզլեզիս

Ետուր ըմպել կենարարիս,

Դառնացուսցեն ըզքոյդ ըզքիմս

Սաստիկ քան զայն, յոր զըտանիս...

Խնդրես ըզմահ, այլ ոչ մեռցիս...

2. Յարութիւն առած Ղազարոսը սատանում է

Իր անդրաշխարհի կեանքը.

Ենաս օրհաս կենաց հերոյս.

Փամանեցի ի բանտ անլոյս...

Յուժան զիւաց անդընդասոյց

Պըտուակէին զինև ի խոյզ.

Ըսպանոնային ըզցաւս անբոյժ,

Ըզհուր անշէջ, զանմեռ սրղունս:

Ուր խանչէին որպէս ըզխող

Ամբարըշտաց ժողովք յայլ կոյս.

Ի ծով հըրոյ ծըծըմբայոյց

Ի լեզ անկեալ որպէս զեսունս:

Օձք և կարիճք զեղուն թոյնս

Որպէս ըզզետս առատահոս.

Գազանք հըրէշք սուր ի լեզուս

Գիշատէին ըզմեղաւորս:

Անդ էր վիշապ մեծ մահագոյժ,

Օձատըտուն, անճոռնի յոյժ.

Որ անուանէր Բէկզգեշուդ,

Իշխան զօրացըն խուժագուժ:

Մինչ պակուցեալ կայի անխոյս,

Ուր էր ազքատըն Ղազարոս,

Ահա ձայնիս գոչեաց Յիսուս.

«Ե՛լ Ղազարոս և եկ ի դուրս»:

Յայնժամ շարժեալ զբանց զժոխոց,

Խըտվեցան անդունդք խորոց,

Զահի հարեալ գումարք այսոց,

Մատեան միմեանց ի հարց ի փորձ:

Այս ի՞նչ, այս ի՞նչ ասեն այլոց.

Գոչեաց առիւծ անկապոչ.

Իբրև ամպրոպ շրփոթ ամպոց՝  
Զամենեսին ահիւ պակոյց:  
Անդ բանասրկուն ձայնէ նոցին...  
«Ահա այս ձայն է արարչին,  
«Որ զըզըրդեաց զամենեսին...»  
Պատասխանի տան դեք համայն.  
«Զի՞ դադարիս իբրև կարկամ,  
«Բանակ կազմեսն զօրուդ երամ,  
«Կացցուք պատրաստ ի պատերազմ...»:  
— «Ոչինչ զօրեն մեր այս հընարք,  
«Նա է հրզօր, և մեք տըկարք,  
«Որպէս խըսիւ առ վառ կըրակ:  
«Կիզու ծախէ զմեզ բովանդակ...»  
3. Տրամախօսութիւն խաչուած Յիսուսի և  
Ա. Կուսի մէջտեղ.

Տէրն

Կի՛ն, ԴՈՒ, ԱՀԱ՝ ՈՐԴԻ ՔՈ՛.

Կոյսն

Դու ևս զլիտոյս փառաց պատկ,  
Աչաց իմոց լուսոյ տեսակ.  
Դու ևս սըբախ պայծ սո ձըրազ,  
Կենաց իմոց կեանք բովանդակ:  
Ապա զբնորդ մեկնիս, Ո՛րդեակ,  
Որ սիրէիր սիրով անքակ.  
Քեթե թուին ցաւքս իմ համակ,  
Զըկիրս ի բէն գառն է միակ:

Տէրն

Մի թառամիր մեռօրինակ,

Լուսածաղիկ վնասը երփնհրանդ,  
Քաղցր է ինձ յոյժ սիրոյդ բաժակ  
Քան ըզզիւնի բաղցրաճաշակ:  
Տանջանք մարմնոյս զերթ մատուակ  
Արրոյց ըզսէր քս զանապակ,  
Որ և յաւել զիմս ախորժակ  
Քան նըռնենեաց ջինջ օշարակ:  
Կալայ ըզքեզ, ոչ թողից ցանդ,  
Ոչ մեկնեացեն թէ մահ, թէ կեանք,  
Եզի ըզքեզ յոգւոյս սենեակ  
Որպէս կընիք յսկի մանեակ: ...  
Թո՛ղ ինձ, մայր իմ, զի ցաւքս անձին  
Վշտացուցեն զիս առանձին,  
Ապա թէ քոյդ ինձ յաւելցին,  
Տազնապ Որդւոյդ լինի կրկին:  
Տեսիլ քոյին ողորմագին  
Եւ մոռանալ զհարուածս զանին.  
Եւ սրբատուչ կիրք քս ներքին  
Անց ըզցաւօք փըշեայ պսակին:  
Անձայն բարբառ քս լալազին  
Յունկըն հոգւոյս հնչէ ուժգին: ...  
Ինձ դառնացան աղէտք քոյին,  
Քան զոր արբի դառն և լեզին.  
Եւ հեծութիւնքդ արտօսբաժին  
Ըզձօց սրախ արեամբ լըցին:

Կոյսն

Լըռեա՛, ազնիւ աղաւնի իմ,  
Եւ սղբացից կըսկըժագին.

Գուցէ նովիմբ թեթեացին  
Յարբս ծանունք, որ ինձ հասին: ..  
Ասա փոխադարձ ցաւք են կրկին,  
Իմ վասըն քո, և քոյդ վասն իմ: .  
Ես ի սէր քո, դու ի խաչին:

4. Սողաման գութ է աղերսում Յիսուսից.

Տուիչ կենաց և Տէր մահու,  
Չունիմ կարիս պատասխանոյ:  
Որ ես բըննիչ գազանեաց խորոց,  
Ձիւնչ օգնեսցէ բան և լեզու:  
Ահա կալայ զԲըժիշկդ հողոյ,  
Թողից մեկնիլ յիմ անկողնոյ:  
Մեռայց մեռայց, այն այն,  
Քան հետացայց ի քոյդ հետոյ:  
Գըտի զազբիւր կենդանատու,  
Ոյր ցանկայի իբր ևղջերու:  
Յե՛տըս դարձայց ի սոյն պահու  
Տանջիլ յաւէժ ի ծարաւոյ: ...  
Յօղ քաղցրութեան ցօղէ յամպոյ  
Առատագեղ քոյին գըթոյ:  
Տոչորեցանց ես ի սօթոյ  
Ըստ անջրդի խողան անոյ:  
Երամբ թուչնոց հանդերձ ձաղու  
Կըտին ըզրոյն ի յանդորբու:  
Ես մընչեցից որպէս բուոյ  
Յաւերակի թարթափելոյ: ...  
Նաւահանդիստ խաղաղ ծոցոյ  
Բազմաց եղեր յալեաց ծովու:  
Ձիս խաղալիկ թողուս հողմոյ

Ամենուստեք մըբըրկելոյ...  
Մինչև ցեօր աստ, մի Այցելու,  
Կողկողեցոյց աղերսարկու:  
Այլք յաղեցան անոյշ մեղու,  
Կերանց միայն ես ի լեզույ...

Գիմանութեան իրրև յաւելում՝ կայ նաև  
մի շորբորդ մաս, որ կապ չունի Տրամախօսու-  
թեան հետ, և պարունակում է 16 կտոր աղօթք՝  
Հօր Ասածուն, Որդուն, Հօդուն Սրբոյ, Սաչի,  
Աստուածամանի, Եկեղեցու, Ս. Էջմիածնին, Ասաք-  
եալներին, Լուսաւորչին, Սո Ս Արար Քա-  
ղաւոր Հայոց, Հրեշտակներին, Աս Ս. Տրդատ օրբայ  
Հայոց, Աս բազմերախտ հարս մեր Ս. Քարզմա-  
նիչան, Աս Ս. Ներսէս Ծնորհալի, Աս Ս. Վար-  
դան Մամիկոնեան և Աս Ս. Յովհ. Մկրտիչ: Այս  
աղօթքները գրում են ոսանաւոր չափով. մի-  
օրինակութիւնից խուսափելու և ընթերցողին  
ձանձրոյթ չպատճառելու համար հեղինակը գիտէ  
ճարտարութեամբ փոփոխել իր չափը: Բոյսըն էլ  
բարեպաշտ զգացումներով զեղուն՝ առլի են: Այս-  
տեղ մեղաւոր մարդը նկարում է իր Աստուծոյ  
մեծութիւնը, նրա փրկարար զօրութիւնը, փառքը-  
յետոյ ներկայացնում է իր սկար վիճակը, մո-  
լորութիւնը. մօտ է ահա կորսալի փառը ընկնելու.  
խնդրում է Տիրոջ ու սրբերի սղորմութիւնը:

Այն հանգամանքը որ աղօթքներից շատը  
ուղղում է նայ սուրբերին, մասնանիշ է անում  
մի գիծ, որ յատկապէս շեշտել պէտք է. աղղա-  
յին գիծը Փէշտիմալճեանի մէջ, նոյն իսկ ներ-  
շնչման աշտգիտի խոր րոպէներում:

#### 4. ՅՈՎՀԱՆ ՄԻՐՁԱ ՎԱՆԱՆԴԵՑԻ

(1772—1840)

Վարբ հեղինակի Ոսկեդարուն. (տես Ոսկե Գար Հայաստանի, էջ 1—16):

Մ. Արեղեան. Ուրուագծեր 19-րդ դարու հայոց գրականութեան պատմութիւնից. Արարատ, 1909, էջ 417—438:

Ծնուել է 1772 թուին Վան քաղաքում. աշխարհական անունն էր Ամիրզառէ. չորս տարեկան հասակում հօրից որբ մնալով՝ մօրն ու եղբայրների հետ աւուր հացի կարօտ է մնում: Ութը տարեկան հասակում՝ մայրը տալիս է նրան Կոուց անապօտը, ուր աշակերտում է Գոսպօր վարդապետին: Չարմացած նրա աշխուժութեան և մտքի արթնութեան վրայ՝ միաբանները շուտով տալիս են նրան չորս աստիճան և կոչում Յովհան: Յովհանը շատ էր փափագում տիրանալու կատարեալ ուսման, բայց իր այս փափագը լրացնելու համար չկային Վանում ոչ գպրոցներ և ոչ դիանական մարդիկ: Այս պատճառով 20 տարեկան հասակում՝ թողնելով իր հայրենիքը՝ գնում է Պօլիս: Այստեղ բերան է անում Մ. Գիրքը, Նարեկը, Շարականը, մինչև իսկ Բառարանը, և եկեղեցիներում առանց գրքի ընթերցուածներ էր անում: Վերջապէս յաջողում է մանկ Մայր Գպրատունը, ուր եօթ տարի աշակերտելով՝ սովորում է քերականութիւն, ճարտասանութիւն և արամարանութիւն: Թշուառ

էր նրա կեանքը պանդխտութեան մէջ. չկար  
մէկը որ սոցներ. և նա իր հացը հայթայթում էր  
որա նրա նամակները գրելով: Նրա թշուառ վի-  
ճակը, միանգամայն բարի վարքը, ուսման մէջ  
ցոյց տուած յառաջադիմութիւնը տեսնելով  
Շնորհք Մկրտիչ ամիրան, որ նոյն դպրատան  
հիմնադիրն էր, թոշակ է կապում նրան և յետոյ  
իր տունն ընդունելով՝ իր որդու նման պահում  
է: «Երգիչների երգը, նուագարանների սրտաշարժ  
նուագը, ասում է կենսագիրը, ոչինչ էին ամիրայի  
աչքում, և նա աւելի հաճոյքով լսում էր Յով-  
հանի սքանչելի ճառերն ու բանասիրութիւն-  
ները»:

Այս աշակերտական շրջանին են ընկնում  
Յովհանի մի քանի ճառերը, ինչ. Յիսուսի պայ-  
ծասակերպութեան վրայ, Ս. Աստուածածնի,  
Մայր Դպրատան, Շնորհք ամիրայի և իր երկու  
վարժապետների վրայ, Աստուծոյ ամենակարող  
արարչութեան վրայ, Աստուածընկալ Ս. Խաչի  
վրայ և Վիճարանութիւն Պօղոս պատրիարքի  
հետ: Մի անգամ՝ երբ Շնորհք ամիրան խնջոյք  
էր տալիս Զօքարիա պատրիարքին, հանդիսա-  
կանները խնդրում են Յովհանից մի ոտանաւոր  
պատրաստել իրենց խնջոյքի առթիւ: Իսկոյն  
Յովհանը պատրաստում է նոցա խնդրածը և հէնց  
սեղանի վրայ կարգում: Բոլորը հասնում են  
և իբր վարձատրութիւն՝ խնդրում պատրիարքից  
որ նրան մի բանաստեղծական տխրոս տայ,  
ինչպէս ընդունուած էր աշուգների շրջանում:

Պատրիարքը տալիս է նրան Վանանդեցի մակ-  
դիրը, և այնուհետև նա ճանաչում է իրր Եով-  
հան Վանանդեցի:

Վանանդեցու նպատակն էր գնալ Վան և  
իր հայրենակիցներին մէջ տարածել ուսման լոյսը.  
և մինչդեռ պատրաստում էր ճանապարհ ընկ-  
նել, Զմիւռնիացիք դիմելով Շնորհք ամիրային՝  
մի հմուտ վարժապետ են խնդրում Մեսրոպեան  
ղպրոցի համար: Ամիրան նշանակում է Վանան-  
դեցուն, և սա չկարողանալով մերժել ամիրայի  
հրամանը, անցնում է Զմիւռնիա՝ 1798 թուին:

Մեսրոպեան զղրոցը՝ որ Զմիւռնիոյ առա-  
ջին զղրոցն էր, բացուել էր 1775 թուին և  
սկզբում մի հասարակ խեղճուկ տուն էր: Վա-  
նանդեցին աշխատեց կարգի բերել, որչափ որ իր  
հմտութիւնը և ժամանակի յարմարութիւնները  
թոյլ կը տային: 1825-ին Զմիւռնիացիք քան-  
դեցին հին շէնքը և կանգնեցին մի նոր երկյար-  
կանի զղրոց, որ գարձեալ յանձնեցին Վանան-  
դեցու տեսչութեան, սցնտկան տալով նրան.  
Կալուստ քահանան, Վանանդեցին այժմ աւելի  
բարձրացրեց զղրոցի կրթական մակարդակը,  
հասցրեց բաղձաթիւ աշակերտներ, որոնցից յի-  
շատակելի է Մսեր Մսերեանը:

Զմիւռնիայում Վանանդեցին ամուսնանում  
է և 18 տարի վարժապետութիւն անելուց յետոյ՝  
առաջնորդի ստիպմամբ ձեռնադրում է քահա-  
նայ: Երկար տարիներ քահանայութեամբ, վար-  
ժապետութեամբ և գրական գործերով ազդին

ծառայելուց յետոյ՝ հիւանդանում է ծանր յողացաւով. անասնելի են լինում իր կրած շարժարանքները, այնպէս որ բժիշկն ասում է թէ «ով սիրում է այս մարդուն, թնդ իր ձեւքովը սպաննէ»։ Տասը տարուց աւելի տառապելուց յետոյ, վախճանում է 1840 թ. փետրվ. 3-ին, 68 տարեկան հասակում։ Ամբողջ քաղաքը շարժւում է. բոլորը թափւում են վերջին անգամ պատուելու այն ձերուհուն, որ իրրե քահանայ եղել էր սրբակրօն կրօնաւոր, իրրե վարժապետ կրթել էր սերունդներ, իրրե մարդ արժանացել էր ամէնքի յարգանքին, «և չէր մնացել մարդ որ նրա երախտիքը վայելած չլինէր»։

Վանանդեցու գործերն են.

Թարգմանութիւններ.—

1. Կերակուր քահանայից. եղաւ տաջին գործը՝ որ պատրաստեց քահանայ գառնալուց յետոյ (1822). գրուածքը թարգմանուած է լատիներէնից՝ Վարդան անունով կրօնաւորի ձեւքով. Վանանդեցին ուղղել է լեզուն, սրբագրել, յաւելումներ է արել։ Նրա թն է քահանայական աստիճանի բացատրութիւնը և քահանայի սրբատականութիւնները (տպ. էջմիածին, 1841)։

2. Փէնտի Ազգար. տաղաչափութիւն՝ թարգմանուած պարսկերէնից. պարունակում է բարոյական խրատներ, մտլութիւնից հետո կենարու և առաքինի վարքի հեռակելու յորդորներ։

Հեղինակութիւններ.—

1. Հերբումն կարծեաց գնալոյ Արքայն Պետրոսի

ի Հոսովմ (Զմբուռնիա 1853), կաթօլիկական սորն-  
ձգութիւնները հերքելու համար գրուած վիճա-  
բանական գործ:

2. Ճառ ներբողական ի Ս. Թաշն Քրիստոսի  
(Մոսկուա 1853), գրուած է 1815—6 թուերին,  
Վարապայ Ս. Նշան վանքի վանահայր Սարգիս  
վարդապետի խնդրանքով, առաջին մասը պարու-  
նակուած է Թաշի գովեստը, իսկ ներկորդ մասը  
Վարապայ Ս. Նշանի գովասանքն ու պատմու-  
թիւնն է, սկսած Հոփսիմէ կոյսից և Պատրո-  
նիկէ թաղուհուց: Արանից յետոյ գալիս է 12  
ստեան ստանաւորով մի ընդարձակ տաղ՝ նոյն  
նյութի վրայ: Թէ ճառը և թէ տաղը գրուած են  
խրթին գրարարով ու միջնադարեան ճառընտիր-  
ների սձով:

Սոցանից դուրս վանանդեցին ունի և շատ  
հատուկատր բանաստեղծութիւններ, որոնցից  
ոմանք երգուած են մինչև այսօր: Այս երգերից  
նշանաւոր է Առ Հայաստան երգը, հայրենասիր-  
բական զգացումներով զեղուն:

Հայաստան երկիր գրախտավայր,  
Գու մարդկայնոց ցեղիս օրբան,  
Գու և բնիկ իմ հայրենիք.  
Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Ի վե՛ն անուռդ սիրտ իմ, ան, յոյժ  
Ողևորի ի նօր խրախոյս.  
Եւ անձկայրեաց ի քեզ յուսամ,  
Ի քե՛զ, ի քե՛զ յոյս իմ միայն.  
Հայաստան, Հայաստան, Հայաստան:

Սակայն Վանանդեցու նշանաւոր և զբաղա-  
նութեան համար դարապալուխ կազմող գործերն  
են՝

1. Տեսարան Հայկայ, Արամայ և Արայի.
2. Արփիական Հայաստանի.
3. Ոսկի Գար Հայաստանի.

Տեսարանը (տպ. Զմիւռնիա 1856)՝ որ մա-  
մանակադրական կարգով առաջինն է սոցանից,  
մի վիպական քերթուած է, որի նիւթը մեր  
պատմութեան առաջին շրջանն է, նա բազկաշած  
է չորս երգից: Առաջին երգով պատմում է Հայկի  
ծնունդն ու սնունդը, Հայաստանի աստուածա-  
պաշտութիւնն ու մարդկանց զեղծումը, չրհեղե-  
ղը, Ահնաարի գաղթը, աշտարակաշինութիւնը,  
Հայկի ազատամբութիւնը, պատերազմն ու յաղ-  
թութիւնը, աշխարհաշէն գործերն ու մահը: Երկ-  
րորդ երգը պատմում է Արամի քաջագործու-  
թիւնները: Երրորդ երգով զոմում է Արայ Գե-  
ղեցկի առաքիչի վարքը, Շամիրամի անսանձ  
կիրքը: Արայի եղբրական մահը՝ որ ընդունեց  
Շամիրամի ձեռքից՝ իբրև իր զեղեցկութեան ու  
ողջախոհութեան պատուը: Չորրորդ երգով ամ-  
փովում է նախորդ երեք երգերի նիւթը և յոր-  
գոր է կարգում նոր սերնդին՝ նմանել իր նախ-  
նիքներին: Այս երգը՝ ամբողջապէս առողջ գա-  
ղափարներով համակուած՝ մի նոր ծրագիր է  
այն դաստիարակութեան՝ որով պիտի ընթանայ  
հայ մանուկը. գա դուռ ազգային դաստիարակու-  
թիւնն է, հայ լեզուով ու հայ գաղափարներով:

Արփիական Հայաստանի (տպ. Պօլիս 1836) այսպէս ասած մի կրօնական դիւցազներգութիւն է, բաժանուած 8 երգի և բողկացած ընդ ամէնը 2515 բառատոյ անից կամ 10,060 տողից: Իւրաքանչիւր տուն միասեակ յանգ ունի և իւրաքանչիւր տոյ բաժանուած է 4-4-4-3 վանկերի: Արփիականը Հայոց քրիստոնէութեան դարձի պատմութիւնն է Լուսաւորչի ձեւորով: Այս նիւթի համար իրեն իբրև աղբիւր ունեցել է Ագաթանգեղոսի պատմութիւնը: Կարելի պիտի լինէր ասել թէ Վանանդեցին իւր այս աշխատութեան մէջ ներշնչուած է հին յունական և լատինական դիւցազներգութիւններից, բայց այն ժամանակ՝ երբ Արփիականը տպուեց, դեռ ոչ Համբրի Բլիտկանն էր թարգմանուած, ոչ նրա Ողբասկանը և ոչ էլ Վիրգիլիտի Ենէականը: Վանանդեցին չէր կարող ծանօթ լինել նաև նոցա բնագրին, որովհետև բացի հայերէնից ու պարսկերէնից, սերիշ լեզու չգիտէր: Այնու ամենայնիս պէտք է կարծել որ հետուից հետո ազգուել էր այդ խոշոր գործերի համբաւից, այնպէս որ հէնց գրքի անունը Արփիական՝ ձեւած է Բլիտկան, Ողբասկան, Ենէական անուններից: Արփին՝ Լուսաւորիչն է, որ բովանդակ գրքի զլիսաւոր հերոսն է:

Առաջին երգը սկսուած է մի սիրուն քառեակով, «Իրախտի ափերից զեփեւոր փշեց, աւուած է նա, և ներշնչեց ինձ նոր երգ երգելու, մեր Արփինու գործերից մի փունջ կազմելու»:

Յաղինական ինձ արդ յափանց սիւս սթափիչ յորդանունչ,  
Դիւր հեշտագին յոգիս ազգեաց նոր յերգ պարզել զիմ գունչ,  
Մերս Արփենույ լուսածաղիկ զարդեանցն զվէպ ի մի փունջ,  
Բանակապետ կացեացն ի գրտս տալ հայկազանցն ի մբունջ:

Այնուհետև՝ հին գիւցազներգութեանց նման  
զիմում է Աստուածային զօրութեան և նրանից  
կարողութիւն խնդրում՝ իր գործը յաջողութեամբ  
գլուխ ասնելու համար: Սրանից անմիջապէս  
յետոյ ներկայացնում է Գրիգորին Կեսարիայում՝  
Քաջահասակ ի ախ ծաղկեալ երիտասարդ անձնազեզ,  
Առյադարում այր թիկնաւա, տեսակ զիմացն էր շեղ:  
Նա ուզում է իմանալ իր նախնեաց մասին և  
զիմում է դայեակին. դայեակը սկսում է պատ-  
մել ամբողջ նրա անցեալը: Արաշիր Սասանե-  
կանը ապստամբեցաւ Պարթեաց գէմ, սպանեց  
Արտաւանին, Սոսրով իր ազգականի վրէժը լու-  
ծելու համար զնաց նորա վրայ և յաղթելով  
մինչև Հնդկաստան փախցրեց. Անակ՝ Գրիգորի  
հայրը, դաւաճանութեամբ սպանեց Սոսրովին,  
բայց ամբողջ ցեղով բնաջինջ եղաւ. դայեակին  
յաջողուեց փախցնել Գրիգորին Կեսարիա, ուր  
մեծացրեց քրիստոնէական ողբով: Արաշիրը  
արշաւեց Հայաստան, Սոսրովի ցեղը սրից անց  
կացրեց, սրից Սոսրովիդուխա և Տրդատ մրայն  
կարողացան փախչել: Տրդատ զնաց Հոսմ, ուս  
անուանի դարձաւ իր մարմնական քաջութեամբ:  
Գրիգորը լսելով այս բոլորը՝ բորբոքում է: Ի՞նչ-  
պէս հասուցանել փախարէնը այն մեծ պատու-  
հասին, որ հայրը հասցրել է Հայաստանի գլխին:  
Եւ նա լճուում է տալ նրան քրիստոնէական

լոյսը: նա թողնում է իր տունը, իր ընտանիքը  
և Հոսմ է գիմում, Տրդատի ծառայութեան մրա-  
նում: Դեկըը իմանալով Գրիգորի մտադրութիւնը,  
ժողով են կազմում, միջոցներ մտածում, որպէս  
զի խանդարեն Հայերի բրիտաննէութեան դարձը:  
Ուստի զրգում են կայսեր՝ որ հալածանք է հա-  
նում բրիտաննէութեան դէմ. շարչարւում է նաև  
Գրիգորը, բայց իր հաւատքը չի սրանում: Նոյն  
միջոցին տեղի է ունենում Գթաց արշաւանքը և  
Տրդատը նոցա թագաւորի հետ մենամարտելով  
յողթում է (Ա. երգ): Կայսրը վարձատրում է  
Տրդատին և նրան մի գունդ զօրք տալիս, որպէս  
զի երթայ Հայաստան, տիրանայ զահին: Հաս-  
նում են Երիզա, ուր հանդիսաւոր զո՛հ են մա-  
տուցանում Անահիտին: Գրիգորը մերժում է  
երկրպագել նրան, և Տրդատը սկսում է տանջել  
12 շարչարանքներով (Բ): Վերջապէս իմանալով  
որ նա Անտկի որդին է, պցել է տալիս Յոր Վի-  
րապը: Աստուծոյ հրեշտակը գալիս է այնտեղ և  
ընկերանում Գրիգորին: Նոյն ժամանակ կատար-  
ւում է Հսիփոսիմեան կոյսերի փախուստը Հոսմից,  
Հայաստան գալը, Տրդատի հետ մենամարտու-  
թիւնը և նահատակութիւնը: Այս բոլորը հրեշ-  
տակը պատմում է Գրիգորին, ի վերջոյ զուշա-  
կում է նրան թէ Տրդատը պիտի խող դառնայ,  
Գրիգորը պիտի ազատուի և նա պիտի լուսա-  
ւորէ երկիրը (Գ): Հրեշտակի զուշակութիւնը  
կատարւում է, Տրդատ և բոլոր իշխանները դի-  
ւանարւում են, Գրիգորին հանում են Վիրապից

և բժշկում է բույսերին, քարոզում է քրիստոնէութիւնն, սկսում է պատմել Ս. Գրքի պատմութիւնը աշխարհի ստեղծումից (Գ. և. Զ. է.): Այնուհետև շրջում է բույսեր կիրքը, կործանում մեհեանները, կեաարիոյ մէջ օծուելով կաթնուղիկոս, դառնում է Հայաստան, շինում է եկեղեցիներ, Տրդատի հետ գնում է Հոռոմ և Նիկիոյ ժողովից յետոյ քաշում է լեռները՝ ձգնելու (Ը): Գիրքը վերջանում է մի յորդորակով, որով յորդորում է «հաշիկան մանուկներին»՝ ամուր պահել իրենց արուած աւանդը և չհետանալ երբեք հայ կրօնից, չհետևել նորագանդ վարդապետութեանց (սկնարկում է կաթուղիկ և բողոքական կրօնները):

Արփիսականը յաջող գրուածք չէ: Ինչպէս ստացինք, հեղինակը հետևում է Ազաթանդեղոսին, բայց այս հեանողութիւնը միայն ընդհանուր բովանդակութեան կողմից չէ, այլ նոյն իսկ բառացի: Արփիսականը՝ սկզբի մի քանի անկախ մասերից յետոյ, Ազաթանդեղոսի հետ գնում է բայլ սո քայլ, կէս սո կէս, պահելով նոյն իսկ նրա բառերը, նրա ածականները: Ազաթանդեղոսը Լուսաւորչի բերանն է գնում մի շատ ընդարձակ ճառ (Վարդապետութիւն), որ իբր թէ նսարտասանել է կոստղաշտ հայերին դարձի բերելու համար: Այս ճառը յետին ժամանակներում հնարուած կեղծիք է: Նա Ս. Գրքի պարզ պատմութիւնը չէ, այլ աւելի վիճարանական գրուածք, օրինակ այնտեղ քննուում է թէ ինչն է Քրիստոս

ուչ եկաւ աշխարհ, չէր կարող աւելի շուտ գալ  
և աւելի շուտ փրկել տանջուող հոգիները, թէ  
ինչ բան է անձնիշխանութիւնը, թէ ինչո՞ւ մարդ  
նման է Աստուծոյ պատկերին և այլն: Անկարելի  
բան է որ Լուսաւորիչ այսպիսի մի ճատ խօսէր  
այնպիսի մարդոց առջ, որոնք դեռ Ադամն ու  
Քրիստոսը չէին ճանաչում: Արդ՝ Արփիականը  
ոչ միայն այս վարդապետութիւնը ամբողջապէս  
մէջ է բերում, այլ նոյն իսկ նրա տուած վկայու-  
թիւնները Ս. Գրքից, իրենից աւելացնում է  
նաև աւելի ձախող կէտեր, օրինակ վէճ կաթո-  
լիկների և բողոքականների հետ, մինչև իսկ  
Լուսաւորչի բերանն է դնում Անդղիացոց յիշա-  
տակութիւնը (էջ 364): Եւ այս վարդապետու-  
թիւնը բնում է Դիւցազներգութեան ուղիղ կէտը,  
մեծ ձանձրոյթ պատճառելով ընթերցողին:

Սրանից դուրս՝ այն մասերը՝ որոնց բա-  
վանդակութիւնը պատմական է, կարդացում են  
հաճոյքով: Մի քանի տեղ (ինչպէս Խոսրովի պա-  
տերազմը, Անակի դաւաձանութիւնը, Արատչբի  
արշաւանքը, թաղաւորական ցեղի ջնջումը, Տըր-  
գասի փախուստը, նոյնպէս և Հոխսիմեանց  
նահատակութիւնը) Վանանդեցին յաջող մտա-  
ծութիւնն է ունեցել փոխանակ դէպքը իր կող-  
մից պատմելու, պատմել տալ զայնակին, հրեշ-  
տակին, որով գրուածքը աւելի սեղմում, կեն-  
դանանում է: Վանանդեցին տալիս է շատ անդամ  
յաջող նկարագրութիւններ: Զօրաւոր է օրինակի  
համար Արատչիբ Սասանեանի այն մողովի նկար-

բազիրը, ուր նա փրկութեան ելք է որոնում  
տաղթական Սոսրովի ձեռքից և խոստանում է իր  
թագաւորութեան կէսը տալ նրան՝ ով յանձն  
կաննէ սպաննել Սոսրովին:

Ասաց, և անդ զէմքն ի դարուն նորան դմնեայ վաստայոյն,  
Սարուս ընդ սիրտ զնաց, զօրայր իրր գաերև խարչափուն.  
Յայլ զէմս ամել թրթրակէր զօձին վարեալ զիկոյն,

Ձիւնչ հնարիւր թունել ծուկալ զարեն արդեօր քաջամոյն:

Յակճիւս կան իւր նախարարք և կուսակալք միարան,  
եւ թեակից իւր թագաւորք, զօրք, զօրավարք և իշխան.

Պետք համօրէն անդ յասենին զրդիս յուղեալ ի յարեան,

Այր առ ընկեր զահանայիս շրջեն մեան նշմարման:

Ջօրէն զոգցես ուղեորի որ յամայիս թարթափի,

Մննեա ուղւոյն իսկ անձանօթ իրր ի մթան խարխափի,

Ճանաղարհին ելքն ի փախուստ և ի նրն ընդ քիրան տապի,

Յօր կոյս զիմել կայ ի վարան յամենայն քայս իւր խարի:

Երբ Անակը կատարում է դաւաճանութիւնը և

Սոսրովի սպանման տեսիլքը գալիս է Արաաշ-

րին, նորա ուրախութիւնը չափ չունի, նա ա-

սիւծ է կարում և զօրք է հուարում հայոց վրայ

շարժուելու.

Որպէս ասիւծ իմն ի խուար յարգելս անկեալ անաղատ...

եւ զցաւոց լուծցէ զկապ. շարժման տալով ինչ նպատա.

Սյժ զգննու, ի վեր վաղէ, գոս խիզափէ. յոխորտայ,

Ի կապողին իւրոյ վրէժ մոնչէ թափ յագին տայ,

Յարձակ զիմէ, սանհարէ, քանդէ, զերբէ յանխնայ,

Որքան իւրում դմնէութեան յաջողք իրացն ի զէպ զայ:

Կամ որպէս զայլ սովալլուկ և ի հօփունն արտալամ,

Ի քաղց նրթեալ զանդաշեսցէ յորջոյն անկեալ տարակաց,

Յարմին ծառոցն ի տեսանել զհոփունն յորսայս քնէւծ,

Շեշտ սլացեալ զանհնարին տացէ հօտին կոտորած:

Հոսիփոսիմէի ձերբակալութեան առթիւ շատ  
զօրաւօր բառերով է նկարագրոււմ երկնային  
սրտար և համախմբուած ժողովրդի մէջ տիրող  
խուճուպը նրանից:

Քնդմանն որտա հարստացանչ յանարկութիւն անդ մարդկան,  
Ի թմբուութեան յազէտս ամէր, սրտարեկեալ զամենայն.

Եւ վերնային շանթաձգութիւն շոինդն անտար շփոթման,  
Ոգորմազին բազմաց զօրնտս խնկոյն բերէր սատակման:

Երէվարաց հարթնուիմն անեղ յայր գնեձեալս առաթուր,

Եւ սմբակացն զխորձանեալս ժանիք մանրէր ի փխուր,

Յարեանցն սող զայրին երեսք բոսորերանդ հեղեղիբր,

Եւ յանձին պուրժ այր անցնիք հազ գալ ի փախուտ  
ասղտապիւր:

Որպէս յորժամ հիմունք լերանց յանեղ շարժիցն ի ստան,

Շեշտ ի բարձուէ՝ ժայտից հատուած ի վայր զին լեռնա-  
նման,

Քնդիւնք յանդունդ գնան խորոց, զեռունք յերկրի անդ  
սասկան,

Ոմն ճմլեալ, ոմն սո ի գերժ խլիրա զօրձէ գանպիտան:

Յաջող կատրններ են նշանակէս Գոյնիանէի զլխաս-  
ման վճիռը՝ որ տալիս է Տրդատ՝ Հոսիփոսիմէի  
նահատակութեան վրայ զայրացած (էջ 194),  
այն ողբը՝ որ երգոււմ է Աշխէն թաղուհին, իր ա-  
մուսնու զիւանարութեան վրայ վշտահար (էջ  
205) և այլ նման կատրններ:

Ոսկի Գար Հայաստանի (Չմիւռնիա 1841)  
սի հովուերգութիւն է, բաժանուած չորս երգի  
և բաղկացած 1374 անից, ընդ ամէնը 5496 տող:  
Արփիտականի նման սորա մէջ էլ իւրաքանչիւր  
տուն ունի միատեսակ յանդ և 4-4-4-3 չափ:

Ինչպէս Արփիականի մէջ գրախտից փչող սիւզն է որ ներշնչում է հեղինակին, նոյնպէս աշատեղ էլ Արէլի գուարթ Ոգին է, որ հրաւիրում է նրան երգելու Սակի դարը: Նա զիմում է «Ումպեան Ջգաստութեան» և «Սուրբ Պարգութեան», որ իր սիրտը լեցնեն պայծաս խորհուրդներ, իր հոգու թսիչները գէզի վեր սըլացնեն:

Սակի Դարը մարդկութեան նախաօր շքրջանն է, սկսած ջրհեղեղից մինչև Արամ նահապետը: Վանանդեցին գրախտը զնկում Հայաստանում, տալիս է նոյն շրջանի մանրամասն նկարագրութիւնը: Առաջին երգում երևան է գալիս Նոյ, որ գեղեցիկ լեզուով պատմում է իր սերնդին՝ ջրհեղեղը, տապանի կեանքը, ընտանի և վայրենի բազմազան կենդանիների խաղաղիկ կենակցութիւնը, խրատներ է կարգում նրանց, յորդորում առաքինի կեանքից չհեղուել: Նոյի սերունդը բազմանում է. Ս. Գրքի համաձայն մէջ է բերում նրա որդիների և թոսների ճիւղազրութիւնը և ազգերի բաժանումը: Երկրորդ երգում նկարագրում է ժողովրդի կեանքը, երկրադործական գործիքները, արօր, գութան, տափան, ցաքան, սոցա մանրամասն կազմութիւնը, գործածութիւնը, նմանապէս անասնապահութիւնը, հովուական կեանքը: Այնուհետև պատմում է համառօտիւ Սենաարի գաղթը, Բէլի ամբարշտութիւնը, Հայկի վերադարձը Հայաստան, Բէլի հետ պատերազմը, յաղթութիւնը:

Հայկի աշխարհաշինութիւնը, նորա յաջորդ նա-  
հապեաների պատմութիւնը մինչև Արամ, Խորե-  
նացու հետեօգութեամբ: Երբորդ երգի սկզբում  
նկարագրում է Արամի քաջագործութիւնները,  
այնուհետև անցնում է պատմել Հայոց վաճա-  
ռականութիւնը, դէպի Հայաստան տեղի ունեցած  
օտար դադիտականութիւնները, Հայոց զէնքերը,  
զանազան ժամանակներ մեր ցոյց տուած քաջա-  
գործութիւնները, մեր տառապանքը և մեր երկրի  
կրած աղէտները օտար արշաւանքների պատ-  
ճառով: Այստեղ արդէն գրուածքի միութիւնը  
բոլորովին կորչում է. հեղինակը թողնելով իր  
զլխաւոր նիւթը՝ մտնում է բազմաթիւ հարցերի  
մէջ, որոնք կապ չունին բնաւ Ռսկեզարի կեան-  
քի հետ: Չորրորդ երգի սկզբում նորից անցնում  
է Ռսկեզարի նկարագրութեան, բայց շուտով  
թողնելով նրան, սկսում է մի երկար վիճարա-  
նութիւն՝ ապացուցանելու համար թէ գրախառ  
Հայաստանումն է: Սրանից յետոյ սկսում է մի  
այլ աւելի երկար վիճարանութիւն բողոքակա-  
նութեան դէմ, և պաշտպանում է Ս. Կոյսի,  
Սաշի, սրբերի և սուրբ պատկերների պաշտա-  
մունքը: Վերջում կոյ մի յորդորակ՝ որով խրա-  
տում է հայ մանուկներին՝ ամուր պահել հայի  
հաւատը և հետո կենալ բողոքականներից:

Գրուածքը՝ ինչպէս ասացինք, բոլորովին  
զուրկ է միութիւնից. բուն նիւթը՝ այն է Ռսկե-  
զարի նկարագրութիւնը հազիւ կարող է բանել  
զբքի կէսը: Այս մասը շատ յաջող, շատ գեղե-

ցիկ է: Քէն նկարագրութիւնները երկար ու մանրամասն, ըսոյց բնաւ ձանձրոյթ չեն պատճառում ընթերցողին: Բնութեան այս հարուստ նկարագրութիւնները, բուսականութեան, ծառերի, ծաղիկների, անասունների, գետերի, գիշերուայ զմայլելի պատկերները, նախնական մարդոց նահապետական կեանքը, շինականի պարզուկ անմեղ կենցաղը, ընկերական վիճակը, այս բոլորը այնպէս հրապուրիչ ու կենդանի են, որ մարդ մի բողբ մտածում է ներկան և մարտի փոխադրում հեղինակի պատկերացրած շրջանը: Քաղաւածներ զնեւ այս մասից, համարեա կարելի չէ, որովհետեւ բոլորն էլ միեւնոյն տար շնչով են գրուած, միօրինակ սահուն լեզուով, միևնոյն ազու բառերով: Ընդհակառակը շատ ձանձրալի են բուն նիւթից դուրս եղած մասերը, որ վերեւում յիշեցինք, և որ բռնում են գրքի միւս կէտը, սկսած Գ երգի առաջին մասերից մինչև վերջ և մի քանի տեղ նաև Ա և Բ երգերում: Եթէ կարելի լինէր վերամշակել գրութեանը և այս մասերը ամբողջապէս յապաւել, այն մամանակ մենք կունենայինք մի շատ գեղեցիկ հոփուերգութիւն:

Ղանանդեցու լեզուն Փէշտիմալձեանի լեզուից աւելի ծանր է, այնու ամենայնիւ չի կարելի կոչել նրան խրթին. յատկապէս աչքի են ընկնում այն դժուարիմաց բառերը, որ Բաողբերի մէջ չկան և որ թերեւս հեղինակը հաւատրել է հին ձևաղբի Բառարաններից:

Վանանդեցու տաղաչափութիւնը գեղեցիկ է. նրա ընարած շափը շատ յարմարում է նիւթին և պահում պտաշաճաւոր ծանրութիւնն ու լրջութիւնը: Քառեակների բաժանումը տալիս է օւելի թօրմութիւն, ինչ որ զուր տեղը պիտի փնտռէինք միայսր գրուած ստանաւորների մէջ, ինչպէս է Հայկ Գիւցազնը:

Վանանդեցու գլխաւոր արժանիքն այն է որ ստանց գրական կրթութիւն ունենալու, առանց իր ճաշակը զարգացնելու արուեստի նրաշակերտներով, լոկ իր հանձարով մտածել ու ստեղծել է գրական ամբողջ սեռ: Մինչև իր ժամանակը հայ բանաստեղծութիւնը միայն և միայն կրօնական էր, ապրում էր աշխարհից դուրս՝ երկնքում, երզում էր միայն հօգևորը: Վանանդեցին է կղել որ առաջինը իր ներշնչման նիւթ է դարձրել հայ քաղաքական կեանքը, ազգային հերոսները, և մեր միջնադարեան թմբած բանաստեղծութեան նոր սփի է ներշնչել: Այս սփին է որ այնուհետև պիտի զարգանար հետզհետև և պիտի արտադրէր մի տեղ Հայկ Գիւցազնը, միւս տեղ Գ. Պատկանեանի հայերգները, ուրիշ տեղ Սամուէլի պատմական վէպը կամ Տիգրանուհու թատերագութիւնը և այլն: Այս սփին է որ մտացութեան տալով հին տխուր երգերը, պիտի ներշնչէր մեզ պետրուել մեր նախնեաց գործերով, զգալ թէ մենք էլ ազգային կեանք ունինք, յուսահատ համակերպութիւնը թողնել և ներկայ կեանքը բարելուելու աշխատել:

5. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԱՄԴԱՐԵԱՆՑ

(1796—1834)

Ա. Այվազեան. — Շար հայ կենսագրութեանց,  
Պոլիս 1893, հատ. Ա. էջ 124—143:

Մ. Միանսարեանց. — Քնար Հայկական. էջ  
585—7:

Ա. Երեցեան. — Կովկասի Հայ. Թիֆլիզ 1894:

Լ. Մանուէլեան. — Ռուսահայ գրակ. պատմ. Ա.  
24—33 (արտասպ. Գեղարուեստ, № 2,  
էջ 104—107):

Մ. Արեղեան. — Ուրուագծեր. Արարատ 1909,  
էջ 722—733:

Տաղանդաւոր բանաստեղծ և ուսուցիչ Յարութիւն վրդ. Ալամդարեանցը ծնուեց Աստրախանում 1796 սեպտ. 25-ին: Իւր պապը՝ Բոշա Յովսէփ՝ Խոյի խանի զրօշակակիրը լինելով՝ իր ցեղը ստացել էր Ալամդարեան անունը:

Ալամդարեանի մկրտութեան անունը Գէորգ էր. մինչև 14 տարեկան հասակը աշակերտում է տեղական խալիֆաների մօտ և յետոյ անցնում է նոյն քաղաքի Աղաբարեան վարժարանը, ուր պաշտօնավարում էր պօլսեցի երևելի հայկարան Սերովբէ վարժապետ Պատկանեանը՝ որ նոյն ժամանակները փոխադրուել էր Աստրախան: Ալամդարեանը իր յառաջադիմութեամբը կարողացաւ շուտով գրուել առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսի և իւր ուսուցիչ Սերովբէ վարժապետի հայրական խնամքն ու հոգատարութիւնը: Աղաբարեան զպրօցը նոյն ժամանակ միակ հայ ուսումնարանն էր ամբողջ Ռուսաստանում. մայր

եկեղեցու կողքին կար նաև ազգային ճոխ մատենադարան, և Ալամդարեանը անվերջ աշխատում էր այս գրադարանում:

17 տարեկան հասակում Ալամդարեանցը ամուսնանում է Մարգարիտ անուն մի օրիորդի հետ և ունենում երեք աղջիկ, որոնցից մէկը մայրն է նշանաւոր հայագէտ Քերովը: Պատկանեանի:

Ամուսնութիւնից մի տարի յետոյ՝ 1814-ին Ալամդարեանցը գնում է Մոսկուա և Լազարեաններին մօտ վարում է բարտուղարի պաշտօն: Նոյն տարին ձեռնադրում է քահանայ: 1816-ին բացուելով Լազարեան ձեմարանը, Ալամդարեանցը հրատիրում է ուսուցիչ, և այս պաշտօնը առիթ է սալիս նրան լրացնելու իր ուսման և զարգացման թերին:

1822-ին Ալամդարեանցի կեանքում պատահում է ամենամեծ դժբախտութիւնը. մեռնում է իր սիրելի կինը, այս մեծ վիշտը խորապէս ցընցում է երիտասարդի սիրող սիրտը և նրանում թագնուած կրակը հրահրելով՝ ներշնչում բանաստեղծական ոգի: Ալամդարեանը գտնում է ցառի, կորցրած սիրոյ վշտահար երգիչ:

Այրի քահանան Մոսկուայից փոխադրում է Աստրախան: Այստեղ 1824 թ. նա հրակէր է ստանում ներքև Աշտարակեցոյ գնալու թիֆլիս և իր վրայ վերցնելու նորահաստատ ներսիսեան զպրօցի տեսչութիւնն ու կրօնական առարկաների ուսումը: Ալամդարեանը ընդունում է հրակէրը և անցնում գործի զուխ:

Վեց տարի շարունակ (1824 — 30) նա վարում է դպրոցի ղեկավարութիւնը. ինքն է լինում իսկապէս դպրոցի կազմակերպողը. վերացնում է այնտեղից հնուանդ ասիական կարգերը և նոցա տեղ նոր եւրոպական կարդաստանութիւն և նոր աշխարհիկ գիտութիւններ մտցնում: Գործոցում հաւարուած էին այն ժամանակ մինչև 400 աշակերտ, որոնցից աւարտել են 100 հոգի, և որոնցից շատերը ապագայում պիտի լինէին նշանաւոր մարդիկ, ինչպէս Արսովեանը և Նազարեանը:

Ներսիսեան դպրոցի դասախօսութեան համար Արամգարեանցը թարգմտեց է Հրահանգք բրիտանական վարդապետութեան դասագիրքը՝ որ ապուեց նախ Տփղիս 1825 թ. և յետոյ Կալիֆա 1846-ին:

Ներսէսը հետզհետէ աւելի գնահատելով Արամգարեանցի արժանիքները և կրթական ծառայութիւնները՝ ընտրում է նրան Տփղիսի վանքի եկեղեցու աւագերէց և երբ 1827-ին ուսուցարսկական պատերազմի ժամանակ հայ կամաւորների գունդ կազմելու համար մեկնում է Թիֆլիսից, Վրաստանի վիճակի հոգեւոր վարչութիւնը, ինչպէս և Ներսիսեան դպրոցի ամբողջ վերատեսչութիւնը յանձնում է Արամգարեանին: Այստեղ նա ցոյց է տալիս խիստ արդիւնաւոր գործունէութիւն: Պատերազմից յետոյ երբ Ներսէսը վերադառնում է Թիֆլիս՝ շատ գոհմտալով նրա սրաշտօնավարութիւնից՝ ձեռնադրում է նրան վարդապետ:

Նոյն թուերին սկսում է հականերսիս-  
կան կռիւք. 1828-ին Ներսէս Աշտարակեցին  
Ռուսաստանի Հայոց առաջնորդ նշանակուելով՝  
իրբն պատուաւոր արտօր ուղարկոււմ է Բեսա-  
րաբիտ: Որովհետև Ալամդարեանը Ներսէսի մօ-  
տիկ բարեկամն ու նրա աջ թեւն էր, ուստի նա  
ևս ենթարկոււմ է Պասկեիչի և հականերսիսեան-  
ների հարածանքին: Ներսիսեան զպրոցը ընկնում  
է և մի ժամանակ էլ փակոււմ: Ալամդարեանը  
մնում է անպաշտպան և Եփրեմ կաթողիկոսը  
բաւարարութիւն տալու համար Պասկեիչին,  
1830 թուի աշնան Ալամդարեանցին էլ ուղար-  
կոււմ է Հայրատի Ս. Նշան վանքը՝ վանահայր  
անուան տակ պատուաւոր արտօրով: Այստեղ  
նա կրում է շատ վշտեր ու շարձարանքներ և  
մերձ ի մահ հիւանդանում, մի բարեսէր սարկա-  
ւազ միայն խնամում է նրան և փրկոււմ անխու-  
սափելի մահից: Ալամդարեանը վերջապէս կաղ-  
զուրոււմ է և 1831 ապրիլ 12-ին գրում «Գարուն»  
վերնագրով իր մի գեղեցիկ բանաստեղծութիւնը:

Այս ոտանաւորը որ կարող է համարուել  
Ալամդարեանի գեղեցկագոյն գրուածքը, մի յի-  
շուղութիւն է իր տառապանքների, հիւանդու-  
թեան, ծանր օրերին, որոնք այժմ անցել են.  
իր ներքին աշխարհին համապատասխանում է  
նաև բնութիւնը. այժմ գարուն է և ձիւնաթաղ  
գաշտերը ծաղիկներով զարդարուել են.

Յամսովերջն ապրիլի զպատուհանս բացի.

Չձիւնաթաղ գաշտարայս ծաղկազարդ տեսի.

Արտասուք եռանդունք դայտս իմ այրեցին,  
Զիմ անգարձ գերութիւն յուշ իմ մուս ամին:  
Լեզուսպէս դառնացան վէրք վնաս հարսոյ:  
Քմբիցան զգայարանքս, հատան էլք շնչոյս:  
Ափսսս ինձ, սասցի, բիւր անգամ յայն օր,  
Շատ անէծս թափեցի ի ծննդեանս փառ օր:  
Մաշեցայ, թօշնեցայ, մախ խոր ի բուն,  
Զչար կտկիժ հէզ գերսոյս արկ՝ ի ծով անհուն:

Այնուհետև Սուրբ Կոյսը երևում է վարդապետին. նա նրան է գիմում և Կոյսը ազատում է. և Ալամդարեանը ազատուած արդէն զգջում է իր յուսահատութեան համար, որովհետև Աստուած իրեն հեռ է.

Դշխոյն մեծ անմահից էջ ինձ յայս տեսիւմօր,  
Սրպէս թէ ի փոսոյ գիս ելոյզ ձեռամբ:  
Աներկմիտ մօտ մատեայ ի համրոյք ոտին  
Գերբնապէս սրանչիւօք գիս ազատողին:  
Բամբ ձայնեզ թոշնակաց նօթի զայլալեցին,  
Կենսածին Տիրամօրն փառս վերերգեցին:  
Երանի, սասցէք, կարմրացոյս փարգիս,  
Քաջաբերս տուք նմա ի զով պաշտպանիս:  
Աւեղ իմ նեղասիրտ կարճամիտ լալոյս,  
Զիւրդ գիս կարծեցի կորուսեալ անյոյս:  
Նախասիրք իմ նեղչաց նեւք եղեն ինքեանց,  
Նանբացան դաւք նոցա, անկան յերեանց ցանց:  
Ցաւապնեալք, օրհնեցէք զանուն Տեառն յաւէտ,  
Դիք գյոյս ձեր յօգնութիւն խաչին փրկաւէտ:

Այնուհետև Ալամդարեանցը քանիցս գիմեց Վրաստանի առաջնորդին, որպէսզի թոյլ տայ երթալ Ներսէսի մօտ, սակայն իր խնդիրքն անլսելի մնաց: Յովհաննէս Կարբեցին կաթողիկոս ընտրուելով՝ Ալամդարեանցի դրութիւնը բոլորովին վատացաւ. նա հրամայեց նրան շուտով էջմիածին երթալ, բայց Ալամդարեանը չընդունեց՝ առարկելով էջմիածնի օգի խտութիւնը: Այն ժամանակ Յովհաննէս կաթողիկոսը

սաստիկ զայրացած՝ թուղթ գրեց Մինօղին և պատմելով նրա բոլոր ենթադրական ապօրինի արարքները՝ հրամայեց կանչել նրան և բանտարկել Հսիփախմէի վանքում: Իզուր անցաւ բարեկամ կրօնասրների բարեխօսութիւնը՝ հայրաբար ու անյիշաչարութեամբ ներել նրա յանցանքները: Կաթուղիկոսը խնդրեց Տփղիսի Բանդրատե զօրավարին մարմաւոր իշխանութեան միջոցով հանել նրան Հաղբասից և ուղարկել զինուորներով Էջմիածին. բայց այս վճիռը զեւ չգործադրուած ներսէս Աշտարակեցու շնորհիւ և կայսերական հրամանով Ալամգարեանցը արձակուեց արսորից և հրաման ստացաւ երթալ Քիշնե ներսէսի մօտ:

Այստեղ Ալամգարեանը նշանակուեց Նոր-Նախիջևանի Ա. Յաչ վանքի վանահայր (1833 թ.), բայց հողիւ մի քանի ամիս պաշտօնավարեց նա և մայիս 14-ին աւազակներից յարձակում կրելով՝ վիրասորուեց ու 10 օր հիւանդ ստառապելուց յետոյ վախճանուեց 1834 թ. մայիս 24-ին: Նրա մարմինը թաղուեց վանքի դռան մօտ:

Ալամգարեանցը անուանի եղաւ ամբողջ Ռուսահայոց մէջ իբր ուսումնական, ճարտար քարտղիչ և կեղեցական. մանաւանդ իբր բանաստեղծ. նա անշահախնդիր, եռանդուն և վեհանձն մարդ էր, բայց հականերսիսեան կուսակցութեան լարած օրոգայթները վերջապէս այնպիսի դառն վախճան հասցրին նրան:

Ալամդարեանի բանաստեղծութիւնները մի  
հաստորում ամփոփելով հրատարակել է Քերովըէ  
Պատկանեանը Պետերբուրգում 1884 թ. Այս հա-  
տորը պարունակում է ընդ ամէնը 32 ստանա-  
ւոր, որոնց մէջ չեն մտել մի քանի տաղեր. ինչ-  
«Մայր ցանկալի» միջնագարեան տաղը, «Ասիւծ  
և էշ» թիֆլիսեցոց լեզուով ելն: Այս ստանաւոր-  
ներից մի մասը կրօնական է, իսկ մեծ մասը  
սիրային, նկարագրական, ազգային և իր կեան-  
քից վերցրած նիւթեր: Աս հասարակ վերցրած  
Ալամդարեանի ստանաւորները քնարերգական  
գեղեցիկ տաղեր են. նոյն իսկ կրօնական տա-  
ղերը, որոնցից շատերը Սաղմոսների կամ Ս.  
Գրքի ուրիշ մասերի վերայ են հիւսուած, պա-  
հում են իրենց նրբութիւնն ու թարմութիւնը:  
Ամէնից գեղեցիկ ստանաւորները՝ բացի վերս-  
յիշեալից՝ են — նազերոյս զէմքն էր ճերմակ  
ու կարմիր, Սուգ, Տեսիլ, Աղերս աս ամենօր-  
նեալ տիրամայրն, Վարդակորոյս, Սօխակ ի հո-  
ղեվարս, Աչք իմ միշտ աս քեզ սչնուն սիրելի,  
Էաց գտտերն Յեթթայեայ: Մօր աղեկիդի սղը  
քսամնելի, Անուրջր:

Ինչքան պայտում զնում է օրինակ Աղեկէզ  
մօր սղրի մէջ, որ իր անդրանիկ օրդին կորցրել  
է պանդխտութեան մէջ, բայց նրա յիշատակը  
կենդանի է յաւիտեան իր սրտում.

Հօղեզուարն զարձից, Հօղեկից սրգեակ,  
Ես ցայց ու ցերեկ բաց աչօր սպասեմ.  
Ի սունջեան յատով զիս խարեմ, սրգեակ,  
Ձգիշերն երազովք միշտ ընդ քեզ խօսիմ.  
Ո՛հ, երբ յիշեսցես, զիս երբ սփոփեսցես:

Իմ սիրա մայրենի, իբրև ջուր յառակ,  
Զպատկերդ ջուցանէ յինքեան պարզ, սրղեակ,  
Ա՛խ, մեղքի իմ սիրա, սիրա տրամագուշակ,  
Քայրայիմ, հալիմ, կաթնոցնիմ, հաշիմ,  
Զիս էրբ սփոփեացես, էրբ տեսցես սրղեակ:

Յիշենք դարձեալ «Անարատ գառին քառա-  
ռաջ սեղան» սրաառուչ մաղթերգը՝ որ գրեց Ա.  
Սաչ վանքում մահուանից երկու ամիս առաջ:  
Սրա մէջ պատմում է իր տառապանքները և  
Սաչից օգնութիւն խնդրում. ամէնքը հեռացան  
իրանից, ամէնքը հալածեցին նրան և նրա յոյսը  
կապում է այժմ միմիայն խաչին:

Աման յեղկելիս զմահաթոյն բարբից,  
Ընդ յայ իմ բերկրին, ախ, ո՛ր գիժեցից.  
Ափշեցայ, ցնորեցայ,  
Սուրբ Սաչ, օգնել ինձ փութա:  
Մարմար, սուգ, կակի՞մ և երկունք մահուան,  
Անթիւ տառապանք զինև շրջեցան.  
Քառաթև, յուսածև,  
Զգեա առ իս զքո սուրբ թև:  
Գառնացան իմ կեանք յարևս ծննդեան,  
Յս և գնացի, միշտ գտի դարան,  
Հայեցայ, մաշեցայ,  
Յամբարշտաց ոչ զերժայ:

Շատ գեղեցիկ է նոյնպէս Սուրբ Աստուա-  
ծածնայ վրայ գրած տաղը, որ միջնագարեան  
բանաստեղծութեանց օճին մօտենում է և որ  
սկսում է այսպէս.

Մայր ցանկալի, հիանալի, յոյժ տենչալի սննման,  
Մաղիկ յուսոյ անտանելոյ դու երկնայնուոց օթարան,  
Մայր զօգիկի երանելի միշտ սխրալի Մարիամ,  
Մայր զօգիկի լի լի լի լի Մարիամ...

Ամենամեծ առաւելութիւնը որ ունին Ալամ-  
դարեանի երգերը համեմատութեամբ նախորդ  
բանաստեղծներին, այն է որ սա ամէն տեղ  
գնում է իր անձնական կնիքը: Կեղծիք, արուես-

տակութիւնն չկայ նոցա մէջ: Այն մեծ դժբախտութիւնը՝ որ պատահեց նրան, կնոջը մահը, այնպիսի խոր ազդեցութիւն է թողել նրա վրայ, որ ամէն մի երգի մէջ զգում ես այդ վիշաք: Ես իր սրտի թախիժն է միայն երգում. ոչ մի ուրախ տող չէ արտադրում: Տարիները անցնում են, բայց արտասուքը չի չորանում նրա աչքերից. կնոջը պատկերը միշտ թարմ է աչքի առաջ. նրան է տեսնում, նրա հետ խօսում, նրանով սպրում, նրանով ոգևորում: Այսպիսի մի պատկեր է օրինակի համար Անուբջբը, որ Արամգարեանի ամենազիզեցիկ երգերից մէկն է: Բանաստեղծը յիշում է իր տառապալից կեանքը և այդ ցաւագին յուշերով՝ անբուն ու լացով անցնում է զիշերը. լոյսը ծագում է և արևի առաջին շողերը ներս են թափանցում պատուհանից. բանաստեղծը մի ոտնաձայն է լսում. լսում է ուշադրութիւնը և ահա երևում է իր կինը. հարց է տալիս թէ ինչն է ողբում մաշում. կնոջ պատկերը ոգևորում է նրան, նրա կեանքի կայծերն արծարծում:

Յառաւօտաց ի յանկողնի.

Սէր նազելոյս զիս խորովէր.

Անբուն զգիշերն ես անցուցի.

Ձի տանջէր զիս նորա պատկեր:

Լեզուս ցամաք, հոգեով վհատ,

Տկար մարմնով կայի անկեալ.

Անուբջբ անոյշք ի նինջ կիտատ

Ձթաց աշօքս կային սփռեալ:

Միշտ մտատանջ, միշտ կաթողին,

Ալեկոծեալ նաուս նման.

Դեղն իմ ցաւոց սէրն էր անդին,

Բայց չերեէր նորայն նշան:

Այգին ցնցուղ ցայտեալ յիմ տուն՝  
Մերձեաց յինն զմէզ բնոյն,  
Բոտեմ զիմ սեշ, լսեմ զզոփիւն  
Ոսնածայնի իմ նազելւոյն:

Երանգ է այդ, մնչեմ մեղմով,  
Հոգւոյս տանջող և յարթնութեան,  
Աւանդ զլսոյս, զոչեաց անպով:  
Ընդէր մաշիս, սրախ իշխանս:

Նազելւոյս ձայնն յունկն իմ նշեալ՝  
Յիս արծարծեաց զկայծ կենաց,  
Յնծութիւն ինչ նանրածաւալ  
Հոգւոյս մարմնոյս իսկոյն տիրեաց:

Մի ուրիշ նոյնպիսի զեղեցիկ երգ է Պարեր-  
դութիւնը: Բանաստեղծի մխիթարանքը իր անց-  
եալ երջանիկ օրերի վերջիչումն է. նա պատ-  
կերացնում է իր առաջ իր պսակի նանդէսը.  
ահա իր նարնայուն կանգնած է նարսերի ու  
աղջիկների մէջտեղ, պարկեշտ ու զեղեցիկ, և  
այդ զեղեցիկ կոյսը իր կեանքի ընկերուհին է  
լինելու. եթէ աշխարհն ամբողջ գանձերով լցուած  
իրեն պարզեկին, նա այնքան ուրախ չէր լինելու.  
կայ արդեօք աշխարհում աւելի հզօր զգացմունք  
քան սէրը, որ աստուածային պարզ և արուած  
մարդուն. բայց ակոսս, ունայն է աշխարհը. նա  
թակարթում է մարդուն սիրով ու շուտով նրա  
սէրը խլում է նրա ձեռքից:

Յերկու ձեռն երկու մամ  
Ինձ քնդ առաջ ել յիւր տան,  
Մի նարցանէք սով էր նա,  
Հրեշտակ թէ կոյս լուսազեղ:

Ամսին զնա վարդ արար,  
Ես հրացեալ դարձայ քար,  
Այն զինչ օր էր և զինչ մամ,  
Յարում տեսի ևս կեանք նոր:

Մարդարատփայլ մարմինն էր.  
Հասակն էր յոյժ վայելուչ.  
Չտախտն իւր վարսը քարշ կային,  
Ի գոյն քրքմոյ փայլէին:

Դիմացն շքեղ երևոյթ,  
Յօնից, աչաց, այտից գեղ,  
Շրթանց լեզուին համ անոյշ՝  
Խոստանային ինձ կեանք նոր:

Ախ, ստացի թմրեցոյ,  
Սիրտս սկսաւ զողողալ.  
Չաշխարհ համայն մոռացոյ,  
Ի գեղ կուսին ապշեցոյ:

Եթէ զաշխարհ լի գանձուք  
Ինձ որ բաշխէր ի պարգև,  
Ոչ տեսնէր այնքան բախ,  
Որքան ի գուտ առ կուսին:

Արդեօք գուցէ յաշխարհի  
Սիրոյ նման իր հոր.  
Սէրն ի ձեռաց Արարչին  
Մեզ մահացուացս է ձիր նոր:

Նանբախորհուրդ սոց մարդկան,  
Շատ մի սիրելի գու զաշխարհ:

Ցանցիւ սիրոյ գրեղ կարթէ,  
Ի հազր անկի բմբունէ.  
Ապա գոխրոյդ առարկայ  
Ի քէն արանգ կողոպտէ:

Ալամգարեանի ոտանաւորները թէև բուրն էլ դրարար են, բայց զրուած են այնպիսի պարզ ու հասարակ ընտանի լեզուով, որ իրենց բնականութիւնը անաբաւ պահում են և կարգացում միշտ մեծ հաճոյքով ու բաւականութեամբ:

6. ՄԵՍՐՈՎԻ ՔԱՂԻԱԴԵԱՆՑ

(1803—1858)

Ա. Այվազեան. Շար հայ կենս Գ. էջ  
198—208.

Կենսագրութիւն Քաղիազեանցի. Կալկա-  
թա 1870.

Տ. Յովհ. քհ. Մկրեան. Կենսագրութիւն  
Մ. Քաղիազեանց, Քրթիկ 1886:

Քաղէս Խ. Աւետման. Կենս. Քաղի-  
ազեանի. Աբշ. Աբբո. թիւ 583:

Մ. Նալբանդեանց. Հիւսիսափայլ 1859.  
էջ 681—8 (երկերը Ա. 75—83):

Լ. Մանուէլեան. Ռուսահայ Գրակ. պատմ.  
Ա. 34—61:

Հնդկահայ գրողէտ Մեսրոպը Դաւթեան Քաղիազեանցը ծնուեց Երևանի Կարբի թաղում 1803 թուին: Դեռ չծնուած մնաւ հայրը. մանուկը մնաց որը ու ազրատ, և մայրը ստիպուեց յանձնել նրան Էջմիածնի միաբանութեան: Այն ժամանակի սովորութեան համեմատ՝ փոքրիկ Մեսրոպը յանձնուեց միաբաններից մէկին, քուրդ Յովհաննէս վարդապետին, որի մօտ թէ ծառայում էր և թէ սովորում Սաղմոս, Նարեկ ու աղօթքներ: Աւելի մեծանալով՝ դարձաւ փոքրաւոր և աշակերտեց Ղարաբաղցի Պօղոս վարդապետին և յետոյ Գիւլասպեան Չաքարիա եպիսկոպոսին, որոնց մօտ սովորում էր քերականութիւն և ճարտասանութիւն: 1821 թուին՝ 18 տարեկան հասակում Մեսրոպը ձեռնադրուեց Եփրեմ կաթողիկոսից սարկաւազ և այս աստիճանում մնաց

մինչև իր մահը՝ ստորագրելով «սարկաւազ Աբր-  
բոյ էջմիածնի»:

Թաղիազեանը ճանապարհորդութեան մեծ  
սէր ունէր. իւր զեռ այս փոքր հասակում նա  
ճամբորդեց զէպի Մասիս, Արագած, Շուշի, Տա-  
թև, Սիսեան, ամբողջ Սիւնիք, Նախիջևան,  
Տփլիս և այլն: Այս ճանապարհորդութիւններից  
մէկի ժամանակ նա ծանօթացաւ Պարսից զեռ-  
պան հայազգի Դաւիթ խանի հետ, որ նոր էր  
վերադառնում Եւրոպայից: Էսելով նորանից եւ-  
րոպական լուսաւորութեան, ուսման և գիտու-  
թեան մասին, Թաղիազեանի սրտում վառոււմ է  
մեծ փափուգ՝ երթալու Եւրոպա և ձեռք բերելու  
Եւրոպական կրթութիւն: Նա վճակեց անցնել Պո-  
լիս. բայց որովհետև կռիւների պատճառով ճա-  
նապարհը երկիւղալի էր, սրտեց մեկնել Հընդ-  
կաստան:

1823 թուին Թաղիազեանը էջմիածնից  
զուրս դալով անցաւ Դավրէժ, այնտեղից Հընդ-  
կաստան և տարուց աւելի ման եկաւ Հնդկահա-  
յոց բնակած քաղաքները: 1825 թուին Կալիա-  
թայի Մարզասիրական ձեմարանում հայերէնի  
ուսուցիչ նշանակուեց և յաջորդ տարին Անգլի-  
ացոց Եպիսկոպոսական ձեմարանը մանկելով 4  
տարուայ մէջ սովորեց անգլերէն, լատիներէն,  
յունարէն և պարսկերէն լեզուները: Այստեղ իր  
ուսումը աւարտելուց յետոյ, երբ նոյն Եպիսկո-  
պոսական ձեմարանի տպարանում հրատարակել  
էր արգէն մի քանի աշխատութիւններ, գիմնց

Էջմիածին՝ ներսէս կաթուղիկոսին և խնդրեց վարդապետ ձեռնադրուել: Բայց ներսէսը մերժեց, որովհետև ճանաչում էր նրան իբր հպարտ, զոսոյ մարդ: Քաղիաղեանը անցաւ Նոր-Ջուղա (1830) և Հնդկահայոց նպաստներով հիմնեց Սահակ-Մեսրոպեան վարժարանը, որի վարիչն եղաւ ինքը: Բայց նիւթականի և ժողովրդի անպատաստութեան պատճառով զժգո՛ն մնալով այս տեղից, դիմեց Երեան, խնդրելով որ իրեն միջոց տան անցնելու Երևան, զպրոց բանալու և ևւրսպական կրթութիւնը տարածելու արդէս ժողովրդի մէջ:

Քիչ ժամանակից Քաղիաղեանը ուղեորուեց Էջմիածին, որտեղ ներկայ եղաւ Կարբեցի Յովհաննէս կաթուղիկոսի օժման հանդէսին: Տարուց աւելի մնաց նա Էջմիածնում՝ իբրև կաթուղիկոսի և սինոդի բարասուղար, ժառանգաւորաց զընդրոցի կառավարիչ և սպարանի անօրէն: Բայց այսբան պատասխանատու պաշտօններ վարելով հանդերձ, չէր վարձատրուում գոհացուցիչ չափով ապրում էր խէղճ ու կրակ վիճակի մէջ: Այս բանից զժգո՛ն Քաղիաղեանը թողեց Էջմիածինը և գնաց Երեան, ժողովրդի առաջարկութեամբ պետական զպրոցում հայերէնի դասեր տալու: Սակայն այս էլ անյաջող անցաւ. նորից դարձաւ Էջմիածին, Նոր-Ջուղա և նորընտիր Հայրապետի յանձնարարութեամբ ու Նոր-Ջուղայի առաջնորդի պաշտպանութեամբ ստանձնեց ուսուցչական պաշտօնը: Այս միջոցին է որ Քաղիաղ-

եանը ամուսնանում է թանկուժ անուն մի օրբորդի հետ:

1836 թուին թաղիաղեանը անցաւ թաւրիդ, որ նախ անգլերէնի դաս էր տալիս արքայազն մէկ իշխանի մօտ և յետոյ ստանձնեց Արամեան զպրօցի հայկաբանութեան դասերը: 1837 թուին նա կորցրեց իր կնոջը, որի տարածամ մահուան առթիւ գրեց «Յօրնաս թանկույ թաղիաղեանց» եղերերգութիւնը: Իր կնոջ մահը շատ ախրեցրեց թաղիաղեանին և նա հաղիւ մի տարի ևս կարողացաւ պաշտօնավարել, ու թողնելով թաւրիդը՝ 1838 թ. գնաց Պօլիս: Այստեղ նա մնաց մի տարի՝ պարապելով ամիրաների աներում վարժապետական պաշտօնով և գրավածառութեամբ. այստեղ շարադրեց նա իր աշխատութիւններից մի մասը: Կասկածուելով բողոքականութեան մէջ՝ 1839 թ. թողեց Պօլիսը և ցամաքային ճանապարհով փախաւ Հնդկաստան: Այս ուղևորութեան միջոցին տալիս ունեցաւ ճանաչելու մեր երկրի մեծ մասը. տեսաւ բազմաթիւ քաղաքներ, ինչպէս Տրապիզոն, Կարին, Երզնկա, Ակն, Արզնի, Սարբերդ, Տիգրանակերտ, Մուսուլ և Պաղտատ: Մի անգամ ևս էջմիածին ուղևորուելուց յետոյ՝ թաղիաղեանը դարձաւ Հնդկաստան:

Այս ժամանակ Կալիպիայի Մարդասիրական ձեմարանում պաշտօնավարում էր Յովհաննէս Աւետիսեան անուն ուսումնական անձը: Բնաւորութեանց հակառակութեամբ, զուցէ և պաշ-

տօնի մըցութեան պատճառով՝ սկսում է մի վէճ թաղիաղեանցի և Աւզալեանի մէջտեղ: Գործնականապէս պատասխանելու և մրցելու համար Աւզալեանի հետ՝ թաղիաղեանը սկսում է հրատարակել «Ազգասէր» թերթը (1845), որի հիմնադիրն ու պաշտպանն էր Արարատեան ընկերութիւնը: Թերթը նախ աշխարհաբար էր, բայց յետոյ ժողովրդի խնդրանքով վերածուեց գրարարի, որովհետև Հնդկահայոց սիրած լեզուն եղել է միշտ գրարարը: 1847-ին թաղիաղեանը բաց արաւ Ս. Սանդխտեան վարժարանը՝ ուր վարժուհի նշանակեց իւր երկրորդ կնոջ՝ Թիկին Շուշանին: Միևնոյն ժամանակ շարունակում էր բազմաթիւ դրքեր լոյս ընծայել իր սեպհական տպարանից: Սակայն Արարատեան ընկերութիւնը քայքայուելով 1848-ին, թաղիաղեանցը ստիպուեց փակել իր թերթը: Թերթի փակումը մեծ ազդեցութիւն գործեց ժողովրդի վրայ. ամէն կողմից ցաւակցական նամակներ ու նպաստներ տեղացին. Կալկաթայի և ուրիշ քաղաքների հայերը առանձին հանգանակութիւն բանալով՝ գնեցին տպարանական պիտոյքներ և ընծայելով թաղիաղեանցին՝ խնդրեցին շարունակել թերթը: Թերթը նորից սկսաւ լոյս տեսնել և ժողովրդական նուէրներով շարունակեց իր գոյութիւնը:

1852 թուին թաղիաղեանցը թողեց Կալկաթան, և թերթը, տպարանն ու Սանդխտեան վարժարանը փոխադրեց Կալկաթայից 30 մղոն հեռու Չիչրա աւանը: Շուտով այստեղ դադար

րեցրեց թերթի հրատարակութիւնը վերջնակա-  
նապէս և 1855 թուին կորցնելով իր երկրորդ  
կնոջը, թողեց զպրոցն ու տղարանը, և ձեռք  
ստաւ թափառական ու հիւանդազին կեանքը:  
Նա գնաց Կալիֆթա, Բոմբայ, Բուշիռ, Շիրազ,  
ուր ջերմով ու լերդացաւով բաւական տառա-  
պելուց յետոյ՝ մեռաւ 1858 թ. յունիս 10-ին:

Թաղիազեանը իր ժամանակին ամէնից նշա-  
նաւոր մարդն էր. նրա անունը իրրե կիտնա-  
կան, բանաստեղծ, հայկարան ու մանկավարժ  
տարածուած էր հեռաւոր տեղեր: Նա ունէր մեծ  
ընթերցասիրութիւն և շատ սուր յիշողութիւն,  
այնպէս որ, ինչպէս ասում են, մի գիրք մի ան-  
գամ կարդալով՝ լիովին տէր էր գտնուում նրան:  
Մեծ էր նաև իր մանկավարժական ընդունակու-  
թիւնը. ոչ միայն դիւրալուր և ընտանի ոճով,  
այլ նաև զուարճալի խօսքերով սիրելի էր զարձր-  
նում ուսումը մանուկներին. նրանց չէր սպառ-  
նում կամ պատիժներով սոսկացնում, այլ հա-  
մոզիչ ու քաղցր խօսքերով աճեցնում էր նրանց  
մէջ ուսման ու յառաջագիւտութեան ցանկու-  
թիւնը:

Մեսրոպըրը գործունեայ մարդ էր և հայազ-  
գին ծառայելու համար ցոյց էր տալիս աննկուն  
եռանդ: Նրա մէջ զօրացած էր անհատականու-  
թիւնը, անձնական համոզմունքի անկախութիւ-  
նը, որ շատերի համար հաւատար էր հպարտու-  
թեան՝ ամբարտաւանութեան: Ուժեղ կամքի տէր  
էր ու վճռական. չզիտէր տատանուել և որոշեալ

նպատակին զիմում էր աներկիւղ: Չկար նրա համար ստորին պարապմունք. պարապութիւնից և ձրիակերութիւնից աւելի լաւ էր համարում հասարակ արհեստը և չքաշուից մերթ փերեզակ, մերթ շրջուն գրափաճառ, մերթ գրաշար և մերթ հոգազորժ լինելուց: Տակուն, շարքաշ ու պարգասէր էր. այն երկար ճանապարհորդութիւնները՝ որ նա արաւ, այն զրկանքները՝ որ նա տարաւ, այն աղբատիկ կեանքը՝ որին նա շատ անգամ ենթարկուեց, յուսահատական կը լինէր մի ուրիշի համար. բայց Մեարտիբը զիմազրեց բոլորին և սուանց յուսահատուելու, տարաւ. բուլորը: Իր աշխատասիրութիւնը ցոյց տալու համար բաւական է ասել թէ 8 տարուայ կարճ ժամանակի մէջ (1840-47) նա գրեց 14 գիրք, հրատարակեց 16 գիրք, հաշուելով ազիւլ ու անտիպ բուլոր գործերը՝ 23 աշխատութիւն:

Գծրախտաբար իր այս ընդունակութեանց հետ ունէր և մի քանի պակասութիւններ. բարեկամութեան մէջ հաւատարիմ չէր և ամէն տեղ իր շահն էր փնտռում. խօսակցութիւնը անպարկեշտ էր և կուսակրօն կրօնաւորներէ ստող սուր ու խայթիչ լեզու էր գործածում. բայց ամէնից աւելի նա վարակուած էր հարբեցողութեան ախտով, որով ոչ միայն իր շրջապատի մէջ չվայելեց իրեն արժանի պատիւը, այլ և հիւանդութեամբ ու տառապալի կեանքով վերջ գրաւ իր արդիւնաւէտ գործունէութեան: Նա ապրեցաւ գծրախտ և միշտ գժգոհ նիւթականից.

և չկարողացաւ հասնել իր գլխաւոր նպատակին, այն է ծառայել իր հայրենիքում, Երևանում բաւալ կանոնաւոր զպրոց և Էւրոպական կրթութիւնը ծաւալել: Այնու ամենայնիւ թաղիադեանը մնում է իրբև Հնդկահայոց ամենաեեսանդուն գործիչը, որից յետոյ Հնդկահայ գաղթականութիւնը արագ արագ դիմում է իր վախճանին:

Թաղիադեանցի գործերը բաժանում ենք 4 մասի.

1. Թարգմանութիւններ. սորա են՝ Գրովտիոսի Ճշմարտութիւն քրիստոնէական հաւատոյ (թարգմ. լատիներէնից), Պաղեստին (քերթուած, թարգմ. անգլերէնից), Առակք Պարսից (թարգմ. պարսկերէնից) և Հեղիկ հղակեաց վէպը (թրգմ. անգլերէնից), որ մինչև այժմ անտիպ է:

2. Մանկավարժական-դպրոցական գրքեր, Էրեխաների կրթութեան համար, ինչպէս Այբրեհնաբան, Առաջնորդ մանկանց և այլն, որոնց մէջ թաղիադեանը հետանալով հին խալիֆայական դրութիւնից, հետևում է նոր մանկավարժական դրութեան, ազդուելով անգլիական մանկավարժներից:

3. Ուսումնական գրքեր, ինչպէս են Դիցարանութիւն, Պատմութիւն Հին Հնդկաստանի, Պատմութիւն Պարսից, Ճանապարհորդութիւն ի Հայս, Վկայարանութիւն Ս. Սանդիտոյ, Ճաստատարակութեան օրիորդաց:

Սոցա մէջ հետաքրքիր է Ճանապարհորդութիւն ի Հայս, որի առաջին մասն է միայն

հրատարակուած, տեղագրական, պատմական և կենսագրական գործ է: Հեղինակը նկարագրում է այս հաստրում իւր 1816 — 23 թուերի ճանապարհորդութիւնները, գրքի մեծագոյն մասը նուիրուած է Այրարատի նկարագրութեան, նորա բնական աշխարհագրութիւնը, կենդանիները, բոյսերը, հանքերը, հնութիւնները, էջմիածինը, նորա ներքին ու արտաքին կեանքը, ժամանակակից պատմութիւնը, նշանաւոր անձնաւորութեանց կենսագրութիւնը, միաբանութեան կենցաղը և այլն, ամէն ինչ մանրամասն տեղ են գտել այդ գրքում: Մնացեալ մասերում նկարագրուած են պակաս ընդարձակօրէն՝ Սիւնիք, Ուտիք, Արցախ, Մարանդ, Դողթն և ուրիշ գաւառներ: Այս բոլոր տեղերից նա մէջ է բերում նաև ազգագրական հատակոտորներ, ասանդութիւններ, առասպելներ, ժողովրդական երգեր և այլն: Ամբողջութեան մէջ հիւսուած է և իւր՝ հեղինակի կենսագրութիւնը՝ ծնունդից մինչև 1823:

4. Կրական գործեր, որոնք են Վէպ Վարդգէսի տեառն Տուհայ, Վէպ Վարսենկան, Սօս և Սօնդիպի, Եղերերգութիւնը յօրհաս Թանկայ Թաղիաղեանց, Թանգարան Թաղիաղեանց, Թութակ Թաղիաղեանց, Հանդիսարան փորձանաց, Երևան փրկեալ, Արայ գեղեցիկ (վերջի երեքը անտիպ կամ կորած):

Վարդգէսի վէպը (Կալկաթա 1846, էջ 168), Հայկազանց Երուանդ Ա. Թագաւորի ժամանա-

կից է անուամբ: Հեղինակը նիւթ է վերցնում վիպասանական այս փոքրիկ պատարիկը. «Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն, եկեալ նստեալ զՇրէշ ըլլով, զԱրտիմէդ քաղաքաւ, զԲասաղ գետով, կռել կոփել զդուռն Երուանդայ արքայի»: և այս աննշան հատուածը ընդարձակելով ու մշակելով՝ կազմում է Վարդգէսի վէպը, որ թէ իր լեզուի գեղեցկութեամբ և թէ վիպական հիւսուածքի հետաքրքրութեամբ ախորժելի կերպով կարգացում է: Վէպն սկսում է մի գեղեցիկ գիշերուայ սիրուն նկարագրութեամբ, որ ամբողջ զբքի լաւագոյն էջն է:

Երեկոյ էր, և բազմութիւն պատառատուն ամպոց մասամբ խիբ լուսաւորեալ ի նշուլից անախ խոնարհեալ արեգական ցանցասակի լուղային ի կամար հաստաութեան: Գիշերանայր երեկոյ և թաւալէր յառաջէր լուսին անխռով մեծութեամբ խրով. այն ինչ Երասխ ի ներքուստ ծածանմամբ կոհակաց իւրոց, բեկբեկելով զփասս անաղօս փայլման նորս՝ նրաշացուցաներ զիշխանուհին գիշերոյ առ ի պաշտօն ջերմեռանդն ազօթկերաց: Լուսիքն համատուրած: Զովագին և եթ շնչէր հոգմ ինչ անծանօթ գերեսօք գետոյն, և ի սաղարթից անախ սօսեացն Արամանկայ հծծեցուցանէր սօտախն ինչ մեզմ առ ի սարսիռ գիշերոյ: Անցին ժամբ երեկորնականք. գուլ հտուն զօսանք մարդկան. և այր ի խշախ իւր ամօրէր զբուն քաղցրութեան իւրոյ:

Ամենի գետի ափին, Արմաւրի ահագին պարիսպների առաջ մի թշուառ պանդուխտ ընկած է քաղցած. երկու օր է նա ոչինչ չի կերել. ոչինչ չունի նա, բացի իւր սրից՝ որ նրա անբաժան ընկերը պիտի մնայ: Անօգուտ անցան իր ջան-

քերը հաց ճարելու համար, և նա միացաւ սրիկաների մի խմբի, որ Արմաւրի ժողովրդի մէջ սարսափ էր տարածել իր ոճրագործ ու աւազակային արարքներով: Շնորհիւ իր քաջութեան և իր անպարտելի ուժին՝ Արեղէնը գործաւ Արմաւրի ահարեկիչը, ծանօթացաւ սրիկաների ամբողջական կազմակերպութեան, նոցա գաղանկներին, գողուների սրջերին, գաղտնի ճանապարհներին և այլն: Նոյն միջոցին Մարաց թագաւորի զրգմամբ՝ մի քանի հայ իշխաններ գաւազութիւն էին կազմել Երուանդ թագաւորի գէմաւաջին զոհը պիտի լինէր Հայկանդուխտ՝ Երուանդի քոյրը: Դաւազիրները մեծ կաշառքով գործը յանձնեցին այս սրիկաներին: Արեղէն՝ զառամեալ ծերունու կերպարանքով ծպտուած և Վայկուն՝ սրիկաների գլխաւորը՝ գնացին արքայական պարտէզը՝ ոճիրը գործադրելու: Բայց Հայկանդուխտի տեսքը կաշկանդեց Արեղէնի սիրտը. նա չկարողացաւ ձեռք բարձրացնել այն գեղեցիկ էակի վրայ, որ աղնուութեան, գթութեան ու հեղութեան մարմնացումն էր, և խրեց սուրը Վայկունի սիրտը: «Արեղէն ազատարար Հայկանդուխտի և սպանող Վայկունի» ամէն կողմ տարածուեց լուրը, և Արեղէնի սարսափը պատեց պաշարեց ամէնքին: Ի զուր անցան Երուանդի ջանքերը՝ գանկու համար նրան: Այս միջոցին Աղուանից երկրից Զուբան անուն մի ազատ ներկայացաւ Երուանդին և ցանկացաւ արքունի ծառայութեան մանել՝ խոստանալով իբր նշան իր

քաջութեան՝ բանել ու արդարութեան յանձնել  
այն սրիկաները՝ որոնք Արմաւրի մէջ ստակում  
էին տարածել: Չուրանի գեղեցկութեան, հսկայ  
հասակի և քաջութեան վրայ հիացաւ Երուանդ  
և նրա խնդիրքը սիրով կատարեց: Եւ իրօք՝  
տեսնել նրան ու չհրապուրուել անկարելի էր:  
Հայկանդոս խալ չէնց առաջին տեսրից համակ-  
րանք տածեց ղէպի նա. իսկ Չուրանը սիրեց  
նրան ու յայտնեց իր սէրը: Չուրանը շուտ կա-  
տարեց իր խոստումը. սրիկաների անդնդախոր  
որջերը կարծես կախարդական դօրութեամբ բաց-  
ուեցին իր առաջ և նա բոլորին բռնելով կախա-  
ղան բարձրացրեց: Սոսկացին դաւադիրները.  
սարսափեց քաղաքը. և Չուրանի անուէնը ամբողջ  
ժողովրդի հիացման առարկան դարձաւ:

Արմաւրի համար պատրաստում էր աւելի  
մեծ խոռվութիւն: Սրիկաների կախուելուց քիչ  
յետոյ՝ յանկարծ արբունիքի, բաղինների, տա-  
ճարների ու պալատների պատերը ծածկուեցան  
Արեղէնի մի յայտարարութեամբ, որով նա ար-  
համարհում էր Երուանդին, Չուրանին, ըմբոսա  
էր հրատարակում իրան և մահ սպառնում բո-  
լոր թշնամիներին: Շուտով Վաղինակ Սիւնի՝  
որ Երուանդի ամենասիրելի բարեկամն էր, ան-  
հետացաւ. և մինչդեռ նորա մահուան ցաւով  
ու Արեղէնի վրէժով համակուած մտածմունքնե-  
րի մէջ ընկղմել էր Երուանդ, յանկարծ իր ա-  
ռաջ կանգնեց հրէշային Արեղէնը: Սոսկաց Եր-  
ուանդը, բայց միւս կողմից հիացած նորու յան-

դգնութեան ու հնարագիտութեան վրայ, ուզեց նրա ուժը դէպի բարին դարձնել և պատրաստել հայրենիքի համար հզօր նեցուկ։ Մի պայման միայն դրաւ Արեղէն՝ կտտարելու համար արքայի խօսքը. «Ինձ կնութեան տուր քօ քոյր Հայկանդուխտին».— «Կորիք հրէշ» գոչեց Երուանդ։ Բայց Արեղէնը սպաննաց թագաւորին և ահա մի օր յետոյ՝ թագաւորի երկու սիրելի նախարարներն էլ՝ Սորէն ու Շեկան մահ գտան Արեղէնից։

Հայկանդուխտ և Զուրան սիրում էին միմեանց. բայց Հայկանդուխտը նշանուած էր Տայոց զղեշի Ասենակի հետ։ Բզեշիւը Արմաւիր եկաւ հարսանիք անելու. բայց Արեղէնի սուրբ նրան էլ զրկեց կեանքից. «Մեր փախչիմ, ո՞ւր թազնուիմ, ինչո՞վ միթիթարուիմ» գոչեց Երուանդ՝ լսելով զօյժը։ Զուրանին դիմեց նա և խոստացաւ իր քոյրը տալ կնութեան, եթէ կարողանար բռնել Արեղէնին։ Պայման կապուեց, որոշուեց ժամը և ասպանին, քրմապետը, իշխաններն ու իշխանուհիները հաւարուեցին ատեանում։ Անցնում է ժամը, և չկայ Զուրան։ Երկիւղը տիրում է ամէնքին. արդեօք հայրենիքի վերջին նեցուկն էլ կորաւ։ Բայց ահա մտնում է Զուրան՝ կնճուռաւ, ախուր, դիսախուի մազերով. նա յայտարարում է թէ Արեղէնը բռնուած է։ Թագաւորը հրամայում է իր առաջ բերել նրան. դուրս է գալիս Զուրան, և Արեղէնը մտնում է գահլիճ. իր հրէշային սեփքից սարսափում են ամէնքը. իշխանուհիները նուազում ընկնում են։

Այստեղ հեղինակը բաց է անում վէպի ամբողջ հանգոյցը. Արեղէնը նոյն անձն է Չուրանի հետ. երկուսն էլ կեղծ անձնաւորութիւններ են. նա Տուհայ գաւառի Վարդգէսն է, որ Արմաւիրը մաքրելու համար սրիկաներից ու գաւաճաններից, նոցա ընկեր դարձաւ, ապանեց բոլորին, և այժմ երուանդի ձեռքն է յանձնում նաև այն գաւաղիւր իշխաններին՝ որոնք իրենց ոճիրը թաքցնելով, ձեացնում էին իրենց՝ երուանդի մտերիմ խորհրդակիցը: Վաղինակ, Խորէն և Շեկան ողջ են և կանխաւ գաշն կապած Վարդգէսի հետ՝ համաձայնուել էին ազնիւ գործի համար այնքան ժամանակ անգտանելի տեղերում թաղնուել: Վարդգէսը ամուսնանում է Հայկանդուխտի հետ, ստանում Տուհայ, Տայոց ու Գուգարաց բղիշխութիւնը, շինում Վարդգէսի աւանը, որ յետոյ պիտի դառնար Վաղարշապատ մայրաքաղաք:

Վէպը յատկապէս վերջի մասերում՝ կրում է հէքրաթային բնաւորութիւն. բայց ընդհանրապէս զուարթ ու գեղեցիկ է. հովուերգական սիրուն էջեր են Չուրանի և Հայկանդուխտի դրօսանքները պարտիզում, մանիշակի փոխանակութիւնը. ուժեղ ու կորովի է Արեղէնի նկարագրութիւնը, գահլիճի վերջին տեսարանը և այլն:

Ղ. Աղաշեանը իր մի յօդուածում (Հորիզոն, 1910, № 93) յայտնում է թէ Թաղիաղեանցի այս գործը հեղինակութիւն չէ, այլ թարգմանուած է մի իտալերէն բնագրից, որի սուսերէն թարգ-

մանութիւնն էլ կայ АБИЛОНЪ վերնագրով:

Վէպ վարսենկան (Կարկաթա 1847, էջ 177),  
հետաքրքիր ու գեղեցիկ վէպ է, որի առաջին  
մասը միայն հրատարակուած է: Վարսենիկը Ադ-  
ուանից վաշագան Բարեպաշտ թագաւորի աղ-  
ջիկն է. հայրը սովորութիւն ունէր ծառուած գի-  
շերային այցելութիւններ անելու՝ իմանալու հա-  
մար իր ժողովրդի ցաւերը: Այսպիսի այցելու-  
թիւններէից մէկի ժամանակ՝ մի գիշեր՝ Պարտա-  
ւի մի հին պանդոկի առաջ լսում է երեք մու-  
րացիանների կատակալից խօսակցութիւնը: Առ-  
քա (Արզունի, Գեղենակ և Գուրգէն) փափագ են  
յայտնում՝ մին թագաւորի սպարապետը լինելու,  
երկրորդը նրա խոստովանահայրը, իսկ երրորդը  
ամուսնանալու նրա Վարսենիկ աղջկայ հետ, թէ-  
կուզ առանց օժիտի և թէկուզ վտարուած հայ-  
րենիքից: Վաշագանը սատուածահաճոյ մի գործ  
կատարած լինելու համար միւս օրը երեքին էլ  
պալատ է կանչում և նոցա ցանկութիւնը կա-  
տարում: Վարսենիկ և Գուրգէն ամուսնանալով  
իրար հետ առանց օժիտի՝ վտարուած են երկ-  
րից: Նոքա դառն նեղութեամբ հեռանալով Ադ-  
ուանքից, անցնում են Մարտասան և հաստատ-  
ում Միանդուար քաղաքում: Այստեղ Գուրգէնը  
մշակութեամբ և Վարսենիկը ձեռագործով պա-  
րապելով՝ մի կերպ հայթայթում են իրենց օրա-  
պահիկը, և ամուսնական կեանքի քաղցրութեամբ,  
սիրով ու երջանիկ անցկացնում իրենց կեանքը:  
Յանկարծ մի օր Գուրգէնը դաշտում կախարդ-

ների խաբերայութեամբ բռնուելով՝ բանտարկուում է նոցա ստորերկրեայ խաւարչտին արգելարանում: Բայց իր բաջութեամբ յաղթելով կախարհներին՝ ազատուում է և Մարաց Վալէթ իշխանի օգնութեամբ բանդելով դեերի պալատը՝ տիրանում է նոցա զիգած անբաւ հարստութեան: Գուրգէնը աւերակների վրայ կառուցանում է պալատներ, տնկում է ծառաստան, հիմնում է պանդոկներ, ուր աղքատներն ու պանդուխտները իջևանում և հիւրասիրութիւն էին դանում: Թագաւորը Գուրգէնի բաջութեան ու հանճարի վրայ հիացած՝ իր մտերիմ խորհրդականն է դարձնում նրան:

Թագիադեանը իր այս երկու վէպերով հիմք է դնում մեր մէջ պատմական վիպասանութեան: Ճշմարիտ է թէ Աբովեանի «Վէրք Հայաստանին» գրուած է եղել դեռ 1841-ին, բայց նա տպագրութեամբ լոյս աշխարհ է հանուել 1858 թուին միայն. իսկ Թագիադեանի վէպերը՝ տպուած 1846—7 թուերին, անշուշտ գրուած էին դեռ աւելի առաջ: Պատմական վէպի զազաւիարը Թագիադեանը ստացել է անշուշտ անգլիական գրականութիւնից, ինչպէս որ նրա գրական մշակութիւնն առհասարակ անգլիական՝ եւրոպական ազդիւրից է: Սակայն ի՞նչ շարժով կարելի է պատմական կոչել այդ վէպերը: Պատմական վէպից պահանջուում է կենդանի կերպով նկարագրել այն կեանքը, որ ժամանակ տեղի է ունեցել պատմուած դէպքը, առանց շեղուելու պատմական

աստառից. այնպէս որ ընթերցողը ներկան մոռացած՝ փոխադրուի մի բողբէ՛ հին աշխարհը և ապրի այդ կեանքով: Բայց Թագիսպեանի վէպերը նախ և առաջ շունին պատմական աստառ: Այն վիպասանական կարճ հատուածը՝ որի վրայ հիմնուած է Վարդգէսի վէպը, ոչինչ չէ տալիս մեզ՝ բացի մի երկու անունից. այնպէս որ գրքի ամբողջ վիպական հիւսուածքը հեղինակի նաւրածն է: Աւելի պակաս շարժով է Վարսենիկի վէպը: Սա մի արևելեան հերթաթէ (ինչպէս ցոյց է տալիս Լ. Մանուէլեանը), որ ծագել է թերևս պարսկական հողի վրայ, մշակուել զանազան արևելեան ժողովուրդների մէջ և նպատակ ունի երևան հանել, բարձրացնել արհեստի նշանակութիւնը: Բայց ոչ մի կապ չունի Աղուանից Վաչագան թագաւորի կամ Մարաց անգոյ Վլէթ իշխանի հետ:

Երկրորդ հանգամանքն այն է որ երկու վէպերի մէջ էլ չկայ հին կեանքի ուսումնասիրութիւն. դէպքերը անցնում են բոլորովին այնպէս՝ ինչպէս ներկայ կեանքում. և եթէ չլինէին հին անունները (Վարդգէս, Արմաւիր, Երուանդ թագաւոր, Վաչագան և այլն), մենք չպիտի կարողանայինք իմանալ թէ վէպը իրօք պատմական է:

Հեղինակը Վարդգէսի յառաջաբանում յայտնում է թէ գրելով այս վէպը՝ նպատակ ունի գարթեցնել Հայոց մէջ նախնի Հայկազանց քաջութեան ոգին՝ հայրենիքի ազատութեան ազնիւ գործի համար: «Մի տող ի սմանէ շատ արժէ

ի զարթուցանել զոգիս քաջացն Հայկազունեաց, որում յաւէտ պէտս ունիմք, քան զհազար մատեանս վիհերոտաց: Ճշմարիտ Ազգասիրին է օրինակաւ քաջի զործոց նախահարց՝ զոգիս որդւոց զարթուցանել յազատութիւն հայրենեաց: Այս գովելի ձգտումը տիրող գաղափարն է հանդիսացել զրեթէ մեր բոլոր պատմական վէպերի մէջ: Ծերենցը իր Երկունքի և Թորոս Լեւոնի մէջ, Բաֆֆին իր Մամուկի մէջ, Լէօն իր Մէլիքի աղջկան մէջ և այլն, արծարծել ու պաշտպանել են նոյն գաղափարը: Թաղիաղեանը՝ որ առաջինն է հանդիսանում այս գաղափարի բարոզութեան մէջ, չէ հետեւել սակայն նրան իր զբրուածքում, այնպէս որ թէ Վարդգէսը և թէ Վարսենիկը, թէև ունին քաջութեան և ճարտարութեան զանազան զործեր, բայց ոչ այն քաջութիւնը որ մարդուն հայրենասիրական ոգի ներշնչէր, ազգային սէրը նրա օրտում բորբոքէր: -

Այսպէսով ուրեմն երկու վէպերի մէջ էլ պատմական անուան կամ արտօրին պատմական ձևի տակ՝ մենք ունինք մի ոսման կամ մի մշակուած հէքիաթ:

Այժմ անցնինք Թաղիաղեանի բանաստեղծական գրուածքներին, որոնք թուով աւելի մեծ են քան վիպական գրութիւնները:

Թաղիաղեան ունի բազմաթիւ մանր բանաստեղծութիւններ, ազգային, սիրային, երգիծական կամ ուրախ բովանդակութեամբ: Ազգային երգերից ամենապեղեցիկը Տէր Կեցո՛ւն է, այն օրհներ-

գութիւնը, որ հայրապետական մաղթանք է դարձել այժմ և որ անմահ է պահում թաղիադեանցի անուները, Համառօտ է այս երգը, կարճ տողերով ու կարճ բառերով. բայց ինչպիսի խորունկ ներշնչման, ինչպիսի զօրեղ յափշտակութեան բողբոջ արտադրութիւնն է այն: «Դա հայկական բանաստեղծութեան թանկագին գոհարներից մէկն է» ասում է Մանուէլեանը. իսկ Նալբանդեանը յափշտակուած գոչում է. «Եթէ հնարունենայի, ևս ամենասուրբ պարտականութիւն կը դնէի ամեն մի հայի վերայ անգիր ուսանել այս երգը: Մինչև այսօր իմ կիանքի մէջ չեմ տեսած կամ լսած մի այսպիսի երգ. ահա բուն ազգային երգ»: Երգիչը խնդրում է Տէրոջից որ պահի հայերին, հաճի տալ նրանց իր վերին ոգորմութիւնը, որպէսզի կարողանան ապրել այս աշխարհում. պայծառ ու զօրաւոր անի նրանց, կարի թշնամիների արմատը. իր համատարած աջով հաւաքի այս ցրուած ազգը Արարատեան աշխարհում, որ օտարների սեփականութիւնն է դառել և հանի վերջապէս մի հովիւ, տայ նրան հուժկու ցուպ հովուելու համար մեզ:

Տէր Կեցո-ից յետոյ յիշատակելի է զամբիւղաշէն աղջկայ երգը: Մի ազբատ պանդուխտ աղջիկ է, որ ազբատութիւնից ստիպուած, թողել է իր այգին, իր տունն ու տեղը, պանդխտել է Գանդէսի ափերը, զամբիւղ է հիւսում, ծախում, մի բանի սև փող ճարելու և հայրենիք վերագաննալու համար: Եւ երգում է որ հնդկա-

Հայ պարոններն ու տիկիները բարի լինին իր  
զամբիւղներէց զնելու:

Գիւղական աղջիկ եմ ես զամբիւղաշէն,  
Եկեալ աստ զամբիւղօք ի Հայոց երկրէն.  
Յուսամ, զի Հայ տիկնայք և պարնայք Հնգկաց  
Բարձր զին տայցեն իմ սերուն զամբիւղաց.  
Ան զամբիւղս յօտար աղջկանէս:

ԶԱրարատ, զԵփրատ և զՏիգրիս թողի,  
Միայնակ շրջիմ աստ յեզերս Գանդէսի,  
Պանդուխտ եմ, օգնեցէք անտերունչ անձինս,  
Զի ծնողք ձեր յառաջ աստ պանդուխտ էին:  
Ան զամբիւղս յօտար աղջկանէս:

Զամբիւղք իմ են յարմար ասղնագործութեան՝  
Պահել անդ զմասնոց, զթելլ, զսոզաման.  
Իմ ձեռօք եմ գործեալ ես զամենեսեան,  
Երբ խաշինք և գառինք իմ զինն խայտան:  
Ան զամբիւղս յօտար աղջկանէս:

Գանձք բազումք, ցաւք բազումք կան յայտ աշխարհի,  
Պէտք սահաւք, ցաւք սահաւք կան յիմում երկրի.  
Զայգի մի ունէի՝ զամբիւղ գործէի,  
Լոկ կաթամբ և պաղով երջանիկ էի:  
Ան զամբիւղս յօտար աղջկանէս:

Աստ սերկելի, ծիրան և խաղող չի կայ,  
Բայց միայն աղայ, բիւլա ու քիւլայ.  
Ա՛խ, երբ իցէ, զի արժանի եղեց վերջստին  
Ճաշակել զպտուղս իմոյ պարտիզին:  
Ան զամբիւղս յօտար աղջկանէս:

Ազատ գուք լաւ տիկնայք՝ զամբիւղս իմ առէք,  
Գիւղական աղջկանս սիրով օգնեցէք.  
Զի դարձեալ յերկիր իմ հանդերձ ձեր շնորհօք՝  
Զերախտիս ձեր առեալ՝ զովեցից բազմօք:  
Ան զամբիւղս յօտար աղջկանէս:

Իւր մանր քերթուածները Թաղիաղեանը հաւաքել է Թուրքիայի Թաղիաղեանց հաստրում (Կալկաթա 1847), այստեղ պարունակուած երգերի մէջ նշանաւոր են Հայկ ի տեւիլ Հայկազանց, Մայրիկ զու, Սէր վրիպեալ: Առաջինը արծարծում է հայութեան վերածնութեան գաղափարը եւրոպական լոյսով ու գիտութեամբ, սոյն որի համար աշխատեցան ինքը և իր ընկերները, Արովեան, Նազարեան, Ռուսինեան և այլն: «Մայրիկ զու» երգի մէջ նկարագրում է վարժապետի թշուառ կեանքը, նորա բարոյական մեծ դործի փոխարէն նիւթական անձուկ կացութիւնը, զրկանքները, տեսած արհամարհանքը. բայց այս կացութեան առաջ նա չպիտի յուսահատի, որովհետեւ կեանքը կոխ է և այս կոտի մէջ պատիւն ու յաղթութիւնը նրա կողմն է: «Սէր վրիպեալ» քերթուածի մէջ դատապարտում է փողային ամուսնութիւնը, ուր սէրը դործ չունի, մարդկային արժանաւորութիւնները անտես են առնուած, և որ յառաջ պիտի բերէ դժբախտ ու սպերջանիկ կեանք:

Եղերեւրզութիւնը յօրհաս Թամակայ Թաղիաղեանց պարունակում է մի խումբ մանր ու խոշոր սիրային քերթուածներ, որոնք նուիրուած են իր վաղամեռիկ կնոջ յիշատակին: Ալամզարեանի նման Թաղիաղեանն էլ ներշնչուած է այստեղ միայն իր սիրելու յիշատակով, երգում է իր նախկին սիրային յիշատակները, սիրոյ նամակները և վերջապէս տխուր բաժանումը մահուան օրհասով:

Թանգարանն Թաղիադեանց, կիսատ երգերով պատմական պօէմա է, ուր երգում է Բաղրատունի Կոսիկոս իշխանի որդի Թաղիադինի կուր Թաթարաց Հուլաղու խանի հետ: Սրանից աւելի մեծ է Սօս եւ Սոնդիպի (Կալկաթա 1847), որ հինգ երգի բաժանուած պօէմա է: Սօսը Վանեցի մի իշխանապուն է, որ շատ երկիրներ ման գալով՝ հասնում է Հնդկաստանի Կանոջ քաղաքը. այստեղ նա պատահում է Սօնդիպի անուն գեղեցիկ հնդկուհուն, որ Հնդկաց Սուրաջ թագաւորի աղջիկն է: Սօս և Սօնդիպի սիրում են միմեանց. Սուրաջը չարախօսների ամբաստանութեամբ, կասկածելով իր աղջկայ քարոյշականութեան վրայ, ուխտում է զոհել նրան աստուածներին: Սօս և Սօնդիպի փախչում են Հայաստան: Սուրաջ հետամտում է նրանց և վերջապէս՝ մի անգամ՝ Վարդավառի տօնին, երբ Սօնդիպին հայ աղջիկների հետ ծաղիկ էր քաղում տօնի համար, յանկարծ վրայ է հասնում, և իր ուխտը կատարում՝ աղջիկը զոհելով Հայոց Վահագն աստուծուն:

Այս վերջին երկու գործերով Թաղիադեանը հիմք է դնում մեր մէջ պօէմայի, ինչպէս Վարդգէսի վէպով որոշ չափով հիմք էր դրել պատմական վէպին: Նրանից առաջ ունէինք մենք զիւցազներգութիւն, հովուերգութիւն, քնարերգութիւն, բայց պակասում էին զրական այս երկու սեռերը: Այս պատճառով էլ Սօս և Սօնդիպին մեծ յաջողութիւն է գտել իր ժամանակ և

արժանի է դատուել երկրորդ ասպարու թեան (Պօլիս 1871), կոչուելով զլուխ գործոց: Բայց պէտք է խոստովանիլ թէ սա իրօք աւելի քիչ հետաքրքիր է քան Վարդգէսի վէպը: Հեղինակի գործածած անսովոր բաները՝ մասամբ իւր հնարած, մասամբ անձանօթ գաւառական (ինչ, քեր՝ քերթուած, ար՝ արհամարհանք), հնգկական զիցարանական էակների անվերջ յիշատակութիւնը, նիւթի մէջ մտցրած միջադէպների շատութիւնը միջնացում են իմաստը, մանաւանդ հնդոտնեան շափը՝ որով գրում է հեղինակը և որ մանկական տտանաւորներին միայն յարմար է, շատ քան պակասեցնում է նրա արժանիքից: Սորա հակառակ, զեղեցիկ է հեղինակի ընտրած գաղափարը. դա սիրոյ ջատագովութիւնն է. նա այնպիսի մի հզօր զգացմունք է, որ ոչ մի արասքին արդելքի առաջ չի ընկրկիլ. ոչ ազգային խտրութիւն, ոչ կրօնական տարբերութիւններ կարող են նրան ընկճել, ոչնչացնել:

Թագիտգեանով վերջանում է կեղծ դասականութիւնը արեւիխան գրականութեան մէջ. հեղինակը կանգնած է իբրև միջին օդակ երկու օւղու թեանց մէջտեղ. իր ընտրած նիւթերով նա պատկանում է նոր ուղղութեան, բայց լեզուն գրարտը է. երբեմն միայն նա գրել է աշխարհաբար, ինչպէս Ազգասէր թերթի առաջին համարները և իր կարճ բանաստեղծութիւնները: Բայց այս աշխարհաբարը դեռ շատ խակ վիճակի մէջ է. նա մի տեսակ խառնուրդ է Ջուզայի բարբառի

և մաքուր հայերէնի, Երեւանի բարբառով համեմ-  
ուած:

### 7. ՄՐԱՊԻՈՆ ՀԷՔԻՄԵԱՆ

(1832—1892)

Ա. Զօպանեան. Քաարերգութիւնը մեր մէջ. Մասիս  
1893, էջ 36—38:

Զ. Ա. Երեմեան. Հայ-Հնովմէական գրականութիւն.  
Բազմազէպ 1900, էջ 534—6:

Ը. Տէր-Յակոբեան. Ա. Հէքիմեան. Արեւ. Մամուլ  
1901, թիւ 15, 16:

Քաարերգակ և բանաստեղծ Մրապիոնն Հէ-  
քիմեանը ծնուեց 1832 թուին Պօլսում. նա դա-  
ւանութեամբ կաթոլիկ էր. տասը տարեկան հա-  
սակում ծնողները ուղարկեցին նրան Վենետիկի  
Մխիթարեան վանքը, որտեղ ստացաւ կէս կրօ-  
նական և կէս հայկական կրթութիւն: Աշակեր-  
տելով մասնաւորապէս հայր Ալիշանին, ժառան-  
գեց նրանից բերթողական ներշնչում, որը ար-  
տայայտել սկսաւ զեռ գոլրոցական սեղանի վը-  
րայ: Այս շրջանին է գրել նա 50-ի չափ բանաս-  
տեղծութիւններ, որոնք հրատարակուած են իր  
երկերի ժողովածուի մէջ և որոնցից երկուսը մէջ  
կը բերենք յետոյ՝ իբրև նրա բանաստեղծու-  
թեանց գեղեցկագոյնները:

Մխիթարեանց գոլրոցում վարդապետ ու-  
սուցիչները շատ անգամ կազմակերպում էին ա-  
շակերտների մէջ և նոցա միջոցով զանազան  
թատերական ներկայացումներ. պատանի Հէքիմ-

եանը բնականից սէր ունենալով դէպի թատերական արուեստը և մասնակցելով միշտ նոյն ներկայացումներին, այստեղ էլ արաւ իր առաջին վարժութիւնները: 1848-ին գրեց նա իր առաջին թատրերգութիւնը՝ Արատշէս և Սաթենիկ, որ զեղարուեստական տեսակէտից առաջինն է իւր բոլոր թատրերգութեանց մէջ:

1856 թուին վերագասնալով Պօլիս՝ Հէքիմեանը անձնատուր եղաւ գրականութեան. նա հարուստ մարդ էր, ուստի նիւթական կեանքի նեղութիւնները չիմացաւ երբեք. ապրեցաւ միշտ իր կէտով և իր հարստութիւնն էլ գործածեց իր սիրած գործի՝ թատրոնի համար: Հէքիմեանը եղաւ թատրոնի իսկական հիմնադիրը հայոց մէջ:

1857 թուին Պօլիս էին եկել մի խումբ իտալացի դերասաններ և իտալերէն լեզուով ներկայացումներ էին տալիս. մի անգամ Հէքիմեանը ներկայ է լինում իտալացի Քիէրիչիի մի թատրերգութեան ներկայացման, որի նիւթը վերցրած էր հին յունական կեանքից: Ազգային բարի նախանձով վառուած Հէքիմեանը ցանկանում է հայկական կեանքն էլ բարձրացնել բեմի վրայ: Այս նպատակով իտալերէնի է թարգմանում իր գրած Վահրամ պատմական ողբերգութիւնը և նոյն խմբի միջոցով ներկայացնում 1857 թուին: Բայց այսքանը բաւական չէր. Հէքիմեանը ցանկանում է արդէն տեսնել հայ թատրոն:

Մինչև այն ժամանակ հայերը կազմակերպուած ներկայացումներ չէին ունեցել. թէև հրա-

տարակուսած էին մի քանի թատերական գրուածքներ, տեղի էին ունեցել մինչև իսկ հայերէն ներկայացումներ (Վենետիկ, Վիեննա, Պօլիս, Չմբուսիա, Թիֆլիզ, Մոսկուա), բայց այդ բոլորը անհատական, մասնաւոր շրջաններում, այս կամ այն հարուստի տանը՝ իբրև ընտանեկան գուարճութիւն, կամ դպրոցներում՝ իբրև աշակերտական գրօսանք։ Ներկայացումների նիւթը լինում էր սովորաբար մեր հին պատմական կեանքից. սկզբունքով մերժուած էր նոցանից ամէն մի կանացի դեր. որովհետև սղջիկ ու կին, սէր և ամուսնութիւն բեմի վրայ բարձրացնելը համարում էր անբարոյականութիւն։ Հէքիմեանն եղաւ առաջին կազմակերպիչը թատրոնի և թատրերգութեան. նա ընտրեց գերասաններ և գերասանուհիներ, վարժեցրեց նրանց արուեստի մէջ և այսպէս դառնալով առաջին հայ գերասանապետը և կազմելով առաջին գերասանական խումբը՝ հիմնեց առաջին հայկական թատրոնը Ստոկիւղում (1858)։ Նոյն ժամանակ Պօլիս դարձան Մխիթարեան ուրիշ սաներ. Թովմաս Թերզեան, Մկրտիչ Աճէմեան, Սրապիոն Թղլեան և այլն. և այս բոլորը միացան Հէքիմեանին։ Մեծ էր ոգևորութիւնը. ժողովուրդը գնահատում էր նրանց և գունդագունդ գիմում էին թատրոն։ Շինուեցաւ նշանաւոր Արևելեան թատրոնը։ Բայց զա չէր կարող բաւականութիւն տալ պահանջներին. նրան յաջորդեցին մի քանի ուրիշ թատրոններ՝ Պօլիս միւս հայաբնակ թաղերում։ Օրի-

նակը շուտով անցաւ Զմիւռնիա և Կովկաս. Պօլսի դերասանական խումբերը սկսան ցրուիլ այս ու այն կողմ և այսպէսով թատրոնական գործը հաստատուն հիմքի վրայ դրուեցաւ :

Հէքիմեանի գլխաւոր գործակիցն եղաւ Պէշիկթաշլեանը: Բաւական չէր միայն ունենալ թատրոններ ու դերասաններ. ամենագլխաւորը թատերական գրուածքներն էին. ուստի Հէքիմեան, Պէշիկթաշլեան և յետոյ ուրիշներ, ձեռք ձեռքի տալով սկսան գրել ու թարգմանել զանազան թատերագութիւններ, ողբերգութիւններ, գլխաւորապէս սրտամական:

Հէքիմեանի գործունէութիւնը տևում է մինչև 1864 թիւը. այնուհետև նա տեղի տալով նորերին՝ քաշուում է ասպարէզից և գրեթէ անյայտութեան մէջ ապրում մինչև իր մահը, որ տեղի ունեցաւ 1892 մարտի 8-ին:

Հէքիմեանի՝ տպագրութեամբ ծանօթ գործերն են. Տաղը, բերթուածը և թատրերգութիւնը Սրապիոնի Հէքիմեան (Պօլիս 1857), Յուլիանէ, Դոմալա, Պօղոս և Վիրգինիա (Պօլիս 1864), Բրիստոս ի Վատիկան՝ Վիկտօր Հիւգօյի քերթուածի թարգմանութիւնը (Պօլիս 1871): Առաջինը՝ որ մի ընդարձակ հատոր է (521 էջ), պարունակում է Հէքիմեանի աշխատութեանց մեծագոյն մասը, այն է 135 ոտանաւոր և չորս թատրերգութիւն (Արտաշէս և Սաթինիկ, Հարմակ և Աշխէն, Սամէլ, Վահրամ):

Քերթուածների նիւթն է սիրային, նկարա-

գրական, բարոյական. կան մի խումբ բարեկամական քերթուածներ, այսինքն նուիրուած այս կամ այն բարեկամին. հայրենասիրական տաղերը սակաւաթիւ են. բայց սորա հակառակ կան մի բանի պօէմաներ մեր ազգային պատմութիւնից. ինչպէս՝ Յառուսն նոր Զուգայ, Աղուարդ (11 երգ), Մահ Տրդատայ, Նահատակութիւն Գաւթայ և Գուրգէնի, Արկածք ի մահուն Գնեւայ, Հրաժեշտ Հարմայ առ Արաւաւաղ, Սմբատ յուսանաա յետ սպանանելոյ զԹորոս և կուրացուցանելոյ զաչս Հեթմոյ, Նուարդ առ Արա, Անդ կացցես և զլոյս մի տեսցես: Հէքիմեանի ոտանաւորները առհասարակ արդի շափական ձևով են, բայց պատմական քերթուածները գրուած են հին հայկական շափով: Արուեստի կողմից նրանք թէև առհասարակ աշխոյժ ոչևորութեան և բարձր երևակայութեան ծնունդ չեն, բայց նոցա մէջ կան և այնպիսիները՝ որ կարող են արժանաւոր տեղ ըննել մեր գրականութեան մէջ, մանաւանդ ազգային պատմութիւնից վերջրած քերթուածները: Ամէնից աւելի թոյլ են բարեկամական նուէրները, սրունց մէջ ներշնչման բացակայութիւնը շատ զգալի է:

Իբր նմոյշ Հէքիմեանի բանաստեղծութեան՝ մէջ ենք բերում այստեղ իւր ոտանաւորներից երկու լուազոյնները:

Գիշեր միայնիկ

Ի տիրական խորհուրդս անդուլ

Քաղցր է մտացս իմ թափառիլ,

Եւ զգիշերոյ ժամս իմ լնուլ

Գիտեալ զերկնից անգարդ տեսիլ:

Ոչ որ կայ մերձ տո իս այժմիկ,  
Եւ աստ մարթիմ կալ անարգել,  
Ոչ նշուիւք ըն խաղաղիկ  
Տիկինն երկնից յըստուերին ել—

Ինձ լոկ բնկեր է գաննաշունչ  
Օգտատարած հոգմոց մտունչ,  
Որ զկրթից պատկեր ինձ ասն—

Յուցակք ժամուց խոր մեղեղեաւ  
Ի ասնարէն բարոզ կարգան,  
Յաւուրց քոց, մարդ, միւս ևս թռեաւ:

Ի յուշ արտասուաց  
Որպէս ալիք փրփրազէզ  
Ընդ ժայռ անհարթ սողոսկեալ,  
Եւ զըզչմամբ խոր ցայտեալ,  
Յուզեն լրճին պարզ 'երես:

Այսպէս խորհուրդք սիրակէզ,  
Յոռովեն յանախ զիմ ոգիս,  
Ընդ ախուր բաղդ մեր ի յիս,  
Դառն յուզեալ մաղձ ախրատես:

Ի թախձանացն յայն վայրկեան,  
Քանիցս ի զրաւ իմ շարեաց  
Եւ խնդրէի բզղամբան,

Սակայն ի յայնմ իոկ ի պահ,  
Զի՛ ատելի էր ինձ մահ  
Ի յուշ քոյոց արտասուաց:

Հէքիմեանի ոտանաւորները անհասարակ ախուր են. այդ այն ախրութիւնն է՝ որով համակուած են Պէշիկթաշլեան, Դուրեան: Հէքիմեանը գուցէ շունէր այն նիւթական ու բարոյական պատճառները՝ որոնք ծորում էին այս բանաստեղծների սրտի մէջ ախրութեան կաթիլները, բայց նա էլ Արևելքի զաւակն էր և թախիժը արևելեան բանաստեղծների անբաժան ընկերն է, նոցա ներշնչող ոգին: Հայրենական քերթ-

ուածները որոշ չափով ազատ են այս տխրութիւնից. սորա անհասարակ աւելի գեղեցիկ, աւելի ուժով են. հեղինակը աշխատել է հին հայրենի փառքի նկարագրութեամբ վառել իր հայրենակիցներին սրտերը, արծարծել նոցա մէջ ազգային զգացմունքը, հայրենի յուշերը զարթեցնել: Ահա մի հատուած էլ «Անդ կացցես և զույս մի տեսցես» հայրենական բերթուածից, որով երգում է Արտուազղ Բ-ի որսորդութիւնը Մասիսի վրայ, զահալիժութիւնը անդունդի մէջ:

«Զի կալէք, ազատք Հայոց, արքայն ձեր յորս ելանէ»...  
Ի յուր փողոյն հրաւիրանաց, անահաական զինուցի զարդ  
Պէնեալք և վեհաճեմ իջին ազատք ի ծուխս հովասց:  
Բազմեալ ի սեան իւր գեղեցիկ գայր Արտուազղ ըզհետ  
նոցա,

Պարտեաշ հերաց խողոպիք իջանէին յուսոցն ի վայր  
և սազուարտ ոսկեծեփ ծածկէր ըզզուխըն վեհունակ.  
Հապիտակ փետուրքն ըզկնի գեփիւսավար ծածանէին,  
և սրտին արութիւն արտափայլէր ի շող բրացն:  
Թոյլ ի ձեռին գերասանակս ունի, շահէ ըզբաշ ձիոյն,  
և անգէտ ազգային ի սէզս հովասց մտրակահար  
Մղէ արշաւ. — յայտարանս քո գարձիր, ս' հէքդ Արտուազղ.  
Մի ի մացառս Այրարատայ ի հիւրադաւս զիմեակրօնուլ:  
Ո՛չ գիտես որպիսի բեզ անդ գարան արկեալ է գից.  
Ո՛չ տակաւին հորդ անէժբ յուժան ոգեալքն ի դազազէն...:

Արտաշէս և Սաթմիկի՛ շէքիմեանի ստաջին թատերական գրուածքն է, հինգ արարուածով, որ գրել է 1848 թուին՝ դեռ 16 տարեկան և աշակերտ եղած ժամանակ, երբ թատերական արուեստի ու թատրոնի մասին թոյլ գաղափար միայն ունէր: Ահաւասիկ այս թատրերգութեան նիւթը: Ալանաց Վահլան թագաւորը պատերազմի է գալիս Արտաշէսի վրայ. Արտաշէսը հասարակ զինուորի շորեր հագած՝ կոուի դաշտն է մանում:

նա պատահում է մի ուրիշ զինուորի՝ որ Վահրան  
Թաղուորի աղջիկն է, Սաթինիկը, նոյնպէս  
ծպտուած հասարակ զինուորի շորերով: Սոքա  
սկսում են մենամարտիլ միմեանց հետ. Արտա-  
շէսի կրակոտ հայեացքը թափանցում է Սաթի-  
նիկի սիրտը. Սաթինիկը սիրուց յաղթուած,  
ընկճուած, նուազում, գետնն է ընկնում. Արտա-  
շէսը տեսնում է որ իր ախոյեանը ծպտուած կին  
է և այնտեղ երկուսը սրտագին սիրում են միմ-  
եանց, առանց սակայն միմեանց ճանաչելու:  
Ալանաց բանակը յաղթուած է շարաշար և Սա-  
թալան արքայորդին գերի է ընկնում Հայոց  
ձեռքը: Կէս գիշերուայ խոր լուսթեան մէջ, թըշ-  
նոտիններից քայքայուած բանակում, իւր վրանի  
մէջ ստանձնացած տխուր նստել է Սաթինիկը.  
յանկարձ մի ոտնաձայն է լսում. Արտաշէսն է՝  
որ թագուն, պահապան զինուորներից խուսափած  
եկել է Սաթինիկի վրանը՝ սիրոյ յուզմունքները  
պատմելու: Ի՞նչ գեղեցիկ է նրանց խօսակցու-  
թիւնը:

#### Սաթինիկ.

Ո՛ սիրելիդ իմ պատանեակ, սիրտ իմ ընդ քոյդ հրճուի բնդ սէր  
Ի յերկրի գի՛նչ քուցցրագոյն քան վայելիլ ի սէր այլոց.  
Այլ թագձու թիւնցանկ ի բաժակ երջանկու թեան կայ խառնեալ:

#### Արտաշէս.

Ասա թէ դու ոչ սիրես զիս, աղէ ձայն  
Տուր Ալանացդ, և կեղեքեալ յօշ յօշ զանդամս իմ փշրեացեն.  
Հրամայեա, և անպաշտպան զանձն իմ յանձնեմ ի ձեռս նոցա,  
Եւ դու անգութ յայն տեսիլ յագեցուսցես զձարաւդ արեանս—  
Ոչ— ոչ ի սիրտ Ալանաց մարթի սիրոյ սերմն անկանիլ  
Զուր յագգակցացքդ վեհագոյն ըզքեզ գրէիդու արթուն երկնից.  
Ծնունդ ժանս ապառաժից կարծր ի ձոցիդ կրես լոկ սիրտ:

Սաթինիկ.

Ո՛չ յարտասուս իմ սղորմիս, ս՛հ, ս՛չ գիտես, ս՛ անգութ,  
Զի ի նկարելոյ իսկ զայսպիսի աղիողորմ ինձ տեսարան,  
Ըզգողի հարկանիմ, և կեղեքեալ բեկանի սիրտս:

Արտաշէս.

Ո՛հ կասեցն գմարգարտանման աղբերոյ աչաց յորդախազաց,  
Ներեա ինձ — և մի մերմեր գիս ի սիրոյդ:

Հայոց սրերի տակ ընկճուած, իր սիրական  
որդուց զրկուած Վահլանը մի միջոց միայն ու-  
նի և նա կանչելով Սաթինիկին իր մօտ՝ առա-  
ջարկում է նրան Արտաշէսի կինը գտնալ, ա-  
զատելու համար թէ հօրը և թէ իր գերի եղ-  
բօրը: Բայց Սաթինիկի սիրտը զբաւուած է այն  
անձանօթ զօրականի սիրով. նա լալիս է, նա  
վարանում է. բայց հօրը, եղբօրը և հայրենիքի  
սէրը վերջապէս հրամայում է նրան զօհուել և  
նա ընդունում է: Նոյնպիսի զրութեան մէջ է  
նաև Ագտաշէսը, որին Սմբատ զօրավարը յոր-  
դորում է ընդունել Ալանոց արքայազատեր ձեռ-  
քը և վերջ տալ երկու սպանի թշնամութեան:  
Բայց ի՛նչքան մեծ է լինում Արտաշէսի ու Սա-  
թինիկի զարմանքը, երբ նշանադրութեան ժա-  
մանակ իրար են գտնում:

Հարմակ ևւ Աշխէն արուեստով ու բանաս-  
տեղծութեամբ նախորդից նուազ գեղեցիկ, բայց  
նիւթի հետաքրքրութեան կողմից աւելի ուժեղ  
սղբերգութիւն է հինգ արարուածով, որը գրել է  
1850-ին: Անցքը կատարում է ԺԳ զարում Սա-  
շէնում. Սաշէնի իշխանը՝ Վախթանկ՝ պատերազմ  
ունի թաթարների հետ, որոնք մեծ ուժով ար-

շաւել են իր երկիրը. Տաշրաց իշխան Զարմայրը իր մտերիմ Սեպուհի հետ օգնութեան է եկել Վախթանկին և օգուտ քաղելով նրա դժուար կացութիւնից՝ խնդրում է նրա գուտար Աշխէնի ձեռքը, ոչ թէ սիրոյ պատճառով, այլ այս կերպով Սաշէնը ձեռք ձգելու գիտաւորութեամբ: Վախթանկի քաջ ու անձնուէր զօրավարը՝ Հարմակ՝ ջախջախում է թաթարների ուժը և յաղթական վերադառնում: Աշխէն և Հարմակ սիրում են միմեանց և ուխտել են յաւիտեան անբաժան լինել միմեանցից: Զարմայրի առաջարկութիւնից անտեղեակ Հարմակը շարունակում է իր սիրային ժամագրութիւնները Աշխէնի հետ, բայց Վախթանկը մի անգամ վրայ հասնելով՝ մահուան է դատապարտում նրան: Ի դուր են անցնում Աշխէնի աղաչանքը, Զարմայրի ձեռքը մերժելը. Հարմակի քաջազորութեան ու երկարժամանակեայ հաւատարիմ ծառայութեան յիշատակները մոռացում են և նա դատապարտուած բանտի կապանքներին՝ քաւում է իր յանդգնութիւնը՝ սրով համարձակուել էր իշխանի աղջկան սիրելու: Ծանր է Աշխէնի դրութիւնը. հօր և հայրենիքի սէրը մի կողմից, Հարմակի սէրը միւս կողմից տանջում են նրան. թողնել Հարմակին, դրժել իր սիրոյ ուխտը, այդ նա չի կարող մերժել Զարմայրի ձեռքը, բայց հայրենիքը վառնողի մէջ է և առանց Զարմայրի օգնութեան նա կարող է կործանուել թաթարներից: Եւ հայրենիքի սէրը տանում է յաղթանակը. Աշխէնը

պատկուում է Զարմայրի հետ, իսկ Հարմակը բան-  
տում թոյն է ընդունում: Զարմայրի մտերիմը՝  
Սեպուհն նոյնպէս սիրահար է Աշխէնին, բայց  
տեսնելով որ այլ ևս ամէն ինչ վերջացել է, դա-  
ւաճանում է ամէնքին, մահ է նիւթում իր մտե-  
րիմ բարեկամին: Եւ մինչդեռ նրանք տաճարումն  
են դեռ, զօրքերի գլուխն անցած արշաւում է  
նոցա վրայ, հրդեհում տաճարը. Զարմայրը փախ-  
չում է, իսկ Աշխէնին նուազած դուրս են հա-  
նում տաճարից: Աշխէնի եղբայրը՝ Հրաշեայ բանա  
է գիմում և Հարմակի շղթաները խորտակելով՝  
յարձակում են դաւաճանների վրայ. Հարմակն  
իր ձեռքով ջախջախում է Սեպուհի գանկը, դա-  
ւաճաններին փախցնում և վերադառնում Վախ-  
թանկի և Աշխէնի մօտ. սակայն սրտառուչ հան-  
դիպումը երկար չի տևում, թոյնի ազդեցութիւ-  
նը սկսում է և Հարմակ ու Աշխէն հրաժեշտ են  
տալիս կեանքին:

Սամէլ կամ Կրօնք եւ տիրասիրութիւն՝  
հինգ արարուածով սղրերգութիւն է, գրուած  
1854—6 թուերին. նիւթը վերցրած է Դ դարի  
մեր ազգային պատմութեան ուժեղ էջերից: Ար-  
շակ Բ գերի էր Պարսկաստանում. Մերուժան  
Արծրունի և Վահան Մամիկոնեան պարսկական  
բանակների գլուխն անցած աւերում էին Հայաս-  
տանը. ուխտապահ նախարարները կուում էին  
նոցա հետ՝ անհամբեր սպասելով Պապին, որ  
յունական բանակով պիտի գայ Յունաստանից՝  
հայրենի գահը ժառանգելու: Այս միջոցին կա-

տարւում է ներկայ ողբերգութեան նիւթը: Սամէլ՝ Վահանի որդին, որ ուխտապահների կողմից է, ամէն ջանք գործ է դնում համոզելու իր ուրացեալ հօրը՝ թողնել մոլար ճանապարհը և ազգին ու հայրենիքին չդաւաճանել: Բայց երբ իր յորդորները ի դուր են անցնում՝ խրում է սուրը նրա կուրծքը: Այս ճնշխարհիկ դէպքը՝ որ մեր պատմութեան փառքը կազմող մի էջ է և որից այնպիսի գեղեցիկ վէպ է դուրս բերել Բաֆֆին, գծրախտարար յաջող չէ այս ողբերգութեան մէջ: Նրա առաջին շորս արարուածները լցուած են զանազան խորհրդակցութիւններով, ճառերով և միմիայն վերջին արարուածի մէջ է որ խազը կենդանանում է: Յուզիչ է տեսարանը՝ երբ Վահան՝ սոսկացնելու համար գերի բռնած ուխտապահներին՝ նրանց առաջ է բերում Գարեգին Ռշտունեաց նախարարի գիակը, որին ինքն է սպանել: Սամուէլ չի կարողանում գիմանալ իր սիրելու մահի առաջ, ծնկաչոք աղաչում է հօրը վերջին անգամ՝ վերցնել իր վրայից դաւաճանի անունը, աղատել իր և իր որդու պատիւը ազգային նախատինքից, և երբ նրա յամառութիւնը անսասան է, սուրը խրում է դաւաճան հօր կուրծքը:

Վահրամ կամ Ասպետն երկաթաքաղով հինգ գործողութեամբ ողբերգութիւն է, որի նիւթը վերցրած է ՓԴ դարու Կիլիկիան շրջանի պատմութիւնից: Հեղինակը իր այս գործը պատրաստել է 1857 թուին, խիստ արագ, այն է

հինգ օրում և յետոյ անձամբ խաւերէնի թարգմանելով՝ բեմ է բարձրացրել Պօլսում: Վահրամի նիւթը հետեւեալն է: Օշին պատերազմի մէջ յաղթուել է Արարներից և նրա Լաւոզիկէ աղջիկը գերի է ընկել: Արարների ասպետը թագուն փախցնում է Լաւոզիկէին զէպի Օշինի վրանը և այնտեղ ազատութիւն է շնորհում նրան: Երախտագէտ Լաւոզիկէն ուզում է այդ անձանօթ բարերարին տանել իր հօր բանակը՝ պատուի ու շնորհների արժանացնելու համար, բայց նա մերժում է ամէն ինչ: Եւ այնտեղ, գիշերային մթութեան ու լուսթեան մէջ, ասպետը բաց է անում իր սիրտը, յայտնում է թէ ինքը այն Վահրամ հայ իշխանն է, Լաւոզիկէի սիրահարը, որին շար իշխանները նախանձելով արսորի գատապարտեցին ու յետոյ ծովը նետելով խեղդեցին: Մահուան լուրը տարածուեց ամէն կողմ, բայց Վահրամը չէր մեռած: Ծովի տակից լողալով՝ մի կերպ ազատուեց նա և արարների ծառայութեան մանելով ամէնքի ստրատիր գարձաւ: Սիրոյ հին յիշատակների արծարծումը, կորցրած սիրահարի յանկարծական յայտնութիւնը յուզում է կոյսին և նա նուազած ընկնում է վրայ է հասնում հայ պահնորդների ջոկատը, ասպետը փախչում է:— Հայոց ու արարների մէջտեղ հաշտութիւն խօսուելուց յետոյ՝ Վահրամը լսում է թէ Օշին ուզում է Լաւոզիկէին ամուսնացնել Հայոց Գունդատապլի հետ. վառւում է կիրքը, արիւնը բորբոքում, նորից յարձակում, փախ-

ցնում է Լաւոդիկէին, հետք տանելու և պատկուելու համար. Օշինը իր գորգերով յարձակում է նրա ետեից և հասնում պաշարում մի քարայրում: Այդ քարայրի մէջ կատարում է հինգերորդ արարուածը, որ թատերգութեան ամէնից ուժեղ և պատկերալից մասն է: Վահրամը յանուն իրենց սիրոյն խնդրում է Լաւոդիկէից փախչել հետք, իսկ Լաւոդիկէն յանուն պատուի, հայրական անէծքի երկիւղի տակ և ապագայի դատապարտութեան սարսափով՝ ազերւում է թողնել իրեն և փախչել մենակ, հետանալ մահուան վտանգից: Օշին հասնում է. կապտում են Վահրամին և նա վերջին յուսահատութեան մէջ դաշոյնը խրում է նախ Լաւոդիկէի և ապա իր կուրծքէ՝

Հէքիմեանի երկրորդ գործը՝ *Յուլիանէ, Գոմալա, Պօղոս և Վիրգինիա* պարունակում է երեք թատերախաղ. առաջինը՝ *Յուլիանէ*, նախորդների նման գրաբար ոտանաւոր ողբերգութիւն է, գրուած 1850-ին. իսկ միւս երկուսը թարգմանութիւն են, *Գոմալա՝* կիսապրաբար լեզուով ոտանաւոր, իսկ *Պօղոս և Վիրգինիա՝* մաքուր և սանուն աշխարհաբար:

Սոցանից գուրս Հէքիմեանը ունի նաև եօթը ուրիշ թատերգութիւններ, բոլորն էլ պատմական, գրուած 1857 թուից առաջ. սոքա են՝ *Արզամ, Սմբատ սպարապետ Արտաշէսի, Մահ Գնէլայ, Ողորմապատաս և Փառանձեմ. Արշակ յԱնդմուշն, Մեծն Ներսէս, Աերք Անոյ, Դեռ*

1857-ին խոստացել է նա հրատարակութեան տալ այս գործերը. բայց խոստումը կատարուած չէ, ուստի մեզ մնում են անձանօթ:

Առհասարակ վերցրած Հէքիմեանի թատրերգութիւնները հոկտոբրի թատրեր են, կազմուած զուտ դասական ճաշակով, որոնց տիպարը ներկայացնում են կոռնէյլ և Ռասին: Այս խաղերը հիւսուած են երեք միութեանց աւանդական օրէնքի համաձայն, լցուած երկար երկար ճառերով, անվերջանալի խօսակցութիւններով. գործողութիւն չկայ բնմի վրայ. ամէն արարուած ունի կանխապէս որոշուած մէկ ընդհանուր նկարագիր կամ սահման, որի համեմատ էլ սկսուում ու վերջանում է. այս զծուած սահմանից դուրս գալ ներելի չէ. հեղինակը չի դնում նոցա մէջ որևէ անձնական շեշտ, ուրիշ խօսքով դառնում է դէպքի հասարակ պատմիչը: Այս թատրերը կարգալ հետաքրքիր է, բայց ներկայացնելը շատ ձանձրալի: Հէքիմեանը յայտնում է թէ ինքը հետեւել է Շէքսպիրի և Դրայզընի թատրերգութեանց և իրօք որ նոցա ազդեցութիւնը երեւում է մի քանի տեսարանների մէջ:

Ինչպէս Թաղիաղեանը արեւելեան Հայոց, նոյնպէս էլ Հէքիմեանը արեւմտեան Հայոց կեղծ դասական գրականութեան վերջին ներկայացուցիչն է: Շատ հետաքրքիր է այս կողմից Հէքիմեանի լեզուի զարգացումը, որ հայ գրականութեան լեզուական զարգացման հարազատ պատկերն է: Հէքիմեանը իր տոաջին գործերը գրել է

գրաբար, հեռակելով այն կարծիքին թէ գրականութեան լեզուն գրաբարը պիտի լինի. բայց որովհետև գրաբարը զօնէ թատրոնի մէջ չէր կարող անց կենալ, ուստի ստիպուած է եղել թարգմանել աշխարհարարի և արձակ, և այնպէս բեմ բարձրացնել. իսկ գրքերուս թոյ նա մնար գրաբար: Յետոյ՝ երբ աշխարհարարը իր պահանջները հեռոցհեռէ աւելի յառաջ է տարել, հեղինակը գրել է կիսագրաբար լեզուով (Փոմալա), վերջնապէս նա ստիպուել է հպատակուել կենսաբի հրամայող պահանջին և գրել զուտ աշխարհարար (Պօղոս և Վիրգինիա): Եթէ նրա գրական գործունէութիւնը շուտ դադարած չլինէր, մենք կ'ունենայինք անշուշտ այնուհետև աւելի մաքուր աշխարհարար գրուածներ:

Հէքլեմեանը առհասարակ ուշ մնացած գրող է. ժամանակակից և գործակից լինելով հանդերձ Ռուսինեանին, Պէշիկթաշլեանին, Օտեանին, Ծերենցին և Մամուրեանին, սոցանից շատ աւելի մշակել է գրաբարը, մինչդեռ միւսները աշխարհիկ լեզուի մշակներ են դարձել: Այս բանը պէտք է վերագրել Վենետիկացոց ազդեցութեան և հեղինակի պահպանողականութեան:

Այս տեղ վերջանում է մեր կեղծ դասական գրականութիւնը և սկսում է բուն աշխարհարար գրականութիւնը, իր երկու ճիւղերով՝ արևմտեան և արևելեան. առաջինը կենտրոնացած գլխաւորապէս Պօլսում, իսկ երկրորդը կենտրոնացած գլխաւորապէս Տփղիսում:

Աշխարհաբար գրականութիւնը տարբերում է կեղծ գասականութիւնից ոչ միայն լեզուով, այլ և նրանով որ շատ աւելի մօտենում է բուն ժողովրդին, հարստանում է գրական այնպիսի սեռերով՝ որոնք կեղծ գասականութեան ժամանակ ծնուած էլ չէին:

Աշխարհաբար գրականութեան առաջին գրողներն էլ զերծ չեն գրարարի ազդեցութիւնից. Թրիմեանի, Պէշիկթաշլեանի, Նար-Պէշի և այլն առաջին գործերը եղել են գրարար. բայց որովհետեւ նոցա մնացեալ և գլխաւոր գործերը աշխարհաբար են, ուստի մտնում են աշխարհիկ գրականութեան մէջ:

---



